

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍԻՏՈՒՏ

ԱՎԱԳՅԱՆ ՍԵԴԱ ԱՇՈՏԻ
ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԱՎԱՋԱՆԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՎՏԱՆԳՆԵՐԸ
ԵՎ ԴՐԱՆՑ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսություն

ԻԴ.01.01 «Ընդհանուր Երկրաբանություն» մասնագիտությամբ
Երկրաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
համար

Գիտական ղեկավար՝
Երկրաբանական գիտությունների դոկտոր՝ Ա.Վ. Ավագյան

Երևան 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	5
Թեմայի արդիականությունը	5
Ուսումնասիրությունների նպատակը և խնդիրները	6
Պաշտպանվող դրույթները	7
Աշխատանքի գիտական նորույթը	7
Ուսումնասիրության մեթոդները	8
Աշխատանքի գործնական նշանակությունը և կիրառությունը	9
Հրատարակված աշխատանքները և աշխատանքի փորձաքննությունը	10
Աշխատանքի կառուցվածքը և ծավալը	11
Շնորհակալություն	11
ԳԼՈՒԽ 1. ՏԱՐԱԾՐՁԱՆԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏԵԿՏՈՆԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ	13
1.1. Ընդհանուր տեղեկություններ	13
1.2. Տարածաշրջանի դինամիկ իրադրությունը	14
1.2.1. Ակտիվ տեկտոնիկայի առանձնահատկություններն ու երկրադինամիկ դաշտի օրինաչափությունները	17
1.3. Ուսումնասիրվող տարածքի ընդհանուր կառուցվածքային պատկերը	17
1.4. Երկրաշարժերի պատմական և նախապատմական ժամանակաշրջան	20
1.5. Երկրաշարժերի գործիքային ժամանակաշրջան	24
1.6. Ուսումնասիրվող տարածքի երկրաբանական կառուցվածքն ու շերտագրությունը	25
ԳԼՈՒԽ 2. ՍԵՅՍՄԱՏԵԿՏՈՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԱՎԱՋԱՆԻ ՀՅՈՒՍԻՍ-ՀՅՈՒՍԻՍԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՏՎԱԾՈՒՄ: ԼԱՆՁԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ 2D-ԵՐԿՉԱՓ ԹՎԱՅԻՆ ՄՈԴԵԼԱՎՈՐՈՒՄ	31
2.1. Տեղանքի լանջային գործընթացների մոդելավորման անհրաժեշտության համառոտ բնութագիր	31
2.2. Տեղանքի մորֆոլոգիական և երկրաբանական առանձնահատկությունները	32
2.2.1. Զկնագետի իջվածք	33

2.2.2. Ծովագյուղ-Սեմյոնովկա միջնանապարհային տեղամաս	34
2.2.3. Ծովագյուղի գերեզմանային բլուրի տեղամաս	36
2.2.4. Արեգունու հարավային զառիթափ լանջերին բլուկների՝ դեպի Սևանի ավազան շարժման վկայություններ, գրաբենային տեղամաս	40
2.2.5. Դրախտիկ գյուղի մերձակայք	45
2.3. 2D-երկչափ թվային մոդելավորման աշխատանքի մեթոդիկան	45
2.3.1. Ստատիկ մոդել	47
2.3.2. Դինամիկ մոդել	48
2.3.3. 2D-երկչափ թվային մոդելների մշակում	50
2.4. 2D-երկչափ ստատիկ և դինամիկ մոդելավորման արդյունքներ	54
ԳԼՈՒԽ 3. ՍԵՎԱՆԱ Լճի ՀԱՐԱՎԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՏԵԿՏՈՆԱԿԱՆ ԱՌԱՋԱՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԹԱՑՆԵՐԻ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ	61
3.1. Ներբրիկային ակտիվ կառուցներ	61
3.1.1. Նորատուս-Քանագեղ ակտիվ խզվածքի գոտի	61
3.1.2. Հրաբխականություն	68
3.1.3. Սեյսմիտներ և հողերի ջրիկացում	71
3.1.4. Ստորջրյա հետազոտություններ	72
3.1.5. Լճի հատակից արտանետվող գազերի գեոքիմիական հետազոտություններ	75
3.2. Գավառագետի խզվածքային գոտի	77
3.2.1. Սեյսմատեկտոնական ազդեցությունը Երանոս գյուղի սողանքային գործընթացների վրա: Տարածքի համառոտ ինժեներակրաբանական բնութագիր	78
3.2.2. Սողանքի ծագումնաբանությունը	82
ԳԼՈՒԽ 4. ՍԵՅՍՄԱՏԵԿՏՈՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԶՐԱՅԻ ԱՎԱՋԱՆՈՒՄ: ԹՎԱՅԻՆ ՄՈԴԵԼԱՎՈՐՈՒՄ	85
4.1. Տեղանքի համառոտ բնութագիրը	85
4.2. Լճային ցունամիների համառոտ նկարագիրը	86
4.3. Տարածքի կառուցվածքային պատկերը	87
4.3.1. Վանաձոր-Արտանիշ սեզմենտ	87

4.3.2. Ձկնագետ-Խոնարհասար սեզմենտ	89
4.4. Մեթոդի նկարագիրը	91
4.4.1. Սեյսմիկ սցենարներ	93
4.5. Ցունամիի թվային մոդելավորում	96
4.5.1. Հաշվարկման գործընթացը	96
4.5.2. Երկրակեղևի դեֆորմացիա և սկզբնական մակերեսային ալիքներ	97
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	105
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	112
ՀԱՎԵԼՎԱԾ 1	124
ՀԱՎԵԼՎԱԾ 2	126
ՀԱՎԵԼՎԱԾ 3	127
ՀԱՎԵԼՎԱԾ 4	129
ՀԱՎԵԼՎԱԾ 5	158

Սույն աշխատանքը նվիրվում է հայրիկիս՝

Աշուղ Ավագյանին...

ՆԱԽԱԲԱՆ

Աշխատանքը նվիրված է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևանա լճի ավազանի Երկրաբանական վտանգների և դրանց փոխկապակցվածության ուսումնասիրությանը:

Ժամանակակից մեթոդների կիրառման արդյունքում աշխատանքում բոլորովին նորովի ներկայացվում են ուսումնասիրվող տարածքի սեյսմատեկտոնական առանձնահատկությունները և դրանց փոխներգործումը տարածքի այլ Երկրաբանական գործընթացների հետ՝ տալով գումարային վտանգի պատկեր: Աշխատանքում հատկապես քննության են առնվում տարածքի ակտիվ Երիտասարդ խզվածքները, որպես գերիշխող Երկրաբանական կառույցներ և որպես վտանգառաջացման գլխավոր նախապայման:

Արժնորելով նախորդիվ իրականացված գիտական աշխատանքները, նոր ուսումնասիրությունները թույլ են տալիս առաջարկել ժամանակակից գիտական հայեցակարգերին համապատասխանող մոդելներ:

Այս համատեքստում աշխատանքի շրջանակներում կատարվել է Սևանա լճի ավազանի Երկրաբանական փոխազդող վտանգների ստատիկ և դինամիկ մորելավորումներ՝ հաշվի առնելով տեղանքի լեռնային ռելիեֆը, առկա Երիտասարդ ակտիվ, սեյսմածին մեծ ներուժով խզվածքները:

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ենելով Երկրաբանական տարբեր վտանգների հնարավոր զարգացումներից, դրանց միջև հնարավոր փոխազդեցություններից և առկա ռիսկերից, մասնավորապես, տարածքի խիտ բնակեցվածության, հանրապետական նշանակության ճանապարհների և Երկաթգծի առկայության պարագայում Սևանա լճի ավազանում

Երկրաբանական վտանգների և դրանց փոխկապակցվածության ուսումնասիրություններն ունեն արդի նշանակություն, ուր առկա են մեծ խտությամբ ակտիվ երկրաբանական կառուցներ:

Ակնհայտ է, որ երկրաբանական վտանգները կարող են հանգեցնել երկրորդային վտանգների կամ կասկադային ազդեցությունների, որոնք կարող են հանգեցնել լրացուցիչ վնասների: Օրինակ՝ երկրաշարժերը կարող են առաջացնել սողանքներ, հողերի ջրիկացում, լճային ցունամի՝ պոտենցիալ պատճառ դառնալով հետագա գումարային վնասների:

Ուստի, երկրաբանական վտանգների փոխազդեցության ճշգրիտ ըմբռնումը վճռորոշ է վտանգի արդյունավետ գնահատման, ոիսկերի կառավարման և աղետներին արձագանքելու ռազմավարությունների մշակման համար: Ուսումնասիրելով այս փոխազդեցությունները, կարող են մշակվել միջոցներ՝ մեղմելու երկրաբանական վտանգների ազդեցությունը, բարելավելու բնակավայրերի և ենթակառուցվածքների պլանավորումն ու բարձրացնելու համայնքի ճկունությունը/դիմակայունությունը նման իրադարձությունների դեպքում:

Ուսումնասիրությունների նպատակը և խնդիրները

Աշխատանքի նպատակը Սևանա լճի ավագանի երկրաբանական վտանգների և դրանց փոխկապակցվածության ուսումնասիրումն ու գումարային վտանգի բացահայտումն է:

Նշված նպատակի իրականացման համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1. Սևանա լճի ավագանի հյուսիսարևելյան հատվածում՝ սեյսմատեկտոնական ազդեցության պարագայում, զարիթափ լանջերի կայունության գնահատում,
2. Սևանա լճի հարավարևմտյան հատվածում՝ երկրաբանական տարբեր գործընթացների (տեկտոնիկա, հրաբխականություն, լանջային գործընթացներ) փոխկապակցվածության բացահայտում,
3. Սևանա լճի ջրային ավագանում հնարավոր դիմամիկ ազդեցությունների սցենարներների վերլուծություն/գնահատում:

Պաշտպանվող դրույթները

1. Սևանա լճի ավազանի հյուսիսարևելյան հատվածում սեյսմատեկտոնական ակտիվությունն ունի ներուժ՝ հարուցելու զարիթափ ժայռային զանգվածների անկայունություն և տեղաշարժ:
2. Սևանա լճի ավազանում Երանոս գյուղի սողանքային մարմինը կրել է սեյսմիկ ազդեցություն և ունի ժառանգական կապ հարակից ակտիվ խզվածքների հետ:
3. Սևանա լճի ջրային ավազանում բարձր մագնիտուդային ներուժով մակերեսային խախտումը կարող է հանգեցնել լճային ցունամիի:

Աշխատանքի գիտական նորույթը

1. Ժամանակակից, միջազգային ընդունված մոտեցումներով Սևանա լճի ավազանի հյուսիսարևելյան հատվածում կատարվել է լանջային գործընթացների ստատիկ և դինամիկ մոդելավորում: Որոշվել է Արեգունու լեռների հարավային զարիթափ լանջի կայունության գործակիցն ու ժայռային զանգվածի հավանական տեղաշարժը, մասնավորապես, $Mw = 6.5$ երկրաշարժի ազդեցության պայմաններում:
2. Բացահայտվել է Սևանա լճի ավազանի հարավարևմտյան հատվածի Երանոս գյուղի սողանքային տեղամասի ծագումնաբանությունը՝ կապված հարակից Գավառագետի ակտիվ խզվածքի հետ:
3. Առաջին անգամ կատարվել է Փամբակ-Սևան-Սյունիք ակտիվ խզվածքի (ՓՍՍԽ) ստորջրյա սեզմենտների մակերևութային խախտումների և դրանց հետևանքով հարուցված լճային ցունամիների մոդելավորում՝ Վանաձոր-Արտանիշ սեզմենտի հարավային հատվածի և Զկնագետ-Խոնարհասար սեզմենտի համար, համապատասխանաբար, $Mw = 6.9$ և $Mw = 7.5$ հիպոթետիկ սցենարների դեպքում:

Ուսումնասիրության մեթոդները

Երկրաբանական վտանգների փոխազդեցության ուսումնասիրությունը ներառում է բազմամասնագիտական և համապարփակ մոտեցում, որը սույն աշխատանքում համատեղում է դաշտային դիտարկումները, տվյալների հավաքագրումը և մոդելավորման տեխնիկան: Ստորև ներկայացված են ընդհանուր մեթոդներ, որոնք օգտագործվել են ուսումնասիրվող տարածքի երկրաբանական վտանգների փոխազդեցության ուսումնասիրությունների համար.

- դաշտային հետազոտություններ, որի ընթացքում կիրառվել են նեոտեկտոնական, մորֆոտեկտոնական, մորֆոմետրիական, շերտագրական, պալեոսեյսմաբանական (խրամուղիների և խրամուղահորերի կիրառմամբ) մոտեցումներ,
- հեռազննումներ՝ տարբեր լուծելիության և մասշտաբի տիեզերական լուսանկարների, փոքր բարձրության դրոնային հանույթների հիման վրա,
- լաբորատոր անալիզներ, որոնց համար կատարվել են ապարների ֆիզիկամեխանիկական պարամետրերի որոշման մի շարք դաշտային (կիրառվել է նաև Շմիդտի մուրճ՝ ապարների առաջականության ետդարձի ուժի որոշման համար) և լաբորատոր աշխատանքներ: Լաբորատոր անալիզները կատարվել են Շինսերտիֆիկատ ՍՊԸ-ի կողմից՝ «ГОСТ 30629-2011» (ռուս. ГОСТ-Государственный общеоюзный стандарт) կանոնների և Երևանի Պետական Համալսարանի (ԵՊՀ) երկրաբանության և աշխարհագրության ֆակուլտետի հիդրոերկրաբանության և ճարտարագիտական երկրաբանության ամբիոնի լաբորատորիայի վարիչ Հրաչյա Շահնազարյանի կողմից՝ «ГОСТ 21153.2-75» կանոնների համաձայն: Կատարվել է նաև նմուշառված ապարների շիփային անալիզ՝ Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ինստիտուտի (ՀՀ ԳԱԱ ԵԳԻ) Լիթոլոգիայի և ռեգիոնալ երկրաբանության լաբորատորիայում:
- հասակագրման OSL (Optically Stimulated Luminescence), C¹⁴ (Radiocarbon) և այլ մեթոդներ,

- թվային մոդելավորում և սիմուլացիա. հաշվարկային մոդելները կարևոր գործիք են երկրաբանական վտանգների փոխազդեցության ուսումնասիրության համար: Այս մոդելները նմանակում և վերարտադրում են վտանգների ընթացքն ու վարքը՝ թույլ տալով հետազոտողին դիտարկել տարբեր սցենարներ, կանխատեսել դրանց ազդեցությունն ու դինամիկան:

Մեր կողմից իրականացված դաշտային հետազոտությունների ընթացքում փաստագրված բազմակոմպոնենտ տվյալների հիման վրա կազմվել են տարածքի ստատիկ (գրավիտացիոն) և դինամիկ (սեյսմիկ) մոդելներ: Հանցերի կայունության որոշման, երկրաբանական վտանգների փոխազդեցության բացահայտման և լանջային գործընթացների ստատիկ և դինամիկ մոդելավորման համար Բելգիայի Լիեժի համալսարանում՝ «Էրասմուս+» երկրում փոխհամագործակցության ծրագրի շրջանակում, կիրառվել է ժամանակակից UDEC 6 (The Universal Distinct Element Code 2019) թվային մոդելավորման ծրագիրը: ՓՍՍԽ-ի բարձր մագնիտուդային ներուժով ստորջրյա սեզմենտների ակտիվության և, հետևաբար, լճային ցունամիի մոդելավորման համար ֆրանսիայի Նիցցա-Սոֆիա Անտիպոլիս համալսարանի «Գեոազուր» լաբորատորիայում կիրառվել է COMCOT (Cornell Multi-grid Coupled Tsunami Model) ցունամիի մոդելավորման փաթեթը:

- տվյալների վերլուծություն և ինտեգրում. տարբեր աղբյուրներից տվյալների համախմբումը և դրանց համապարփակ վերլուծությունը կենսական նշանակություն ունի: Աշխարհատարածական վերլուծության տեխնիկան, տվյալների ինտեգրման գործընթացները օգնում են բացահայտել օրինաչափությունները, հարաբերակցություններն ու միտումները՝ նպաստելով վտանգի արդյունավետ գնահատմանն ու ոիսկերի կառավարմանը:

Աշխատանքի գործնական նշանակությունը և կիրառությունը

Սույն աշխատանքի արդյունքները կարելի է օգտագործել՝

1. << երկրաբանական վտանգների քանակական և որակական գնահատականներում,

2. աղետների ռիսկի նվազեցման բնագավառում՝ միտված աղետների ռիսկի կառավարմանը, նվազեցմանն ու կանխարգելմանը,
3. << աղետների քարտեզների կազմման կամ թարմացման աշխատանքներում,
4. աղետների վերաբերյալ հանրային իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված աշխատանքներում,
5. գոտիավորման կանոնակարգերի, շինարարական նորմերի և զարգացման սահմանափակումների որոշումներում,
6. ենթակառուցվածքների բարելավման և արտակարգ իրավիճակների արձագանքման ռազմավարությունների մշակման աշխատանքներում:

Հրատարակված աշխատանքները և աշխատանքի փորձաքննությունը

Աշխատանքում ներառված ուսումնասիրությունների արդյունքները գեկուցվել են 2019թ. սեպտեմբերի 10-13-ը Իտալիայի Հռոմ քաղաքում կայացած «34-րդ Միջազգային նստվածքաբանական գիտաժողով»-ում, 2022թ.-ի հուլիսի 1-2-ը Երևանում կայացած «Սևանա լճի էկոհամակարգի շրջակա միջավայրի պահպանությանն ու կայուն զարգացմանն ուղղված ջանքերի միավորում» միջազգային աշխատաժողովում, 2022թ. նոյեմբերի 30-ից դեկտեմբերի 1-ը << ԳԱԱ-ում կայացած «Երկրաբանությունը զարգացող աշխարհում. Հայաստանի երկրաբանության անցյալը, ներկան և ապագան» տեղական գիտապրակտիկ աշխատաժողովում, 2023թ.-ին Իտալիայի Ֆլորենցիա քաղաքում կայացած «6-րդ Համաշխարհային սոլանքային ֆորում»-ում:

Ասենախոսության շրջանակներում իրատարակվել է հինգ գիտական հոդված՝ "Geological Quarterly", "Geoheritage" և "Scientific Reports" միջազգային գիտական ամսագրերում, << ԳԱԱ «Գիտություններ Երկրի մասին» տեղեկագրում, «Հայաստանի Հանրապետության Երկրաբանական վտանգների Գեղարկի ստեղծման նախադրյալները» գրքում, «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի «Ծովային Հայաստան Ուդուրի-Էթիունի Երկրի հնագիտական ժառանգությունը»

հոդվածների ժողովածուում: Մեկ միջազգային հոդված դեռևս տպագրման ընթացքի մեջ է Journal of Asian Earth Sciences ամսագրում:

Աշխատանքի կառուցվածքը և ծավալը

Աշխատանքը կազմված է նախաբանից, 4 գլուխներից և եզրակացությունից: Ծավալը կազմում է 168 էջ, այդ թվում՝ 142 անուն գրականության ցանկ, 52 նկար և 5 հավելված:

Շնորհակալություն

Հեղինակն իր խորին երախտագիտությունն է հայտնում սույն ատենախոսության գիտական դեկավար, երկրաբանական գիտությունների դոկտոր Արա Ավագյանին, աշխատանքի ամբողջ ընթացքում ցուցաբերած հսկայական աջակցության, մշտական ուղղորդման, արժեքավոր խորհուրդների, մանրամասն քննարկումների, տեղին ու նպատակային դիտողությունների և, մասնավորապես, միջազգային հարթակներում անհրաժեշտ համագործակցության որոնումների և միջազգային ստանդարտներին համապատասխան աշխատանքների իրականացման հարցում մեծ ներդրման համար:

Խորին շնորհակալություն Բելգիայի Լիեժի համալսարանի «Գեոռիսկ և Շրջակա միջավայր» լաբորատորիայի դեկավար Հանս-Բալդեր Հավենիթին՝ Սևանա լճի ավագանի լանջային գործընթացների թվային մոդելավորման ծրագրային ապահովման հարցում աջակցություն ցուցաբերելու, խորհուրդների և քննարկումների համար, Ֆրանսիայի Նիցցա-Սոֆիա Անտիպոլիս համալսարանի «Գեոազուր» լաբորատորիայի տնօրեն դոկտոր Մարկ Սոսսոնին՝ Սևանա լճի ավագանում լճային ցունամիի մոդելավորման հարցում ցուցաբերած հսկայական օժանդակության համար:

Առանձնահատուկ շնորհակալություն «Գեոազուր» լաբորատորիայի դոկտոր Մանսուր Իոնալալենին և Սիրել Կոլոնին՝ լճային ցունամիի մոդելավորման աշխատանքների կազմակերպման և իրականացման գործում ցուցաբերած ջանքերի,

աջակցության, ամենօրյա մանրամասն քննարկումների, անգնահատելի ռևսանելի փորձի, գիտելիքների փոխանցման և հոգատար վերաբերմունքի համար:

Հատուկ շնորհակալություն Ֆրանսիայի Մոնպելե 2 համալսարանի պրոֆեսոր Ժան-Ֆրանսուա Ռիցին՝ մասնագիտական արժեքավոր խորհուրդների, դաշտային հարուստ փորձի հաղորդման, հասակագրումների համար:

Խորին շնորհակալություն << ԳԱԱ ԵԳԻ-ի տնօրեն Խ. Մելիքսեթյանին՝ սույն աշխատանքի իրականացմանն ուղղված բոլոր խնդրանք-դիմումներին արագ ու օբյեկտիվ արձագանքելու և արժեքավոր խորհուրդների համար:

Շնորհակալություն Ռ. Զրբաշյանին, Ռ. Մելքոնյանին, Հ. Շահինյանին, Լ. Սահակյանին, Դ. Առաքելյանին, Ղ. Գալոյանին, Հ. Մելիք-Ադամյանին, Ա. Առաքելյանին, Ա. Հովհաննիսյանին, Լ. Սարգսյանին, Է. Սահակյանին, Ժ. Ստեփանյանին, Հ. Սարգսյանին, Ռ. Գաղումյանին, Լ. Ավանեսովային, Ա. Ղազարյանին, Ա. Գրիգորյանին, Գ. Գրիգորյանին, Մ. Մկրտչյանին, Ն. Պողոսյանին՝ օգնելու պատրաստակամության և կարևոր խորհուրդների համար:

Շնորհակալություն << ԳԱԱ ԵԳԻ, Բելգիայի Լիեժի համալսարանի, Նիցցա-Սոֆիա Անտիպոլիս համալսարանի այն աշխատակիցներին, ովքեր նպաստեցին տվյալ աշխատանքի իրականացմանը, մասնավորապես Ֆարհադ Հակիմովին և Անն-Սոֆի Մրեյենին՝ լանջային գործընթացների մոդելավորման գործում ցուցաբերած մեջ աջակցության, արդյունավետ ու կառուցողական քննարկումների համար:

Ուսումնասիրություններն իրականացվել են 2020թ. և 2022թ.-ի «Էրազմուս+» Հայաստան-Բելգիա երկկողմ ծրագրի, Հայաստանի Հանրապետության Կրթության, Գիտության, Մշակույթի և Սպորտի նախարարության (<<ԿԳՄՍՆ>> Բարձրագույն Կրթության և գիտության կոմիտեի 2021թ.-ի 21T-1E145 պայմանագրային (թեմատիկ) ծրագրի, Ֆրանսիայի Նիցցա-Սոֆիա Անտիպոլիս համալսարանի «Գեռազուր» լաբորատորիայի, ինչպես նաև << ԳԱԱ ԵԳԻ բազային ֆինանսավորմամբ:


ԳԼՈՒԽ 1. ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏԵԿՏՈՆԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

1.1. Ընդհանուր տեղեկություններ

<< տարածքը գտնվում է Ալպ-Հիմալայան լեռնագրական շղթայի հատվածում և լեռնագրական առումով այն համընկնում է Փոքր Կովկասի հետ՝ կազմելով Հայկական լեռնաշխարհի հյուսիս-հյուսիսարևելյան մասը: Ունենալով համեմատաբար փոքր տարածք, այն աչքի է ընկնում երկրաբանական և, մասնավորապես, տեկտոնական կառուցների բազմազանությամբ՝ պայմանավորված տեկտոնական սալերի մոզայիկայում ունեցած իր տեղադիրքով (նկ. 1) (Ավագյան, 2019):

Տարածաշրջանի տեկտոնական զարգացման պատմությունն ուսումնասիրվել է բազմաթիվ հեղինակների կողմից (Гамкрелиձե, 1949, 1977; Габриелян, 1950, 1970; Милановский, 1952, 1968; Асланян, 1958, 1981; Милановский и Хайн, 1963; Хайн и др., 1973; Габриелян и др., 1981; Асланян и др., 1982): Այս աշխատանքները հիմք են հանդիսացել ժամանակակից՝ սալերի տեկտոնիկայի վրա հիմնված մոտեցումների համար (Варданетян, 1979; Adamia et al., 1981; Назаретян, 1984; Zonenshain and Le Pichon, 1986; Philip et al., 1989, 2001; Bassoulet J-P. et al., 1993; Ricou, 1994; Trifonov et al., 1994; Karakhanian et al., 1996, 2004, 2016; Dorbath and Cisternas, 1997; Robertson et al., 2002; Աղամալյան, 2004; Avagyan et al., 2005, 2010, 2018; Агамалян и др., 2012 և այլն):

Հետագայում արդեն հնատեկտոնական վերականգման, կառուցվածքային երկրաբանական և ակտիվ տեկտոնիկային վերաբերող աշխատանքներ կատարվել են Ավագյանի, Գալոյանի և ուր.-ի կողմից (Avagyan et al., 2005, 2010, 2012; Galoyan et al., 2008): Այս ուսումնասիրություններն են հանդիսացել այն հարթակը, որի հիման վրա իրականացվել է տեկտոնաշերտագրական միավորների առանձնացում, ինչը կարևոր է հասկանալու համար տարածքի տեկտոնական զարգացման առանձնահատկությունները:




Նկար 1. Արաբական սալի հյուսիսային հատվածի ակտիվ տեկտոնիկան (ըստ Philip et al., 1989; Anagyan et al., 2005; Ավագյան, 2019): 1. հիմնական կողաշարժեր, 2. հիմնական վրաշարժեր, 3. Եվրասիայի համեմատ բրոկների հարաբերական շարժումներ, 4. $Mw > 4.8$ երկրաշարժերի ֆոկալ մեխանիզմներ (CMT Harvard), 5. գործիքային սեյսմիկուրժուն $3 < Mw < 4.9$ (USGS-NEIC): Ar. Հայաստան, D. Դագեստան, T. Թալիշ, E.A.F. Արևելա-Անատոլական խզվածք, N.A.F. Հյուսիսանատոլական խզվածք, P.S.S.F. Փամբակ-Սևան-Սյունիք խզվածք, Z.F. Զագրոսի խզվածք, N.T.F. Հյուսիս-Թավրիզի խզվածք, G.S.F. Ժելտարեչկա-Սարիդամիշի խզվածք

Արդյունքում առանձնացվել են երեք հիմնական միավորներ՝ Հարավ-Հայկական Միկրոմայրցամաք, Եվրասիական եզր և Օֆիոլիթային գոտի (նկ. 2) (Sosson et al., 2010):

1.2. Տարածաշրջանի ռինամիկ իրադրությունը

Յուրայի ժամանակաշրջանից սկսած Կովկասյան լեռների, ինչպես նաև Հայկական լեռնաշխարհի տեկտոնական Ալպյան էվոլյուցիան կապված է Նեոթետիս օվկիանոսի սուբդուկցիայի, այնուհետև՝ օբդուկցիայի և կոլլիզիայի հետ (Dercourt et al., 1986; Nikishin et al., 1998; Robertson, 2002; Golonka, 2004): Օլիգոցենից սկսած՝

Արաբական և Եվրասիական սալերի բախմամբ հարուցված սեղմման ուժերն ազդել են ընդարձակ գոտում՝ սկսած Պերի-Արաբական ճակատային վրաշարժից, մինչև Մեծ Կովկասի հյուսիսային սահմանները (Sengör & Yilmaz, 1981; Adamia et al., 1981; Dercourt et al., 1986; Ricou, 1994; Yilmaz et al., 2000; Robertson, 2002; Golonka, 2004; Faccenna et al., 2006):



Նկար 2. Փոքր Կովկասի կառուցվածքային քարտեզ (Avagyan et al., 2010; Sosson et al., 2010): Կարմիր գծով տարված է կարային գոտին, I-II-ով պատկերված է լայնական կտրվածքը

Ակտիվ խզվածքների խտությունը (նկ. 1 և 3) (Jackson & McKenzie, 1984; Rebaï et al., 1993; Philip et al., 2001; Trifonov et al., 2002; Karakhanyan et al., 2004; Avagyan et al., 2010, 2018) կապված է N-S և NNE-SSW առանցքներով Արաբական և Եվրասիական

սալերի հանդիպակած (զուգամետ/convergance) շարժման և դրա կենտրոնական հատվածում տեղադրվածության հետ (McKenzie, 1972; Sengör & Kidd, 1979; Jackson & McKenzie, 1984; Dewey et al., 1986; Taymaz et al., 1991; Philip et al., 2001; Karakhanian et al., 2004):

Վերջին 100 Ma (մյ տարի) ժամանակահատվածում տարածաշրջանը ենթարկվել է մի շարք տեկտոնական գործընթացների ազդեցության, որոնք դեֆորմացրել և ձևավորել են ժամանակակից կառուցվածքային պատկերը: Առաջինը պայմանավորին էոցեն ժամանակաշրջանում գոնդվանյան ծագման Տավրիդ-Անատոլիդ-Հարավ Հայկական Բլոկի (ՏԱՀՀԲ) կոլլիզիան է (Knipper & Kain, 1980; Sosson et al., 2010) Եվրասիական եզրի հետ, ինչը հանգեցրել է հզոր վերնետքների ակտիվացմանը և տարածքի երկրակեղևի ծալքավորմանը (Avagyan et al., 2005, 2010; Sosson et al., 2010): Այնուհետև վերին էոցեն-ստորին օլիգոցենում Արաբական և Եվրասիական (ՏԱՀՀԲ-ն հարավում) սալերի կոլլիզիան է, որը ներկայացված է համատարած հրաբխային գործունեությամբ, իսկ վերին միոցեն-չորրորդական ժամանակաշրջանում տեղի է ունեցել տարածաշրջանային հիմնական խզվածքների ձևավորումը և ակտիվ կոլլիզիոն հրաբխականությունը (Avagyan et al., 2005, 2010; Sosson et al., 2010):

Երկու բախումների զարգացումը հանգեցրել է նաև ցամաքային սուբդուկցիայի դրսևորումների (Sosson et al., 2010; Ավագյան, 2019): Այդ ժամանակ, ըստ Ավագյանի (Ավագյան, 2019), Փոքր Կովկասում՝ Ամասիա-Սևան-Հագարի կարային գոտում, ձևավորվել են թե՛ ոեակտիվացիոն խոշոր վերնետքներ, և թե՛ վրաշարժեր, հետագայում նաև կողաշարժեր (Avagyan et al., 2005; Ավագյան, 2019): Հարավ Հայկական Բլոկի (<<Բ/ՏԱՀ-SAB-South Armenian Block) հյուսիսային պայմանական եզրի վարնետքները ոեակտիվացել են որպես վերնետքներ և կողաշարժեր (նկ. 2) (Sosson et al., 2010; Avagyan et al., 2010):

Ժամանակակից Արաբա-Եվրասիական կոնվերգենտ շարժման արագությունը գնահատվում է 20-30մմ/տ՝ ըստ Դե Մետ և այլոց (DeMets et al., 1990): GPS տվյալները << տարածքի համար Եվրասիայի նկատմամբ ցույց են տալիս մոտ 10մմ/տ շարժման արագություններ (Reilinger et al., 2006), իսկ Արաբական սալի դեպի հյուսիս շարժումը Եվրասիայի համեմատ կազմում է մոտ 17 մմ/տ (Karakhanyan et al., 2013): Ցամաքային

կոլիզիային գուգահեռ տեղի է ունենում Տավրիդ-Անատոլական և Իրանական բլոկների տեկտոնական դուրս մղում (tectonic escape): Արաբական սալի ճակատում կոլիզիայի կենտրոնական տարածքը ենթարկվում է ինտենսիվ կրճատման (McKenzie, 1972; Sengör & Kidd, 1979; Jackson & McKenzie, 1984; Dewey et al., 1986; Philip et al., 2001):


1.2.1. Ակտիվ տեկտոնիկայի առանձնահատկություններն ու երկրադինամիկ դաշտի օրինաչափությունները

Մեծ Կովկասը և Հայկական լեռնաշխարհը գտնվելով ցամաքային բախման (կոլիզիայի) կենտրոնական հատվածում, առանձնանում են ակտիվ խզվածքների խտությամբ (նկ. 3) (Աслանյան, 1957, 1981; Գաբրիելյան և այլն., 1981; Philip et al., 1989, 2001; Կարահանյան, Բալասանյան, 1992; Karakhanian et al., 2004, 2016; Օգանեսյան և այլն., 2005, 2008; Avagyan et al., 2005, 2010): Խզվածքային տեկտոնիկան առանձնանում է կինեմատիկ բազմազանությամբ՝ (նկ. 3) սեղմման (օր.՝ Սպիտակի 1988թ. երկրաշարժի խզվածքը), ընդարձակման (օր.՝ Գավառագետի խզվածքը) և կողաշարժային (օր.՝ ՓՍՍ խզվածքը): «« տարածքում լարվածային ռեժիմը հիմնականում կողաշարժային (transtensional), տրանսպրեսիվ (transpressional) և վերնետքային է, իր կառուցների միաժամանակյա առկայությամբ (Philip et al., 1989; Կարահանյան, Բալասանյան, 1992; Karakhanian et al., 2004; Avagyan et al., 2005, 2010; Ritz et al., 2016; Ավագյան, 2019):

1.3. Ուսումնասիրվող տարածքի ընդհանուր կառուցվածքային պատկերը

Տարածաշրջանում, ընդհանուր առմամբ, բազմաթիվ ակտիվ կողաշարժերն ու վերնետքները կազմում են ընդարձակ կառուցվածքային աղեղներ, որոնց գագաթներն ուղղված են դեպի հյուսիս և հյուսիս-արևելք (N, NE): Աղեղները արևելքում կազմված են աջակողմյան, իսկ արևմուտքում՝ ձախակողմյան կողաշարժերից (նկ. 3) (Philip et al., 2001; Karakhanyan et al., 2002, 2004):

Հյուսիս-հայկական կառուցվածքային աղեղի ամենից խոշոր կառուցը մոտավորապես 490կմ երկարությամբ ՓՍՍԻ-ն է (Ներառյալ Գիրաթաղի սեզմենտը), որն էլ իր հերթին ուսումնասիրվող տարածքի առանցքային կառուցվածքային միավորն է:



Նկար 3. <<և հարակից տարածքների ակտիվ խզվածքների քարտեզը (փոփոխված՝ ըստ Philip et al., 2001; Karakhanian et al., 2003, 2004; Avagyan et al., 2010, 2018; Ավագյան, 2019): 1. Կողաշաժեր, 2. Վերնետքներ, Վրաշարժեր, 3. Վարնետքներ: AF. Ախուրյան խզվածք, GSF. Դեղնագետ-Սարիդամիշ խզվածք, GNTF. Գայլատու-Հյուսիս թավրիզ խզվածք, JF. Զավախիրի խզվածք, Gv.F. Գավառագետի խզվածք, Nor.K.F. Նորատուս-Քանագեղի խզվածք

Ուսումնասիրվող տարածքը՝ Սևանա լճի ավազանը, վերահսկվում է ՓՍՍ և Նորատուս-Քանագեղ (ՆՔ) ակտիվ խզվածքների սեզմենտներով, ընդ որում դրանք ոչ միայն գոտունորում են լիճը հյուսիսարևելքից և հարավարևմուտքից, այլև կտրում են լճի կենտրոնական հատվածը (Ավագյան, 2019):

Վերոհիշյալ խզվածքների ակտիվությունն ապացուցված է բազմաթիվ միջազգային փորձաքննություն անցած հրատարակումներով, համաձայն որոնց ՓՍՍ խզվածքն ունի $Mw>>7.0$ սեյսմիկ ներուժ (Philip et al., 2001; Karakhanyan et al., 2004, 2016; Avagyan et al., 2010, 2018, 2020):

Որպես աջակողմյան կողաշարժ, E-W ընդարձակմամբ ՓՍՍ խզվածքը ժառանգվել է խոշոր վրաշարժից, որը դեֆորմացրել է լեռնաշղթան <<Բ-ի և Եվրասիական սալի՝ պալեոցեն-վաղ էոցենի ցամաքային բախումից սկսած (Avagyan et al., 2010; Sosson et al. 2010; Ավագյան, 2019):

Վերոհիշյալ անվանմամբ, խզվածքը որպես ամբողջական կառուց առաջին անգամ հիշատակվել է Ավագյանի (Avagyan, 2001) կողմից, որը գտնվում է Փոքր Կովկասյան լեռներում և կազմված է հինգ խոշոր սեզմենտներից, յուրաքանչյուրը սահմանափակված վերադրման զոնաներով (overstep zones) (Avagyan, 2001; Philip et al., 2001):

Խզվածքի հյուսիսային սեզմենտները աշխարհագրորեն համընկնում են Ամասիա-Սևան-Հագարի կարային գոտուն: Հարավային սեզմենտները հյուսիսում կտրում են Սևանա լճի հատակը և ընդարձակ չորրորդական հրաբխային ապարներով ծածկված տարածքները, որոնք, ըստ Կնիպպերի, ծածկում են կարային գոտու հարավային ճյուղը (Knipper et al., 1997):

Սևանա լճի հջվածքում ՓՍՍ խզվածքը բաժանվում է ճյուղերի՝ վերահսկելով Սևանա լճի նշան ավազանը և ընդգրկելով երկու ստորջրյա սեզմենտները՝ վերնետքային բաղադրիչով՝ Վանաձոր-Արտանիշի սեզմենտն ու Ձկնագետ-Խոնարհասարի կողաշարժը (մանրամասն՝ ավելի ուշ):

Փոքր Կովկասի կողաշարժերն, ընդհանրապես, ցուցաբերում են փոփոխական ուղղաձիգ բաղադրիչ ոչ միայն տեղային, այլ նաև ավելի փոքր մասշտաբում (Sosson et al., 2010; Ավագյան, 2019): Դրա վառ օրինակը վերոնշյալ ՓՍՍ խզվածքն է, որի հարավային սեզմենտներին ընդհանուր առմամբ բնորոշ է թեք տեղաշարժը՝ (oblique slip) վարնետքային բաղադրիչով, երբեմն՝ վարնետքի գերակշռմամբ, մինչդեռ հյուսիսայիններին ավելի շատ բնորոշ է վերնետքային բաղադրիչը, երբեմն վերնետքայինի գերակշռմամբ, ինչպես օրինակ՝ Վանաձոր-Արտանիշ սեզմենտի հատվածում (Ավագյան, 2019; Ավագյան, 2023; Avagyan A. et al., in print; Avagyan et al., 2024): Սա բացատրվում է խզվածքի կողմնորոշման աստիճանական փոփոխությամբ՝ $N\ 105^{\circ}$ -ից (հյուսիսում) մինչև $N\ 155^{\circ}$ (հարավում) լարվածության դաշտի հետ հարաբերակցությամբ:

Այս համատեքստում մորֆոլոգիական առանձնահատկությունները, ինչպիսիք են սեղմման կատարները (pressure ridges), շեղված և տեղաշարժված ջրային հոսքերը (deflected derange, offset streams), եռանկյունաձև ֆասետները (triangular facets) և խզվածքի գոտում երկարաձգված դեպրեսիաները (sag pond), նույնպես վկայում են վերջին տեկտոնական ակտիվության մասին (Avagyan et al., 2010; Sosson et al., 2010):

Ըստ Կարախանյան և ուլր.-ի (Karakhanyan et al., 2016), Սևանա լճի ավազանում վերջին սեյսմիկ ակտիվությունը ներկայացված է մի քանի երկրաշարժերով, որոնք տեղի են ունեցել 1933, 1936, 1945, 1947, 1992, 1993 և 1996 թվականներին՝ 4.3-ից մինչև 5 մագնիտուդով:

Ինչը վերաբերում է Սևանա լճի հարավարևմտյան հատվածին, ապա այն եզերվում է Գավառի տեկտոնական հորսոնվ և այն ընդգրկող Գավառագետի և Նորատուս-Քանագեղի ներբլոկային ակտիվ խզվածքներով (նկ. 3) (Avagyan et al., 2010; 2020): Նորատուս-Քանագեղի տեղամասում դիտարկված հյուսիս-հարավ տարածման խզվածքի հարթություններն անկում են 82° W: Հիմնական խզվածքն ունի նորմալ կինեմատիկա և ընդհանուր անկման անկյունը դեպի արևելք է (նկ. 3) (մանրամասն՝ ավելի ուշ):


Գավառ քաղաքին մոտ, դեպի հյուսիս, Գավառագետի խզվածքը կտրուկ փոխում է իր $N 110^{\circ}$ ուղղությունը և կինեմատիկան դառնում է հիմնականում աջակողմյան կողաշարժ (Avagyan, 2001; Ավագյան և ուլր., 2017; Avagyan et al., 2020):

1.4. Երկրաշարժերի պատմական և նախապատմական ժամանակաշրջան

Պատմական ժամանակաշրջանում տեղի ունեցած երկրաշարժերի տվյալների հնարավորինս ամբողջական հավաքագրումը սեյսմիկ ոիսկի գնահատման ոլորտում դեռևս ամենբարդ խնդիրներից մեկն է: Պատմական երկրաշարժերի ուսումնասիրման մեթոդներից են արիեռուեյսմարանությունն ու պալեռուեյսմարանությունը: Արիեռուեյսմարանության ուսումնասիրման օբյեկտը պատմամշակութային կառույցներն են, մասնավորապես՝ եկեղեցիները, որոնք իրենց մեջ պարունակում են վերջին

հազարամյակների ընթացքում տեղի ունեցած բնական աղետների վերաբերյալ քանակական տվյալներ:

Մ.թ.ա. 5-րդ հազարամյակից մինչև 18-րդ դարն ընկած ժամանակահատվածում եղած պատմական հուշարձանները, մ.թ.ա. 6-րդ հազարամյակից մինչև 3-րդ հազարամյակն եղած ժայռապատկերները, մ.թ.ա. 19-6-րդ դդ. սեպագիր արձանագրությունները, 2-18-րդ դդ. անտիկ ու միջնադարյան ժամանակագրությունները բնական վտանգների և դրանց ազդեցությունների վերաբերյալ պարունակում են մեծաքանակ տվյալներ (Մկրտչյան, 2014):



Նկար 4. «Հարակից տարածքների պատմական և նախապատմական երկրաշարժերը, որոնց մագնիտուդը մեծ է 5-ից (NorAtom, 2011)

Տարածաշրջանում պատմական $Mw>6.5$ երկրաշարժերը անհավասարաչափ են բաշխված: Ինչպես օրինակ՝ համեմատաբար քիչ երկրաշարժեր են առկա Մեծ Կովկասում, մինչդեռ Արաբա-Եվրասիական կոլիզիոն գոտու դեֆորմացիաների մեծ մասը կուտակվում է Հայկական լեռնաշխարհի տարածքում (ուղղաձիգ շարժումներն անցնում են 12մմ/տ արագությունները (Լիլիենբերգ և ճր., 1969, 1970)):

Պատմական երկրաշարժերի կատալոգն ընդգրկում է ավելի քան 2000 տարի ժամանակահատված: Այդ շրջանում «Հարածքում տեղի են ունեցել բազմաթիվ ավերիչ երկրաշարժեր (նկ. 4): Միայն հինավորց մայրաքաղաքներ Դվինը և Անին մի


քանի անգամ վնասվել և ավերվել են երկրաշարժերից (Ավագյան, 2013; Մկրտչյան, 2014; Karakhanyan et al., 2016; Հարությունյան, 2021): Դվինը վերջնականապես դադարեց խոշոր կենտրոն լինել 893թ. ավերիչ երկրաշարժից հետո:

Լինում են դեպքեր, երբ տեղի ունեցած ուժեղ երկրաշարժը հիշատակված չի լինում ոչ մի պատմական աղբյուրում: Սակայն ուժեղ երկրաշարժերը ($Mw > 6$) հիմնականում երկրի մակերեսին առաջացնում են խզվածքներ (նկ. 5a, b), որոնք ժամանակի ընթացքում հողմնահարվում են, սակայն խզման հետքը մնում է երկրի մակերեսին՝ սկարպի տեսքով (նկ. 5c, d), ինչն էլ ինքնին հնարավոր է դարձնում երկրաշարժերի պարամետրերի որոշումը: Այդ գիտական ուղղությունը կոչվում է պալեոսեյսմաբանություն (*McCalpin and Nelson, 1996*): Պալեոսեյսմաբանական ուսումնասիրության հիմնական մեթոդը խրամուղիների մեթոդն է: Դրանք մաքրվում են և մանրամասն փաստագրվում: Իսկ հետագա քննարկումների արդյունքում առանձնացվում են նախասեյսմիկ, սեյսմիկ և հետսեյսմիկ մորֆոլոգիական միավորներ, որոնք ենթարկվում են թվագրման: Ուսումնասիրվող երկրաշարժի տարիքը կարելի է ստանալ 3 եղանակով (*McCalpin, 2009*)՝

1. թվագրելով անմիջապես երկրաշարժից առաջացած տեկտոնական միավորը կամ նստվածքները, որոնք մոտ կլինեն երկրաշարժի տարիքին,
2. թվագրելով այն առաջացումները, որոնք ծածկվել են երկրաշարժից առաջացած նստվածքներով, ինչը կհամապատասխանի երկրաշարժի նախատարիքին,
3. թվագրելով երկրաշարժից առաջացած տեկտոնական միավորները կամ նստվածքները ծածկող առաջացումները, իսկ ստացված արդյունքները կհամապատասխանեն երկրաշարժի հետտարիքին:

Սովորաբար 2-րդ և 3-րդ մեթոդները կիրառվում են այն ժամանակ, երբ հնարավոր չէ կիրառել 1-ին մեթոդը: Շատ հաճախ 2-րդ և 3-րդ մեթոդները կիրառվում են միաժամանակ, որի արդյունքում ստացվում է որոշակի ժամանակահատված, որն իր մեջ ներառում է ուսումնասիրվող սեյսմիկ իրադարձության հասակը (*McCalpin, 2009*):

Պալեոսեյսմաբանական ուսումնասիրությունները միանշանակ չեն սահմանափակվում միայն խրամուղիների ուսումնասիրմամբ:



Նկար 5. Սկարպի դեգրադացիայի հիմնական փուլերը (Philip et Karakhanian, 1999)

Լայնորեն հաշվի են առնվում նաև ոելիեֆի առանձնահատկությունները, ինչպես օրինակ՝ մորֆոլոգիական և մորֆոտեկտոնական միավորները, որոնց առանձնացումը և երկրաշափական պարամետրերի ճշգրիտ որոշումը շատ կարևոր է սեյսմիկ պարամետրերի դուրս բերման համար (մորֆոդեկտոնական մոդելում): Օրինակ՝ Խոնարհասար հրաբուխը ՓՍՍ խզվածքի Խոնարհասարի սեզմենտի գործունեության արդյունքում բաժանվել է 2 մասի և տեղաշարժվել մոտ 750 ± 50 մ (Avagyan, 2001; Philip et al., 2001; Davtyan, 2007): Ունենալով հրաբխի առաջացման տարիքը, որոշվել է խզվածքի այդ սեզմենտի երկարաժամկետ տեղաշարժման արագությունը: Այստեղ տեղին է նշել, որ ցանկացած սեյսմիկ պարամետրի դուրսբերումը կախված է վերջինիս ազդեցությունը կրած մորֆոլոգիական միավորների ճշգրիտ առանձնացումից և չափագրումից (Ավագյան, 2013):

Այսպիսով, պալեոսեյսմաբանական ուսումնասիրությունները մեզ թույլ են տալիս դուրս բերել անցյալում տեղի ունեցած և ինչ-ինչ պատճառներով չիշատակված ուժեղ երկրաշարժերի տարիքը, տեղադիրքը, ուժգնությունն ու կինեմատիկան, ինչպես նաև այդ երկրաշարժերից բխող սեյսմիկ ռիսկի համար կարևորագույն պարամետրերը (Aki, 1966; Tingbaijam et. al., 2017):

Պատմական երկրաշարժերի քննադատական վերլուծության արդյունքում ճշգրտվում են երկրաշարժերի էպիկենտրոնների տեղադիրքերը, ուժգնությունը (օր.՝ Ծաղկաձորի 1827թ.-ի Mw 6.5 երկրաշարժի էպիկենտրոնը, (Haroutiunian, 2023)), իսկ երբեմն ժխտվում է կոնկրետ պատմական երկրաշարժի գոյությունը (օր.՝


Գավառագետի խզվածքի երկայնքով 1226թ.-ի Mw 6.2 երկրաշարժը, (Ավագյան և ուր., 2022)):

1.5. Երկրաշարժերի գործիքային ժամանակաշրջան

ՀՀ տարածքի համար գործիքային ժամանակաշրջանը սկիզբ է առնում 1931 թվականից, երբ Երևանում տեղադրվեց առաջին սեյսմիկ կայանը: Երկրաշարժերի կատալոգը պարունակում է երկրաշարժերի մասին տվյալներ երեք ժամանակաշրջանի համար. մինչգործիքային՝ առաջին տեղեկություններից մինչև 1931թ., վաղ գործիքային՝ 1932-1961թթ. և ժամանակակից գործիքային՝ 1962 թվականից հետո, երբ վերջնականորեն ձևավորվեց Հայաստանի տարածաշրջանային և լոկալ հեռաչափական սեյսմիկ կայանների ցանցը (Դուլգարյան, 2006; Seismic Hazard Assessment, 2011):

Նայելով երկրաշարժերի և խզվածքների քարտեզին (նկ. 3, 6) ակնհայտ է դառնում այն, որ ուժեղ երկրաշարժերը կապված են ակտիվ խզվածքների հետ, որոնք ունեն բավական մեծ ներուժ:

Ըստ Նորվեգում երկրաշարժերի կատալոգի մագնիտուդահաճախականային բաշխման կորի և խորությունների տվյալների (NorAtom, 2011), ՀՀ-ում 6.0 մագնիտուդից ավելի երկրաշարժերի թիվը կտրուկ նվազում է, ինչը համընդհանուր օրինաչափություն է: 7.0 մագնիտուդից ավել երկրաշարժերը հազվադեպ են, իսկ երկրաշարժերի ճնշող մեծամասնության խորությունները չեն գերազանցում 10կմ-ը: Վերջինս համընկնում է Բալասանյան և ուրիշների (Balassanian et al., 1993) այն կարծիքին, որ տարածաշրջանում երկրակեղևի սեյսմածին միջակայքում ամենից հաճախ հանդիպող հիպոկենտրոնները գտնվում են 10-15կմ խորություններում: Ավերիչ սեյսմիկ ակտիվության ժամանակակից իրադարձությունները՝ 1976թ. Զալդրանի (Mw 7.1), 1983թ. Նորմանի (Mw 6.8), 1988թ. Սպիտակի (Mw 6.9), 1990թ. Ռուտքար-Մանջիլի (Mw 7.3), 1991թ. Ռաչայի (Mw 7.0) և 2011թ. Վանի (Mw 7.2), վկայում են ՀՀ և հարակից տարածքների բարձր սեյսմիկ վտանգի և ռիսկերի մասին (Մկրտչյան, 2014; Karakhanyan et al., 2016):




Նկար 6. 2012-2021թթ. ժամանակահատվածի երկրաշարժերի էպիկենտրոնները && և հարակից տարածքներում (&& ԳԱԱ ԵԳԻ, Գեոարխեոլոգիայի և գեոմոնիթորինգի լաբորատորիա, 2021)

1.6. Ուսումնասիրվող տարածքի երկրաբանական կառուցվածքն ու շերտագրությունը


Սևանա լճի ավազանի երկրաբանական կառուցվածքը ներկայացված է վերին յուրայի, կավճի, պալեոգենի, նեոգենի և չորրորդական հասակի նստվածքային, հրաբխածին, ինտրուզիվ, հրաբխային առաջացումներով (նկ. 7): Սույն շերտագրական սյունյակը (նկ. 8) կազմված է Հ.Պ. Գույումջյանի կողմից՝ Վ.Պ. Ռենգարտենի, Կ.Ն. Պաֆֆենհոլցի, Ա.Ա. Գաբրիելյանի, Ա.Տ. Ասլանյանի, Ա.Գ. Ղազարյանի, Ս.Բ. Աբովյանի, Լ.Ս. Մելիքյանի, Գ.Ա. Սարգսյանի, Կ.Ի. Կարապետյանի, Մ.Ա. Սաթյանի, Ս.Ա. Փալանջյանի և այլոց տվյալների հիման վրա (Կապլանյան և դր., 1997): Սևանա լճի ավազանի շերտագրական կտրվածքը սկսվում է վերին յուրա-վերին կավճից՝ ներկայացված հրաբխածին-նստվածքային հաստվածքով՝ մոտ 1000մ տեսանելի հզորությամբ և կազմված դիաբազներից, բազալտներից, անդեգիտային պորֆիրներից, ապիլիտներից, տուֆերից, տուֆակոնգլոմերատներից,

տուֆաբրեկչիաներից, կոպտաբրեկոր ավազաքարային հասպիսային ապարներից, ալկրոլիտներից, մարմարացված կրաքարերից՝ հիմնականում Արբունք գյուղում:



Նկար 7. Սևանա լճի ավազանի երկրաբանական քարտեզ (փոփոխված՝ Խարազյան, 2005-ից)

Ստորին սենոնյան տերրիգեն-կարբոնատային հաստվածքի ընդհանուր հզորությունը մոտ 1100մ է: Կտրվածքի ստորին մասում այն ներկայացված է կրաքարերով (կոնյակ-սանտոն՝ վերին մասում անցնելով տերրիգեն ֆացիայի՝ կոնգլոմերատ, մերգել, ավազային կրաքար, ալկրոլիտ, կրաքարակայծքարային թերթաքարեր): Դրանք տարածված են ողջ հյուսիսարևելյան ափով:



Նկար 8. Սևանա լճի ավազանի երկրաբանական առաջացումների շերտագրական սյունյակ (կազմված՝ ըստ Կառլանյան և դր., 1997): 1. վերին յուրա-վերին կավիճ. կոնգլոմերատային, տուֆային և ավազաքարային ենթաշերտով անդեզիտային պորֆիրիտների հրաբխածին-նստվածքային հաստվածք (ստորին հաստվածք), դիաբազներ, բազալտներ, պորֆիրիտներ, ոիֆային կրաքարեր (վերին հաստվածք), 2. վերին կավիճ, կոնյակ. անդեզիտներ, բազալտային անդեզիտներ, դիաբազներ, տուֆեր, տուփաբրեկչիաներ, տերրիգեն և կարբոնատային նստվածքներ (կոնգլոմերատներ, կարբոնատային ապարների, ոիֆային կրաքարերի, ավազաքարերի, ալկարոլիտների, ռադիոլարիտների և հասպիսի ոսպնյակներ), 3. ստորին սենոն. կոնգլոմերատներ, մերգելներ, տարբեր ավազաքարային և բիոգեն կրաքարեր, ավազաքարեր, ալկարոլիտներ, կրաքարակայծքարային թերթաքարեր (տերրիգեն-կարբոնատային հաստվածք), 4. հիմնային, ուլտրահիմնային կազմի ինտրուզիվ ապարներ, 5. կամպան. պելիտոմորֆ, մերգելային կրաքարեր, տուփագեն ավազաքարեր, բազալտային կոնգլոմերատներ (կարբոնատային հաստվածք), 6. մաաստրիխտ. օրգանոգեն և կավային կրաքարեր (կարբոնատային հաստվածք), 7. ստորին էոցեն. տերրիգեն կավեր (Լուսաղբյուրի շերտախումբ), 8. միջին էոցեն. կրաքարեր (Սևանի շերտախումբ), 9. միջին էոցեն. տերրիգեն և կարբոնատային ապարները նստած են Սևանի շերտախմբի վրա (հրաբխածին-բեկորային հաստվածք), վերին մասը տուփագեն ֆլիշ է (ավազաքարեր, կոնգլոմերատներ, տուփաալկարոլիտներ), 10. վերին էոցեն. անդեզիտներ, բազալտային անդեզիտներ, բազալտներ, տուփագեն կոնգլոմերատներ (հրաբխածին և հրաբխածին-բեկորային հաստվածք), 11. օլիգոցեն. ռիոլիտներ, ռիոլիտային դացիտներ, հիմնականում տուփագեն կոնգլոմերատներ (Դիլիջանի շերտախումբ), 12. ստորին-միջին պլիոցեն.

ավազաքարեր և կավային ապարներ՝ աղի ենթաշերտերով և գիպսի բնիկներով (աղաբերգիպսաբեր ենթաշերտ), 13. ստորին-միջին պլիոցեն. կրաքարեր, կավային ապարներ (Արծվաքարի

ենթաշերտ), 14. ստորին-միջին պլիոցեն. կրաքարեր, մերգելներ, կավային ապարներ, կոնգլոմերատներ, 15. ստորին-միջին պլիոցեն. տուֆաբրեկչիաներ, տուֆավավազաքարեր, տուֆեր, տուֆակոնգլոմերատներ, 16. ստորին-միջին պլիոցեն. ռիոլիտային դացիտներ, տուֆեր, անդեզիտներ, բազալտային անդեզիտներ (հրաբխածին-նստվածքային հաստվածք), 17. ստորին-միջին պլիոցեն. կավային ապարներ, կոնգլոմերատներ, դիատոմիտներ, դիատոմային կավեր, ռիոլիտային դացիտներ, դացիտներ, 18. վերին պլիոցեն-չորրորդական. բազալտային անդեզիտներ, անդեզիտներ, 19. չորրորդական. բազալտային անդեզիտներ, անդեզիտներ

Հարավարևելյան հատվածում ստորին սենոնյան ապարները ներկայացված են հրաբխածին և պիրոկլաստիկ առաջացումներով՝ անդեզիտներով, բազալտային անդեզիտներով, դիաբազներով, տուֆերով, տուֆաբրեկչիաներով, ինչպես նաև տերիգեն և կարբոնատային նստվածքներով՝ ներֆորմացիոն կոնգլոմերատներով, կարբոնատային ապարների ոսպնյակներով, ավազաքարերով, կրաքարերով, ալկարտներով, ռադիոլիտներով: Վերին սենոնի նստվածքները ներկայացված են 1500-1600մ հզորությամբ կարբոնատային ապարներով: Կտրվածքի ստորին մասում՝ կամպան, նստած են պելիտոմորֆ և մերգելային կրաքարեր: Դրանք տարածված են Սևանա լճի հյուսիսարևելյան ափով: Այս հատվածի ստորին մասում առկա են տուֆագեն ավազաքարեր, իսկ Կովասարի հարավարևմտյան լանջին՝ հիմնականում մերգելային կրաքարերի վրա նստած են կոնգլոմերատներ և ավազաքարեր: Վերին՝ ավելի հզոր շերտը՝ մաաստրիխտ, ներկայացված է օրգանոգեն և կավային կրաքարերով: Հենց այս ժամանակ են ներդրվել դայկերն ու շտոկները՝ քվարց-ռիոլիտացիտային, քվարցային, ոչ քվարցային դիորիտ-պորֆիրային, դացիտ-պորֆիրային, սպեսարտիտային (Կառլանյան և արք., 1997):

Սևանա լճի տարածքում ավելի լայն տարածում ունեն պալեոգենի առաջացումները: Դրանք տարածված են հյուսիսարևելյան, հյուսիսային և հյուսիսարևմտյան հատվածում, Արեգունու ողջ տարածքում և Սևանի լեռնաշղթայի զգալի հատվածում: Ներկայացված են գլխավորապես հրաբխածին-նստվածքային առաջացումներով՝ տերիգեն-կարբոնատային բնույթի: Այս ապարների գումարային հզորությունը մինչև 3000մ է: Պալեոգենի նստվածքների կտրվածքը սկսվում է ստորին և միջին էոցենից: Հիմքում նստած է ստորին էոցենի Լուսաղբյուրի տերիգեն շերտախումբը՝ մոտ 1000մ հզորությամբ: Դրանց վրա նստած են Սևանի միջին էոցենի

կրաքարերը՝ 100մ: Այնուհետև հրաբխածին-նստվածային առաջացումներն են՝ 1300մ հզորությամբ՝ Շողակաթից (Շորժա) մինչև Սոտք: Այն տուֆագեն ֆլիշ է (Շորժայի շերտախումբ):՝ Ներկայացված տուֆաավազաքարերով, հազվադեպ հանդիպող ենթաշերտերով և կրաքարային ոսպնյակներով ու անդեգիտային կազմի լավաներով (Կապլանյան և այլն., 1997):

Կտրվածքով դեպի վեր նստած են վերին Էոցենի առաջացումները՝ հրաբխածին, հրաբխածին-բեկորային հաստվածքով: Դրանք անդեգիտներ են, բազալտային անդեգիտներ, բազալտներ, տուֆագեն կոնգլոմերատներ՝ 1100մ: Տարածված են Արեգունու լեռնաշղթայի լանջերին՝ հիմնականում Շափաթաղից դեպի արևմուտք և հյուսիսարևմուտք: Հզոր բազալտային, անդեգիտային ծածկությունները և նրանց պիրոկլաստները կազմում եմ մեծ տարածքներ՝ Արեգունու ջրբաժանի և Սևանի լեռնաշղթայի արևմտյան մասում: Վերոնշյալ ավազանի պալոեգենի նստվածքների կտրվածքն ավարտվում է օլիգոցենի առաջացումներով: Այս առաջացումները ներկայացված են հրաբխածին (Դիլջանի) շերտախմբով: Դրանք ոփոլիտներ, ոփոլիտ-դացիտներ են՝ տուֆագեն կոնգլոմերատներով: Շերտախմբի հզորությունը չի գերազանցում 400մ-ը: Հասակը որոշված է միջին օլիգոցեն-ստորին միոցեն: Այս ապարներն ունեն լայն տարածում Արեգունու լեռնաշղթայում:

Սևանի ավազանում լայն տարածում ունեն նաև նեոգենի առաջացումները: Դրանք գլխավորապես տարածված են Վարդենիսի և Գեղամա լեռնաշղթաներում: Շերտագրական սյունյակի այդ հասակի ապարների ստորին հորիզոնները զբաղեցնում է աղաբեր-գիպսաբեր ենթաշերտը՝ 500մ, միջին-վերին միոցենի հասակի: Այն ծածկված է վերին միոցենի (սարմատ) կրաքարերով՝ ձևավորելով ոչ մեծ ելքեր Գավառագետի աջ ափին: Այդ կրաքարերի վրա նստած են կավային ապարներ, կոնգլոմերատներ և մերգելներ՝ նույն հասակի: Դրանց հզորությունը Արծվաքար գյուղից դեպի հարավ-արևելք կազմում է 100մ: Սարմատի նստվածքների վրա նստած են ստորին-միջին պլիոցենի առաջացումները, որոնք ներկայացված են տեղրիգեն-կարբոնատային նստվածքներով՝ 300մ և հրաբխածին-նստվածքային 500մ հաստվածքով: Դրանք տուֆաավազաքարեր, մերգելային ավազաքարեր, տուֆաքրեկչիաներ, տուֆակոնգլոմերատներ, ոփոլիտ-դացիտներ, դացիտներ, տուֆեր,

անդեզիտներ, բազալտային անդեզիտներ են: Այս հաստվածքի ապարները ծածկված են լճային նստվածքներով՝ ներկայացված կավային ավազաքարերով, կոնգլոմերատներով, դիատոմիտներով, դիատոմային կավերով, ռիոլիտ-դացիտներով, դացիտներով: Նեղութենի շրջանն ավարտվում է անդեզիտային, բազալտաանդեզիտային լավային ծածկոցներով (Կառլանյան և այլ., 1997):

Սևանա լճի արևմտյան, հարավարևմտյան և հարավային ափերին տարածված են վերին պլիոցեն-չորրորդական հասակի առաջացացումները, որոնք ներկայացված են բազմակի հրաբխային ժայթքումային հոսքերով՝ տեղադրված Գեղամա և Վարդենիսի լեռնաշղթաների ջրաժանային մասում: Լավային ծածկոցների ընդհանուր հզորությունը, ըստ հորատման տվյալների, հասնում է 150-200մ, իսկ հնահուներում՝ 300մ: Հատուկ տեղ են գրավում Մասրիկի հարթավայրի նստվածքները՝ տեղակայված լճի հարավարևելյան ափին: Հարթավայրը՝ 300կմ² մակերեսով, կազմված է չորրորդականի ավազախճային նստվածքներից: Բազմաբեկորային առաջացումների ընդհանուր հզորությունը հասնում է 260մ-ի: Որպես անալոգ ապարներ տարածված են խճաքարերը, մոտ 15-20մ հզորությամբ (Կառլանյան և այլ., 1997):

ԳԼՈՒԽ 2. ՍԵՅՍՄԱՏԵԿՏՈՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԱՎԱՋԱՆԻ ՀՅՈՒՍԻՍ-ՀՅՈՒՍԻՍՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՏՎԱԾՈՒՄ: ԼԱՆՁԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ 2D-ԵՐԿՉԱՓ ԹՎԱՅԻՆ ՄՈԴԵԼԱՎՈՐՈՒՄ

2.1. Տեղանքի լանջային գործընթացների մոդելավորման անհրաժեշտության համառոտ բնութագիր

Երկրաբանական վտանգների և դրանց փոխկապակցվածության ուսումնասիրությունները համեմատաբար փոքր տարածք ունեցող Հայաստանի Հանրապետության համար, ուր առկա են մեծ խտությամբ ակտիվ երկրաբանական կառույցներ, ունեն հիմնարար նշանակություն: Մասնավորապես, արդիական է Սևանա լճի հյուսիսարևելյան հատվածի լանջային ակտիվ գործընթացների, դրանց հնարավոր զարգացումների ուսումնասիրությունը և վտանգի գնահատումը՝ հաշվի առնելով տեղանքի երկրադինամիկ պայմանները:

Քանի որ լեռնային շրջաններում ուժեղ երկրաշարժերը խոշոր սողանքների և փլուզումների առաջացման գիշավոր պատճառներից են, ապա կարևոր է սեյսմիկ ազդեցության դերի հաշվառումը դրանց ծևավորման մեջ, ինչն էլ իր հերթին տեսական և կիրառական նշանակության խնդիր է:

Ուստի, ելնելով լանջային վտանգավոր գործընթացների հնարավոր զարգացումներից, տարբեր երկրաբանական վտանգների միջև հնարավոր փոխազդեցություններից և առկա ռիսկերից, տարածքի հանրապետական նշանակության ճանապարհի և երկաթգծի առկայության պարագայում, Սևանա լճի ավազանի հյուսիսարևելյան ամենազառիթափ հատվածում (Արեգունու լեռներ) կատարվել է լանջային գործընթացների ստատիկ և դինամիկ մոդելավորում (մանրամասն՝ ավելի ուշ):

2.2. Տեղանքի մորֆոլոգիական և երկրաբանական առանձնահատկությունները


Ինչպես նախորդիվ նշվեց, Սևանա լճի տարածքում լայն տարածում ունեն պալեոգենի առաջացումները: Դրանք տարածված են ավազանի հյուսիսարևելյան, հյուսիսային և հյուսիսարևմտյան հատվածում, Արեգունու ողջ տարածքում և Սևանի լեռնաշղթայի զգալի հատվածում (նկ. 9): Արեգունու լեռների ամենազարդար տեղամասը, որպես ամենախոցելի լանջ, ընտրվել է լանջային գործընթացների ստատիկ և դինամիկ մոդելավորման համար՝ ներկայացված, մասնավորապես, անդեգիտներով: Այս հզոր բազալտային ծածկոցները, անդեգիտները և դրանց պիրոկաստները կազմում են մեծ տարածքներ՝ Արեգունու ջրբաժանի և Սևանի լեռնաշղթայի արևմտյան մասում (Կառանյան ճր., 1997; Ավագյան, 2023):

Սևանա լճի ամբողջ հյուսիս-հյուսիսարևելյան ափագծի երկայնքով՝ մինչև Շողակաթ (Շորժա), իրականացվել են փաստագրման աշխատանքներ՝ շերտերի ու ճեղքագոյացումների չափագրման, ինչպես նաև խախտումների հայտնաբերման ուղղությամբ: Հավաքագրված նյութի հիման վրա կատարվել է մորֆոլոգիական և կառուցվածքային վերլուծություն՝ արդյունքում առանձնացնելով մորֆոտեկտոնական այնպիսի տեղամասեր, որոնք հիմք են տալիս պնդելու, որ տարածքը ենթարկվում է սեյսմատեկտոնական ժամանակակից ազդեցությունների և, որ տարածքում առկա է ստատիկ և դինամիկ մոդելավորման անհրաժեշտություն:

Դրանք են.

1. Ձկնագետի իջվածքը (նկ. 10),
2. Ծովագյուղ-Սեմյոնովկա միջնանապարհային տեղամասը (նկ. 11),
3. Ծովագյուղի գերեզմանային բլուրի տեղամասը (նկ. 12, 13),
4. Արեգունու հարավային զարդարական լանջերը, ուր լավ տեսանելի են գրաբենային տեղամասն ու եռանկյունաձև ֆասետները (նկ. 14, 15),
5. Դրախտիկ գյուղի մերձակայքը, դեռևս Կարախանյանի կողմից ենթադրվող պալեոսովոնքի թիկունքային հատվածով՝ Փոքր Սևանի հյուսիսարևելյան լճակին (նկ. 19) (Karakhanyan et al., 2016):

Այսպիսով, ստորև ներկայացված են այն վերոնշյալ տեղամասերը, որտեղ տեկտոնական առանձնահատկությունները ցույց են տալիս շարունակական տեկտոնական վերելք և կրճատում:



2.2.1. Ձկնագետի իջվածք

Ձկնագետի իջվածքում՝ ՓՍՍՒ-ի երկայնքով գեոմորֆոլոգիական և դաշտային ուսումնասիրությունները ցույց են տալիս միջգետային բլուրներից կազմված

Երկայնական լեռնաշղթա՝ մոտ 1.5կմ երկարությամբ և 0.6-1.0կմ լայնությամբ: Բլուրներն իրար ուղղահայց են և կտրտված տեղանքի տեկտոնական իրադրությանը նախորդած դրենաժային հոսքերով: Մենք դա մեկնաբանում ենք որպես ակտիվ տեկտոնական վերելք, որը դարձել է երեք հովիտների լըվածության պատճառ (նկ. 10) (Avagyan A. et al., in print): Ընթացիկ N-S տեկտոնական կրճատման մասին այս ակնառու ապացույցը ենթադրում է մոտակա խզվածքների կինեմատիկայի ուժեղ վերնետքային բաղադրիչ: Այս պնդումը համահունչ է դեռևս Սեմյոնովկայի խրամուղում նախորդիվ հայտնաբերված մակերևությային խախտման կինեմատիկայի հետ (Philip et al., 2001; Avagyan, 2001):




Նկար 10. Ձևագետի իջվածքի Google Earth եռաչափ արբանյակային պատկերը՝ բարձրացած երկայնական բլրաշարով, ձևավորված տեկտոնական իրադրությանը նախորդած դրենաժային հոսքերով և լըված (մահվան) հովիտներով (տեղադրությունը տե՛ս նկ. 9ա-ում): *Ուղղահայց արժեքը չափազանցված է* (Avagyan A. et al., in print)

2.2.2. Ծովագյուղ-Սեմյոնովկա միջնանապարհային տեղամաս

Նմանօրինակ մեկ այլ խզվածքային առանձնահատկություն հայտնաբերվել է Ծովագյուղից արևմուտք (մերկացում 1, նկ. 9ա), որը ներկայացված է նկար 11-ում: 1-ին մերկացման հատվածը բաղկացած է 10 հիմնական միավորից և մի քանի ենթամիավորից, որտեղ նստվածքային բոլոր շերտերը հարուստ են մանրահատիկ ավազով և կավով (նկ. 11) (Avagyan A. et al., in print): Ընդհանուր առմամբ, նստվածքներում կարբոնատների պարունակությունը ցածր է և կազմում է 4-10%: U10-

U30 միավորները, որոնք կազմված են ավագի հետ խառնված կավից, աններդաշնակ տեղադրված են ստորին մասերում:



Նկար 11. Ծովագյուղ գյուղից դեպի արևմուտք գտնվող 1-ին մերկացման ա. դաշտային լուսանկարը և բ. մերկացման մեկնաբանությունը՝ (տեղադրությունը տե՛ս նկ. 9ա-ում, (Anagyan A. et al., in print)):

1. կավավագ, 2. կոյուվի, 3. խարամ, 4. միջնաշերտ, 5. վերնետքներ՝ փոքր աջակողմյան բաղադրիչով: Շերտագրական միավորներ՝ U10. բնահող, U20. շագանակագույն կավ, U30-U60. հրաբխաբեկորային փոփոխական քանակի կոյուվի և բացից մինչև մուգ շագանակագույն ալկրիտ և ավագակավային նյութ, U70. մուգ շագանակագույն ավագակավային կավահող, U80. խարամ՝ ավագակավի և հրաբխային բրեկչիայի խառնուրդով, U81. խարամ, U90. շագանակագույն կավ՝ հրաբխային ապարների փոքր բեկորներով, U100. փոփոխաված և հողմնահարված կանաչավուն կավային ավագ: ս. մեխանիկական խզվածքավորում՝ U90-ում

U20-ը հողմնահարման արդյունքում կուտակված կավ է: U50-U100 միավորները վերադրված են U40-ի վրա՝ կազմված կավավագներից և հարուստ հրաբխային բեկորներից: U30-U60 միավորները տարբեր հրաբխային բեկորների և բացից մինչև մուգ շագանակագույն ալկրիտային և ավագային կավերի կոյուվի են: U90-ը (կավ) համապատասխանում է N 120° տարածմամբ և 68° անկմամբ խզվածքային գոտուն, որի խզվածքավորման գծերը ցույց են տալիս թեք տեղաշարժ՝ գերակշռող վերնետքային բաղադրիչով (61° W): Կտրման գոտու հարթությունները հիմնականում

անկում են դեպի հյուսիս՝ 68° անկյան տակ (Avagyan A. et al., in print): Խարամի (U81) կարևորագույն հիմնական էլեմենտներն ունեն հետևյալ պարունակությունը՝ 60.90% SiO_2 , 18.10% Al_2O_3 -ի, 1.38% Na_2O -ի և 2.67% K_2O -ի առկայությամբ (որոշված \ll ԳԱԱ ԵԳԻ Քիմիական լաբորատորիայում): Այս հարաբերակցությունը TAS (ընդհանուր ալկալի-սիլիցիումային) դիագրամում այն վերագրում է անդեզիտային դաշտին: Ըստ \ll չորրորդական հրաբուխների կատալոգի (Դյորբաշյան և արք., 2024), սա համապատասխանում է Գեղամա հրաբխային զանգվածի Մենակսար հրաբխի բաղադրությանը, որը գտնվում է Սևանա լճի արևմուտքում՝ 1-ին մերկացումից մոտավորապես 25 կմ հարավ-հարավարևմուտք (նկ. 9a) (Avagyan A. et al., in print):


Դիտարկված վերնետքային խզվածքը կինեմատիկորեն համապատասխանում է Արեգունու լեռնաշղթայի բարձրացմանը նպաստող հիմնական խզվածքի անկմանը (նկ. 9a): Խզվածքի տարիքը ենթադրվում է չորրորդական՝ ելնելով U40 կոյուվիի տարասեռ բնույթից և Մենակսար հրաբխի վաղ չորրորդական հասակից՝ ըստ U81-ի հրաբխային նյութի տվյալների (Դյորբաշյան և արք., 2024; Avagyan A. et al., in print):

2.2.3. Ծովագյուղի գերեզմանային բլուրի տեղամաս

Մեկ այլ դեֆորմացիա է հայտնաբերվել 2-րդ մերկացման հատվածում (նկ. 9a, նկ. 12): U10 միավորի բնահողը ծածկում է կավային նյութով կոյուվին և U21 ենթամիավորի մանրահատիկ ավազակավը: U20 և U21 միավորները չունեն որոշակի կայուն կառուցվածք, գուցե հավանական նախկին արհեստական իջույթի պատճառով, որը գտնվում է մերկացման հյուսիսարևմտյան մասում: Այս միավորները հարուստ են խեցեղենի կտորներով և ուկրային նյութով: Շականակագույն կավի U30 միավորի շերտայնությունը վկայում է լճային պայմաններում նրա նստվածքակուտակման մասին: Նոյն ձևակառուցվածքը մենք հայտնաբերել ենք 1-ին մերկացման դեպքում (U20, նկ. 11), որը գտնվում է 1կմ արևմուտք (Avagyan A. et al., in print):

U30 շերտի տակ U40 և 60 կոլուվիի շերտերն են, որոնք առանձնացված են U50 կոյուվիի դեղնավուն ավազային զանգվածից և ունեն նմանատիպ բաղադրություն՝

հրաբխանստվածքային ծագման բեկորների առատությամբ: Միակ տարբերությունը U40 ավազային շերտի տեղ-տեղ թույլ դեղնավուն երանգավորումն է:



Նկար. 12. a. 2-րդ մերկացման դաշտային լուսանկարը՝ խզվածքով, որը նշված է սպիտակ սլաքներով, b. Կտրման գոտու բեկորային տարրեր՝ խզվածքավորման հետքերով (Avagyan A. et al., in print); c. 2-րդ մերկացման մեկնաբանությունը. շերտագրական միավորներ՝ 1. բնահող, 2. կոյուղի՝ կավային նյութով, 3. մանրահատիկ ավազակավ, 4. շագանակագույն կավ, 5. կոյուղի՝ առատ բեկորային և մոխրադեղնավուն ավազով, 6. կոյուղի՝ դեղնավուն ավազով, 7. կոյուղի՝ առատ բեկորային և մոխրավուն ավազով, 8. խզվածք, 9. ռադիոածխածնային թվագրման նմուշներ, 10. խեցեղեն, 11. ոսկորներ

Խզման հարթությունն ունի $N\ 125^{\circ}$ և $85^{\circ}\ SW$ անկման ուղղություն: Կտրման գոտու բեկորային միավորի վրա $61^{\circ}\ SE$ խզվածքավորումը ցույց է տալիս գերիշխող վերնետքային շարժում՝ աջակողմյան հորիզոնական բաղադրիչով: Վերնետքային բաղադրիչը հաստատվում է U30-ի և U50-ի հիմքային հատվածների ծալքավորմամբ՝ անմիջապես խզվածքի հարթությանը հարող հատվածում: Այստեղ, ինչպես Սեմյոնովկայի խրամուղու դեպքում, խզվածքն ունի հարավային անկում (նկ. 12) (Avagyan A. et al., in print):

Ս50-ի ուղղահայաց տեղաշարժը 2մ է, իսկ թեք տեղաշարժը (հիմք ընդունելով դիտարկված հատվածը՝ 2.2մ, որը թեք տեղաշարժի միջին արժեքի դեպքում համապատասխանում է Mw 7.2-ի՝ Wells and Coppersmith-ի (1994) էմպիրիկ օրենքի համաձայն: Սա համահունչ է Սեմյոնովկայի խրամուղու համար նախորդիվ ստացված $Mw > 7.17$ արժեքին (Philip et al., 2001):


Հետադարձ վերլուծություն և իրադարձության հասակագրում

Հետադարձ վերլուծությունը (նկ. 13) ցոյց է տալիս մեկ իրադարձության սցենար: Մակերևութային խզումը ազդել է U40, U50 և U60 միավորների վրա: Հետևաբար, նրանք նախորդում են իրադարձությանը: Պարզ չէ, արդյոք U20-ի վրա խզումն ազդել է, թե ոչ: U20-ում հայտնաբերված խեցեղենի կտորների մի մասն անորոշ է՝ նրանց փոքր չափերի և բնորոշ զարդանախշերի բացակայության պատճառով, սակայն U21 միավորում հայտնաբերված կտորը, որը հիմնված է գույնի և պատրաստման տեխնիկայի վրա, ակնհայտորեն պատկանում է վաղ Բրոնզի դարի Կուրտ-արաքսյան մշակութային շերտին (թվագրված Ռ. Բադալյանի կողմից՝ «ԳԱԱ Հայաստանի Հնագիտության և Ազգագրության Ինստիտուտ»): Մշակույթը Հայաստանում՝ հիմնված խեցեղենի տիպաբանության, աշխարհագրական տարածվածության, շերտագրական դասավորությունների և համալիրների բացարձակ հասակի վրա, պատկանում է մ.թ.ա. 3500–2500 թվականներին (Badalyan, 2014, 2021; Avagyan A. et al., in print):

Խրամուղում հայտնաբերված նյութերի ավելի ճշգրիտ թվագրումը հնարավոր չէ խեցեղենի կտորների փոքր քանակության և անորոշության պատճառով: Միայն հետագա դաշտային հետազոտությունները մեզ թույլ կտան պարզաբանել դրանց թվագրումը և որոշել՝ գործ ունենք նյութերի պատահական կուտակման, թե նոր հնագիտական վայրի հետ: Վերջին դեպքում Ծովագյուղը հաջողությամբ կլրացներ Սևանա լճի ավազանի հյուսիսարևմտյան մասի հնագիտական քարտեզը, որը հարուստ է Կուրտ-արաքսյան մշակույթի համաժամանակյա վայրերով:

Հարկ է նշել, որ այս հիպոթետիկ տեղանքի դիրքը թույլ է տալիս վերահսկել հաղորդակցությունները ինչպես Սևանա լճի ափի երկայնքով, այնպես էլ Սեմյոնովկայով անցնող ճանապարհի երկայնքով՝ դեպի հանքաբեր գոտիներ՝

Մարգահովիտ և Ֆիոլետով՝ Կուր-արաքսյան բնակավայրերի մոտ (Avagyan A. et al., in print):



Նկար 13. Մակերեսային խախտման հակադարձ վերլուծություն 2-րդ կտրվածքի համար (տե՛ս նկ. 12c) (retrospective analysis), որը ցույց է տալիս մեկ իրադարձություն (Avagyan A. et al., in print)

Երեք C^{14} բացարձակ հասակային տվյալ ձեռք է բերվել և իրականացվել ֆրանսիայի LNC14, Gif-sur-Yvette լաբորատորիայում: Բոլորը չափորոշված են OxCal 4.4 ծրագրային փաթեթով: Մ.թ.ա. 411-228թթ. և 1056-901թթ. տվյալներ են ստացվել, համապատասխանաբար, U10 և U20 միավորների համար: U30 միավորի վերին մասի համար ստացվել է մ.թ.ա. 5474-5326թթ. հասակ: Շատ կոնսերվատիվ վերլուծության դեպքում կարող ենք ենթադրել, որ վերջին մակերեսային խախտումը տեղի է ունեցել մ.թ.ա 1056-901թթ. և մ.թ.ա 5474-5326թթ. միջև: <Ետևաբար, եթե հաշվի առնենք, որ


Ս21 միավորը նախորդել է իրադարձությանը, որն ունի Կուր-արաքսյան մ.թ.ա. 3500-2500թթ. հասակ, ապա վերջին մակերեսային խախտումը տեղի է ունեցել մ.թ.ա. 1056-901թթ. և մ.թ.ա. 3500թ. միջակայքում (Կուր-արաքսյան մշակույթի ստորին սահման) (Avagyan A. et al., in print):

Հաշվի առնելով Սեմյոնովկայի և Ֆիոլետովոյի խրամուղիների համար ձեռք բերված նախկին պալեոսեյսմաբանական տվյալները (Philip et al., 2001), նոր տվյալների հիման վրա մեկ անգամ ևս ընդգծում ենք վերջին սեյսմիկ իրադարձության սահմանները, որը ՓՍՍԽ Վանաձոր-Արտանիշ սեզմենտի երկայնքով առաջացրել է մակերեսային խախտում: Դա տեղի է ունեցել մ.թ.ա. 1056-901թթ. և 2333-2139թթ. միջակայքերում (Avagyan A. et al., in print):

2.2.4. Արեգունու հարավային զառիթափ լանջերին բլոկների՝ դեպի Սևանի ավագան շարժման վկայություններ, գրաբենային տեղամաս

Փոքր Սևանա լճի հյուսիսարևելյան հատվածում՝ Ծովագյուղից մոտ 2.6կմ դեպի հյուսիս-արևելք, ($44^{\circ}59'18.09"$, $40^{\circ}38'11.14"$) նկատվում է փոքր տեղաշարժված բլոկ՝ գրաբենային կառուցով: Ամենայն հավանականությամբ, տեկտոնական իրադրության պայմաններում այս բլոկը պոկվել ու տեղաշարժվել է դեպի լիճ: Տեղանքի օդալուսանկարում հստակ երևում է սկարպի գագաթնագիծը և տեղաշարժված «ա» բլոկը (նկ. 14) (Ավագյան, 2023): Տեղաշարժված բլոկի վրա առկա է երկրորդային կտրող խախտում (նկ. 14, կարմիր կետագծերով՝ $45-60^{\circ}$ դեպի հյուսիս-արևելք տարածմամբ: Խախտման հյուսիսարևելյան կողմում դիտվում է հրաբխաբեկորային լանջի մերկացում՝ լավ արտահայտված անջատումներով, որոնց անկման հիմնական ուղղությունը հարավարևելք է՝ $N\ 50^{\circ}\ SE\ 90^{\circ}$, այսինք՝ դեպի Սևանա լիճ, ինչն էլ համընկնում է «ա» բլոկի տեղաշարժման, հետևապես, խախտման անկման ուղղության հետ (Ավագյան, 2023): Վերոհիշյալ սկարպից լանջնիվար՝ ձորակի երկայնքով մինչև ճանապարհային հատված (նկ. 14), ակնադիտական գննման արդյունքում լանջային

ակնհայտ առանձնացումներ և դեղինտեգրված բլոկներ չեն հայտնաբերվել, ինչը խոսում է բլոկի հարաբերական կայունության և ներկա ստատիկ վիճակի մասին:




Նկար 14. Գրաբեն կառույց՝ Փոքր Սևանա լճի հյուսիսարևելյան ափերին (Ավագյան, 2023)

Ուշադրության արժանի են միայն նկ. 14-ում տեղաշարժված «ա» բլոկի հյուսիսարևելյան հատվածում փոքրիկ լոկալ խախտումները՝ պատկերված աստղանիշով: Այս դեպքում, չափագրական տվյալների համաձայն, շերտերի անջատումները նպաստավոր չեն լանջային գործընթացների համար և կրում են տեղային բնույթ (Ավագյան, 2023):

Փոքր Սևանա լճի հյուսիսարևելյան ափերին լավ տեսանելի են խզվածքի ակտիվությամբ պայմանավորված դեֆորմացիաներ, որոնց հետևանքով ձևավորվել են եռանկյունաձև ֆասետները/ճակատները (նկ. 15B, C): Մերկացումներից մեկում լավ տեսանելի է խզվածքի հարթությունը՝ արտահայտված վարնետքային, երկրորդային խախտման խզվածքավորմամբ (նկ. 15A): Իջած բլոկը սահել է դեպի Սևանա լճի հջույթը (Ավագյան, 2019):

Նույն մորֆոստրուկտուրան դիտվում է նաև Հյուսիսային Թափլանդի Լամպանգի ավազանում դիտարկված ռելիեֆի մորֆոտեկտոնական ձևերում, որոնք նոյնպես ներառում են խզվածքների սկարպեր, եռանկյուն ֆասետներ/ճակատներ, գինու գավաթի ձորեր/wineglass canyons և գծային լեռնային կատարներ (Wiwegwin et al., 2011):

Ըստ Համբլինի (Hamblin, 1976), ուղղահայաց շարժման գուգակցումը սահմանափակ դիրույթով նորմալ խզվածքների և հովիդներում գետային հոսքի էրոզիոն գործունեությամբ՝ հանգեցնում է եռանկյունաձև ֆասեպների ձևավորմանը:




Նկար 15. Արեգունու լեռների հարավային լանջերին դիտարկված A-վարնետքային խզվածքի հարթություն, B և C-եռանկյունաձև ֆասետներ (Ավագյան, 2019)

Վերջիններս գրեթե հարթ մակերեսներ են՝ լայն հիմքերով և դեպի վեր ուղղված գագաթներով, որոնք տեղակայված են հովիտների միջև (Keller and Pinter, 1996; Wiwegwin et al., 2011): Վարնետքի երկայնքով տեղաշարժերի հաջորդականությունը կստեղծի մի շարք եռանկյուն ֆասետներ (Hamblin, 1976; Fenton et al., 2003; Wiwegwin et al., 2011): Այդպիսի առանձնահատկությունները խզվածքների էպիզոդիկ շարժման արդյունք են, որի ընթացքում ձևավորվում են ֆասետները, իսկ դարավանդները՝ աստիճանային հորիզոնական հատվածները, ձևավորվում են սեյսմիկ կայունության միջանկյալ ժամանակահատվածներում (նկ. 16):

Ըստ նկ. 16-ում ներկայացված մոդելի, եռանկյունաձև ֆասետները նախ ձևավորվում են խզվածքի սկարպով և գետային հոսքի կտրվածքով՝ առաջացնելով եռանկյուն ֆասետների առաջին զարգացող շարքը: Հաջորդ ժամանակահատվածում, սեյսմիկ անդորրի ընթացքում, զարգանում է նեղ ճակատը: Այնուհետև, նորմալ խզվածքի վրա նոր տեղաշարժը հանգեցնում է նոր խզվածքի սկարպի ձևավորմանը և գետային հոսքերը զարգանում են այս նոր սկարպի վրա: Դրանից հետո զարգանում է եռանկյուն ֆասետների երկրորդ շարքը: Նմանատիպ իրադարձությունների հաջորդականությունը հանգեցնում է եռանկյուն ֆասետների մի քանի խմբերի

ձևավորմանը (նկ. 16), ինչն էլ դիտվում է Արեգունու լեռների հարավային լանջերին դիտարկված վարնետքային հարթության երկայնքով (նկ. 15):




Նկար 16. Ուղղահայաց տեկտոնական շարժման արդյունքում ձևավորված մի շարք եռանկյուն ֆասետների/ճակատների զարգացում, կարմիր կետագծերով նշված են խզվածքները (փոփոխված՝ ըստ Hamblin, 1976; Wiwegwin et al., 2011)

Եռանկյուն ֆասետների ձևավորմանը նպաստող պայմաններից կարող է լինել կողային կամ դիֆերենցիալ էրոզիան, որն ազդում է կայուն և անկայուն ապարների լիթոլիզիական սահմանի վրա: Wineglass/Գինու գավաթի ծորերի առկայությունը ցույց է տալիս սկարպի հիմքում գտնվող ֆասետի կտրուկությունը, որն էլ իր հերթին ենթադրում է, որ տարածքն այժմ ենթարկվում է նորացված կամ աճող ուղղահայաց տեղաշարժի: Իսկ բլոկի արագ իջեցումը հանգեցնում է գինու գավաթի ծորում նեղ անցքի ձևավորմանը (Wiwegwin et al., 2011): Այս համատեքստում, սուզորդական կայանի մոտ՝ որտեղ բաթիմետրիկ տվյալներն ամենախորն են, առավել մանրակրկիտ ուսումնասիրության համար առանձնացրել ենք $30\text{--}45^\circ$ զգալի լանջային թեքություն ունեցող երեք բլոկ՝ բլոկ 1, 2, 3 (նկ. 17):


Ակնադիտական գննման ընթացքում 1-ին բլոկի հիմքի աջ և ձախ մասերում՝ ճանապարհի եզրին, արձանագրել ենք խախտումներ: Բլոկի ձախ մասում առկա է աջակողմյան կողաշարժ (նկ. 17)' նորմալ բաղադրիչով, առաջնային և երկրորդային խզվածքավորումներով՝ F_1 N 50° 76° SE 20° SE, ինչը նպաստում է ուղղահայաց տեկտոնական շարժման արդյունքում ձևավորված մի շարք եռանկյուն ֆասետների զարգացմանը: Բլոկի աջ հատվածում (GPS 40.6061, 45.0663) հայտնաբերել ենք երկրորդային վերնետքային խախտում, N 120° NE $34\text{--}40^\circ$ հարթությամբ (նկ. 17): Առանձնացված 2-րդ բլոկի տեղամասում (նկ. 18) դիտվում են 1, 2, 3 ենթադրյալ պոկված բլոկներ, որտեղ տեսնում ենք տարբեր անկումներով շերտայնություն,

մասնավորապես, բլոկի աջ հատվածում, որը կտրուկ տարբերվում է 1-ին և 2-րդ բլոկների շերտայնությունից:



Նկար 17. Առանձնացված երեք բլոկները Սևանա լճի հյուսիարևելյան ափին, աստղանիշերով պատկերված են հիմնական խախտումը և երկրորդային վերնետքը (Ավագյան, 2023)


Հետևաբար, եթե նոյն լանջում ունենք տարբեր անկումներով շերտայնություն, ապա դա արդեն վկայում է տեղաշարժի մասին, հատկապես, եթե 1-ին և 2-րդ ենթաբլոկների թիկունքում նկատելի են տեղաշարժված փոսորակ հատվածներ:



Նկար 18. 2-րդ բլոկի մորֆոստրուկտուրան: 1-ը, 2-ը և 3-ը ենթադրյալ պոկված բլոկներն են, շերտայնությունը պատկերված է դեղին գծանշումներով, թիկունքի կարը ցուց է տրված կարմիր սլաքով (Ավագյան, 2023)

2.2.5. Դրախտիկ գյուղի մերձակայք

Այս տեղամասը գտնվում է դեռևս Կարախանյանի կողմից ենթադրվող պալեոսուլանքի թիկունքային մասում (Karakhanyan et al., 2016): Սողանքային գլխավոր սկարպի լայնությունը հասնում է 5կմ-ի, որը, որպես մեծածավալ իրադարձություն, հնարավոր է հարուցված լինի երկրաշարժով: Վերոհիշյալ պալեոսուլանքից մոտ 50մ ավելի հյուսիս արձանագրել ենք շերտայնության ու անջատումների բավական հետաքրքիր մի տեղամաս, որտեղ թեև շերտայնությունը նպաստավոր չէ սողանքառաջացման համար, սակայն անջատումների անկումները գրեթե ուղղահայաց են շերտերին և ուղղված են դեպի արևմուտք՝ $S_0 \text{ (2) } N 30^\circ$: Այստեղ դիտարկված խախտման գոտին գրեթե ուղղաձիգ է՝ $N 118^\circ - 88^\circ \text{ SW}$, որտեղ արձանագրել ենք նաև կոյուվիալ սեպ, ինչն էլ խոսում է խախտման մասին՝ այս դեպքում գրեթե ուղղաձիգ (Նկ. 19): Սովորաբար, կոյուվին անկյունային ապարների բեկորների և մանրահատիկ նյութի չամրացված, տարասեռ, վատ տեսակավորված խառնուրդ է, որոնք տեղակայվում են անձրևաջրերից լվացման, կամ լանջնիվար դանդաղ շարունակական անկման արդյունքում, սովորաբար հավաքվելով լանջերի հիմքում:



Նկար 19. Պալեոսուլանքի թիկունքային հատվածում հայտնաբերված խախտում (Ավագյան, 2023)

2.3. 2D-երկչափ թվային մոդելավորման աշխատանքի մեթոդիկան

Լանջերի կայունության որոշման, երկրաբանական վտանգների փոխազդեցության բացահայտման և տարասեռ նյութերի մեխանիկական վարքագիծը

ճշգրիտ բնութագրելու համար կիրառվել է ժամանակակից UDEC 6 (The Universal Distinct Element Code 2019) Դիսկրետ Տարրերի Մեթոդը (DEM-Distinct Element Method)' ինտեգրված Itasca UDEC մոդելավորման ծրագրաշարում: Այս ծրագիրը 2D-երկչափ տարրերակիչ տարրերի ծրագիր է, որը հնարավորություն է տալիս աշխարհագրական, երկրաբանական, ֆիզիկամեխանիկական տվյալների հիման վրա ստեղծել և վերլուծել տեղանքի բարդ և բազմապրոֆիլ մոդելներ: Ուսումնասիրությունը կենտրոնացել է Սևանա լճի ավազանի ամենազարդարակի լանջային տեղմասի վրա: Արեգունու լեռների հարավային հատվածում մեր կողմից առանձնացված 3-րդ բլոկի տեղամասում (նկ. 17) իրականացվել է ստատիկ (գրավիտացիոն) և դինամիկ (սեյսմիկ) մոդելավորում:

Դիսկրետ Տարրերի Մեթոդը, որն իսկզբանե մշակվել է Քանդալի կողմից (Cundall, 1971) ժայռերի մեխանիկայի վերլուծության համար, արդյունավետ կերպով մշակում է դիսկրետ տարրեր կամ բլոկներ, որոնցից յուրաքանչյուրն ունի յուրահատուկ առաձգական հատկություններ և շերտերի հատակ սահմաններ:

Մեր ուսումնասիրության մեջ UDEC ծրագրակազմը, որը միավորում է DEM-ը և վերջավոր տարրերակիչ տարրերի (FD-finite difference) մեթոդը, վճռորոշ դեր է խաղացել 2D-երկչափ թվային փորձարկումների իրականացման գործում: Այս ինտեգրումը հատկապես արդյունավետ է, քանի որ թույլ է տալիս ճշգրիտ որոշել նյութի դեֆորմացիան դիսկրետ բլոկների ներսում՝ ավելացնելով մոդելավորման ճշգրտությունը՝ համեմատած այնպիսի մեթոդների հետ, ինչպիսիք են 3D-եռաչափ ինտերպոլացիայի ալգորիթմները: Չնայած, այս մեթոդը օգտակար է տարածական տվյալների ինտերպոլացիայի համար, այն միայն մասամբ է հաշվի առնում մեխանիկական վարքագծի և երկրաբանական նյութին բնորոշ տարասեռությունների բարդ փոխազդեցությունը (Hakimov et al., 2024): Սակայն, ըստ Բաթի և Ուիլսոնի (Bathe & Wilson, 1976), Ռելեի (Rayleigh) մարման սխեմայի կիրառումը թույլ է տալիս կատարել էներգիայի ցրման մեխանիզմների ճշգրիտ հաշվարկ՝ մոդելի սահմանների երկայնքով պահպանելով ազատ դաշտի պայմանները: Այս մեթոդաբանական ընտրությունն ընդգծում է UDEC-ի բարձրակարգ վիզուալիզացիոն գործիքները և նրա նշանակությունը գրունտի սեյսմիկ շարժման կանխատեսումային վերլուծության մեջ, որոնք անփոխարինելի են բարդ երկրատեխնիկական տվյալներ ներկայացնելու և

2.3.1. Ստատիկ մոդել

Նախքան դինամիկ մոդելավորման գործընթացին անցնելը, յուրաքանչյուր մոդել պետք է հասնի նախնական ստատիկ հավասարակշռության (Wolter et al., 1959): Ստատիկ մոդելավորումը ներառում է մոդելի ընդհանուր կառուցվածքի, պարամետրերի, հեղուկի հոսքի և սահմանային պայմանների որոշումը (ստատիկ և դինամիկ մոդելների համար գրունտային ջրերի մակարդակի արժեքները այս ուսումնասիրության մեջ հաշվի չեն առնվել, բացառությամբ հաջորդիվ քննարկվող պարամետրիկ մոդելների):

Մոդելի ընդհանուր կառուցվածքը բաղկացած է եռանկյունաձև գոտիներից՝ 2D-երկչափ հարթության վրա (Itasca Consulting Group, 2006): Ներմուծվել է մոդելավորվող երկրաբանական շերտը՝ համապատասխան ֆիզիկամեխանիկական պարամետրերով (առ. 1): Շերտը հատող կառուցվածքային տարրերը՝ խզվածքներ, շերտային անջատումներ, նույնպես հաշվի են առնվել:

Ստատիկ մոդելը վերջնական տեսքի բերելու համար ֆիքսվել են սահմանային պայմանները: Տեղաշարժի սահմանները որոշվել են x և y առանցքների երկայնքով՝ դեֆորմացված բլոկների արագությունները սահմանափակելով՝ կանխելով տեղաշարժը մոդելի հիմքում և կողային հատվածներում: Բացի այդ, ստեղծվել է մակերևութային դինամիկ ազատ դաշտ՝ սեյսմիկ ալիքների տարածումը մոդելի սահմանների երկայնքով ապահովելու համար, ինչը հեշտացնում է ուղղահայաց կտրող ալիքի ազդանշանի փոխանցումը: Հաշվարկման գոտում սահմանվել է նաև վերջավոր տարրերի հանգույցների քանակը:

Այսպիսով, ստատիկ մոդելները բնութագրվում են իրենց չափերով, հատկություններով և սահմանային պայմաններով: Մոդելի կայունացման համար կիրառվել է Ռելեի (Rayleigh) մարման սխեմայի գործակիցը, որը կլանում է վիբրացիոն էներգիան: Մեխանիկական հաշվարկները շարունակվում են մինչև մոդելի ստատիկ

պայմանների ձեռք բերումը: Վերջիններս ցույց են տալիս անհավասարակշիռ և կիրառվող մեխանիկական ուժերի հարաբերակցությունը՝ համապատասխան սահմանված արժեքին հասնելու դեպքում (մեր դեպքում՝ 1×10^{-6}):

2.3.2. Դինամիկ մոդել

Մոդելի կայունացմանն ուղղված ստատիկ մոդելավորման ավարտից հետո հաջորդում է մոդելավորման դինամիկ փուլը: Այս փուլն իրականացվում է արհեստական ալիքային ազդանշան ուղարկելով մոդելի հիմքից: Մոդելի տարբեր տարրերի ծանրաբեռնվածության դինամիկ արձագանքը վերլուծվում է՝ ուսումնասիրելով ալիքների տարածման ուղիները և բլոկների առավելագույն տեղաշարժերը, մեր դեպքում մեկ՝ բազալտային անդեգիտի շերտում:

Սկզբում մոդելի տիրույթում սահմանվել են դինամիկ սահմանային պայմանները հաստատելուց հետո մոդելը ենթարկվել է դինամիկ բեռնման՝ սեյսմիկ ազդանշանի կողմից: Մենք կիրառել ենք 1976թ.-ի Ֆրիուլի Mw 6.5 երկրաշարժի ազդանշանը ($d=23$ կմ, $g=0.35$) և Ռիկերի $3.5\angle g$ ալիքաչափի ֆունկցիան (Ricker, 1953): Վերջինս սահմանվում է երկու հիմնական հաճախականությամբ՝ $1.4\angle g$ և $3.5\angle g$: Այս կոնկրետ ալիքաչափի ֆունկցիան հաճախ օգտագործվում է ինժեներային սեյսմաբանության մեջ, քանի որ այն ճշգրտորեն արտահայտում է սեյսմիկ տվյալների սպեկտրային կազմը՝ ժամանակի տիրույթում (Gholamy and Krienovich, 2014):

Ռիկերի ալիքաչափի ֆունկցիան, որը ներկայացվել է Ռիկերի կողմից (Ricker, 1953), բնութագրվում է հետևյալ հավասարմամբ՝


$$A = (1 - 2\pi^2 f^2 t^2) e^{-\pi^2 f^2 t^2} \quad (1)$$

որտեղ A -ն ամպլիտուդն է, f -ը՝ (Hz) կենտրոնական հաճախականությունը (1.4 կամ $3.5\angle g$), t -ն՝ (վրկ) դինամիկ ժամանակը: 20-րդ նկարը ցույց է տալիս Ռիկերի ալիքաչափի ձևերը (իրենց յուրահատուկ ձևի շնորհիվ հայտնի են նաև «Մեքսիկական

գլխարկ» անունով): Ալիքները տարածվում են մոդելի հիմքից՝ ամբողջությամբ անցնելով ցանցքի երկայնքով:

Դինամիկ մոդելավորումը թույլ է տալիս ընդգրկել բոլոր երկրորդական սեյսմիկ իրադարձությունները: Սա հատկապես կարևոր է երկրաբանական պայմանների և տեղանքի համակցված ազդեցությունները մոդելավորելու համար, քանի որ այդ երկրորդական ազդեցությունները կարող են առաջանալ ժամանակի ընթացքում:

Մոդելավորման արդյունքները ստանալու համար մոդելի պարագծի երկայնքով տեղադրվել են 198 սինթետիկ ընդունիչներ՝ «history points»-ներ: Այս «history points»-ները ժամանակի ընթացքում հետևում են մի շարք պարամետրերի, ինչպիսիք են տեղաշարժը, արագությունն ու արագացումը՝ x և y ուղղություններով: Դրանք մոդելավորման գործնթացում շարունակաբար գրանցում են սինթետիկ ազդանշաններն ինչպես մոդելի հիմքում, այնպես էլ՝ դրա ներսում և մակերեսին:



Նկար 20. а. 1.4Հց և բ. 3.5Հց կենտրոնական հաճախականությունների Ռիկերի ալիքաչափեր (Hakimov et al., 2024)

Մոդելի հանգուցային զոնաները դինամիկ սիմուլացիաների առանցքային կետերն են, որտեղ դրանց չափերը ազդում են հաշվարկների արագության և բարձր հաճախականության սեյսմիկ ազդանշանների փոխանցման վրա: Խոշոր հանգուցային

զոնաները արագացնում են հաշվարկները, բայց ավելի քիչ արդյունավետ են բարձր հաճախականություններ փոխանցելու համար, ի տարբերություն փոքր զոնաների:

Հանգուցային գոտու իդեալական չափը՝ (Δl)-ը, որը հավասարակշռում է ազդանշանի արագությունն ու արդյունավետությունը, պետք է լինի մուտքային կտրող ալիքի ամենաբարձր հաճախականության ալիքաչափի (λ) մոտավորապես մեկտասներորդ մասը (Kuhlemeyer & Lysmer, 1973)¹ համաձայն հավասարման.

$$\Delta l \leq \lambda / 10 \quad (2)$$

Սովորաբար, մոդելի ստորին հատվածներում սեյսմիկ էներգիայի հաշվարկները արագացնելու համար օգտագործվում են ավելի մեծ հանգուցային զոնաներ: Հանգուցների ճշգրիտ դասավորվածությունը հարակից զոնաների միջև կարևոր է արհեստական անդրադարձումներից խուսափելու համար, հատկապես տարբեր չափերի հանգուցային զոնաներ ունեցող մոդելների դեպքում (Hakimov et al., 2024):


2.3.3. 2D-երկչափ թվային մոդելների մշակում

(աշխատանքի սույն հատվածի թվային մոդելավորումներն իրականացվել են Բելգիայի Լիեժի համալսարանի «Գեոռիսկ և շրջակա միջավայր» լաբորատորիայի դոկտոր՝ Հանս-Բալդեր Հավենիթի համարեկավարությամբ)


Տեղանքի պրոֆիլի ստացման համար (3-րդ բլոկ, նկ. 17) օգտագործվել է թվային բարձրությունների մոդել՝ 27մ լրտեղափով (DEM-Digital Elevation Model): Իրականացվել են կառուցվածքային տարրերի՝ խզվածքի, սեզմենտների և շերտերի անջատումների դաշտային փաստագրման (նկ. 21) ու քարտեզագրման աշխատանքներ, որի արդյունքում ընտրվել է ՓՍՍ խզվածքի ու սեզմենտների՝ $F\ 80^\circ\ NE$, իսկ անջատումների համար 2 հիմնական ուղղություն՝ joint-1 $88^\circ\ SW$, joint-2 $42^\circ\ NE$: Դեպի Սևանա լիճ անկող անջատումների $88^\circ\ SW$ բաշխվածությունը մոդելում հաշվարկվել է կրկնակի խտությամբ՝ դաշտային իրադրությանը հնարավորինս համապատասխան:

Իրականացվել է ապարների ֆիզիկամեխանիկական պարամետրերի որոշում (մանրամասն տե՛ս «Ուսումնասիրության մեթոդները» բաժնում).

1. դաշտում՝ կիրառվել է Շմիդտի մուրճ /Schmidt Rebound Value/՝ ապարների առաձգականության ետդարձի ուժի (R) որոշման համար,
2. լաբորատոր պայմաններում՝ կատարվել է նմուշների ֆիզիկամեխանիկական անանալիք:



Նկար 21. Առանձնացված 3-րդ բլոկի հատվածում անջատումների անկման ուղղությունները Շմիդտի գնդի վրա (Ավագյան, 2023)




Նկար 22. а. Պորֆիրիտային տեքստուրայով անդեզիտային լավա, б. հիդրոթերմալ փոփոխության ենթարկված պլագիոկլազային դաշտային սպաթներ (ՀՀ ԳԱԱ ԵԳԻ, Լիթոլոգիայի և ռեգիոնալ երկրաբանության լաբորատորիա, Նկարները տրամադրվել են Լ. Սահակյանի կողմից)

Տարածքը հիմնականում բնութագրվում է պալեօգենի անդեզիտային լավային հոսքերով, տեղ-տեղ դեղնավուն երանգավորմամբ, ինչը հուշում է տվյալ ապարի հողմնահարման ու փոփոխման մասին (Ավագյան, 2023): Պորֆիրիտային տեքստուրայով անդեզիտային լավաների ֆենոկրիստալները ներկայացված են

ալագիոկազով և պիրոքսենով (նկ. 22): Պլագիոկազը գերակշիռ ֆենոկրիստալն է: Մագնետիտի բյուրեղները առաջանում են որպես առաջնային միներալներ անդեղիտներում և հանդիպում են ինչպես ֆենոկրիստալների, այնպես էլ հիմնական գանգվածների մեջ (նկ. 22a): Ապարն ունի ապակե հոլոհիալինային տեքստուրա: Առկա են մի քանի մանր բյուրեղներ (միկրոլիտներ): Ապարի վրա սերիցիտացումը տեսանելի է: Պլագիոկազային դաշտային սպաթները, ամենայն հավանականությամբ, Ենթարկվել են հիդրոթերմալ փոփոխության (Ավագյան, 2023):

Սխեմա 1. Մոդելավորման աշխատանքի սխեման (Ավագյան, 2023)



Այսպիսով, հավաքագրված դաշտային տվյալների, իրականացված լաբորատոր վերլուծությունների և ֆիզիկամեխանիկական հաշվարկների հիման վրա կատարվել է

Սևանա լճի ավազանի հյուսիսարևելյան հատվածի լանջային գործընթացների ստատիկ և դինամիկ մոդելավորում՝ մեր կողմից առանձնացված 3-րդ բլոկի հատվածում: Մոդելավորման աշխատանքի սխեման պատկերված է սխեմա 1-ում: Մոդելում օգտագործվել են երկրաբանական նյութի և անջատումների հատկությունները բնութագրող գեոտեխնիկական/ֆիզիկամեխանիկական պարամետրեր, ներառյալ նյութի չոր խտությունը (γ), միառանցք սեղմման դիմադրության (σ_{ci}), Պառասոնի գործակցի (v), Յունգի մոդուլի (E), ծավալի մոդուլի (K), կտրման կամ կոշտության մոդուլի (G), երկրաբանական ուժի ինդեքսի (GSI), անջատումների նորմալ և կտրման կոշտությունների (k_n , k_s), նյութի և անջատումների համակցվածության/կոհեզիոնի (c , $j-c$) ուժերը (աղյ. 1):

Աղյուսակ 1. Մոդելավորման մեջ օգտագործված գեոտեխնիկական տվյալներ (Ավազյան, 2023)

Rockmass parameters	Values	Rockmass-soil interface (joint) parameters	Values
¹ Density, γ (kg/m ³)	2700	⁴ Normal Stiffness, jkn (MPa/m)	1E4
¹ Uniaxial Compressive Strength, σ_{ci} (MPa)	167.75	Shear Stiffness, jks (kn/10)	1E3
² Poisson's Ratio (v)	0.32	⁵ Cohesion, c (MPa)	66.2
² Young's Modulus, E (MPa)	3.49E4	^{5j} -Cohesion, c (MPa)	0.1
² Bulk Modulus, K (MPa)	3.231E4	⁶ Friction angle, ϕ	31
² Shear Modulus, G (MPa)	1.322E4	^{6j} -Friction angle, ϕ	35
³ GSI	58	⁷ Schimdt Hammer Rebound (SHR) values	5.2
m_b	1.8594	¹ Laboratory based	
s	2.08E-3	² Based on UDEC v.6 (2019).	
a	0.5042	³ Based on Hoek and Brown (1997) and field observation.	
^{3D}	0.7	⁴ It was inferred from the empirical equations of Barton (1972), Hoek and Diederichs (2006), Empirical equation of Barton and Bandis, (1982).	
		⁵ Based on UDEC v.6 (2019).	
		⁶ Based on Barton and Choubey (1977).	
		⁷ Based on fieldobservation	

2.4. 2D-երկչափ ստատիկ և դինամիկ մոդելավորման արդյունքներ

Այսպիսով, Սևանա լճի ավագանում Արեգունու լեռների հարավային ամենազարդար լանջերի համար ստատիկ պայմաններում որոշվել է լանջի կայունության գործակիցը, մինչդեռ դինամիկ պայմաններում գնահատվել է լանջի պոտենցիալ տեղաշարժը և որոշվել արագացման արժեքները: Էլաստո-պլաստիկ պայմաններում ապարագանգվածի համար համապատասխանաբար օգտագործվել են Հուկ-Բրաունի փոփոխված (Hoek et al., 2002) և Մոր-Կոլոնի պլաստիկության չափանիշները (Coulomb, 1776; Mohr, 1914), որոնցով ստացված արդյունքները ներկայացված են Այցուսակ 1-ում (Հավելված 1-3-ում ներկայացված են այն բոլոր արտահայտություններն ու ծրագրային կոդը, որն օգտագործվել է սույն մոդելավորման աշխատանքների համար):


Առհասարակ, վերլուծական դետերմինիստական մեթոդներում մեծ նշանակություն ունի լանջի կայունության գործակցի որոշումը՝ FoS (Factor of Safety), որն արտահայտվում է որպես դիմադրող և խափանող ուժերի հարաբերակցություն (Kar and Roy, 2022): Ընդհանրապես, որպես կայուն լանջի նվազագույն գործակից ընդունված է FoS=1 արժեքը, որը որոշվում է լանջի ծանրաբեռնվածության փաստացի կրողունակության և այդ ծանրաբեռնվածության համար պահանջվող կրողունակության ուժերի հարաբերակցությամբ (3) (Kar and Roy, 2022; Ավագյան, 2023):

Համաձայն այս սահմանման, FoS=1 կայունության գործակից ունեցող կառուցքը կդիմանա միայն նախագծային բեռին և ոչ ավելին: Հետևաբար, ցանկացած լրացուցիչ ծանրաբեռնվածություն կհանգեցնի կառուցքի ծնախախտմանը (Ավագյան, 2023):

$$\text{Factor of Safety} = \frac{\text{Actual Capacity}}{\text{Demand}} \quad (3)$$


Այսպիսով, ստատիկ պայմաններում կատարել ենք Արեգունու լեռների հարավային լանջերին առանձնացված 3-րդ բլոկի կայունության գործակցի որոշում (նկ. 23, տեղադրությունը տե՛ս նկ. 17-ում), որտեղ լավ տեսանելի է նաև լանջի հնարավոր սահքի մակերեսը (Ավագյան, 2023): Կայունության գործակցի արժեքը (FoS) որոշվել է

որպես 2.33, ինչը նշանակում է, որ լանջը ստատիկ պայմաններում բավական կայուն է՝ 2.33>1: Սա բացատրվում է, մասնավորապես, տեղանքը բնութագրող բազալտաանդեզիտային կազմի լավաների ֆիզիկամեխանիկական բարձր հատկություններով:



Նկար 23. Ստատիկ մոդելավորում Արեգունու հարավային լանջերին առանձնացված 3-րդ բլոկում՝ լանջի 2.33 կայունության գործակցով, հնարավոր սահքի մակերեսով՝ նշված հոժ կարմիր գծով: AA' -ով նշված է մոդելավորված լանջի պրոֆիլ կտրվածքը (Ավագյան, 2023)

Դինամիկ վերլուծության համար օգտագործվել է 1976 թվականի Ֆրիուլի երկրաշարժի ազդանշանային գրառումը (1976թ. Ֆրիուլի, Իտալիա Mw 6.5), որի դեպքում ստացել ենք արագացման $\geq 0.8g$ արժեք՝ լանջի ամենազարդար հատվածներից մեկում (նկ. 24) և $\sim 0.6\text{m}$ առավելագույն տեղաշարժ (նկ. 25a): Նկար 24-ում պատկերված են արագացման արժեքները չորս կետերում՝ հիմքում, բլոկի խորքում, խզվածքի սեզմենտի վրա՝ բլոկի ներսում և լանջի զարիթափ հատվածներից մեկում: Սեյսմիկ ազդանշանը տարածվում է բլոկի հիմքից՝ տարածվելով ամբողջ բլոկի ծավալով:




Նկար 24. Արագացման արժեքները Արեգունու հարավային լանջերին առանձնացված 3-րդ բլոկում՝ Ֆրիուլիի Mw 6.5 ուժգնությամբ երկրաշարժի ազդանշանի կիրառման դեպքում (Ավագյան, 2023)

3.5g հաճախականության ՈՒկերի ալիքաչափի ֆունկցիայի (Ricker, 1953) կիրառման արդյունքում ստացված բլոկի տեղաշարժը և արագացման արժեքները ներկայացված են, համապատասխանաբար, նկ. 25b-ում և նկ. 26-ում: Ստացված տեղաշարժը համընկնում է Ֆրիուլիի Mw 6.5 ազդանշանի կիրառման դեպքում ստացված արդյունքին՝ մինչդեռ արագացման արժեքները բլոկի համեմատական նույն կետերում ավելի ցածր են:

Կատարել ենք նաև պարամետրիկ երեք անալիզ (նկ. 27): Ընդհնառու առմամբ, պարամետրիկ անալիզներն իրենցից ներկայացնում են սիմուլացիոն փորձարարական մոտեցումներ՝ նոր կառուցվածքային տարրերի ներմուծմամբ, հեռացմամբ, պարամետրերի բարձր կամ ցածր արժեքների կիրառմամբ:


Առաջին պարամետրիկ անալիզը կատարվել է ստատիկ պայմաններում՝ լանջի կայունության գործակիցը նույն բլոկում՝ որոշ պարամետրերի թուլացման դեպքում ստուգելու համար (նկ. 27a): Վերջինիս համար հիմք է հանդիսացել առաջին մոդելում ստացված հնարավոր սահրի մակերեսը, պատկերված հոծ կարմիր գծով (տե՛ս նկ. 23):



Նկար 25. а. Տեղաշարժի վեկտորները Ֆրիուլիի Mw 6.5 ուժգնությամբ երկրաշարժի ազդանշանի կիրառման դեպքում, կարմիր կետագծերով նշված են խզվածքն ու խզվածքի սեգմենտները, բ. տեղաշարժի վեկտորները՝ Ռիկերի 3.5Հց հաճախականության ալիքաչափի ֆունկցիայի (Ricker, 1953) կրառման դեպքում (Ավագյան, 2023)

Կիրառվել են 1-ին մոդելի նույն պարամետրիկ արժեքները (առ. 1), բացառությամբ անշատումների շիման անկյան (*jfriction angle*) և համակցվածության արժեքների (*jcohesion*): Օգտագործվել են *jfriction*=20, *jcohesion*=0.01 արժեքները նախորդ՝


μ friction=35 և μ cohesion=0.1 արժեքների փոխարեն: Նկար 27a-ում պատկերված է սույն պարամետրիկ անալիզը՝ սահքի մակերեսի 10 անգամ թույլ համակցվածության (cohesion) արժեքով, որի դեպքում, նույնպես, լանջը ցուցաբերել է կայունություն՝ 1-ից բարձր՝ 1.47 գործակցով:



Նկար 26. Արագացման արժեքները Ռիկերի 3.5Հց հաճախականության ալիքաչափի ֆունկցիայի (Ricker, 1953) կիրառման դեպքում

Պարամետրիկ հաջորդ երկու անալիզը կատարել ենք դինամիկ պայմաններում (Ֆրիուլի, Mw 6.5)՝ առանց կառուցվածքային տարրերի առկայության: Նույն բլոկը մոդելավորել ենք առանց խզվածքների ու անշատումների՝ հասկանալու համար, թե դրանց բացակայությունը դինամիկ պայմաններում ինչպես կարող է ազդել բլոկի տեղաշարժի վրա՝ մի դեպքում գրունտային ջրերի առկայության, մյուս դեպքում՝ բացակայության պայմաններում (նկ. 27b, c):

Հարկավոր է ընդգծել, որ բավական հետաքրքիր տվյալներ են գրանցվել գրունտային ջրերի առկայությամբ և բացակայությամբ պայմանավորված:



Նկար 27. Ստատիկ մոդելավորման պարամետրիկ անալիզներ (փոփոխված ըստ՝ Ավագյան, 2023):

ա. լանջի կայունության 1.47 գործակիցը՝ սահքի մակերեսի 10 անգամ թույլ համակցվածության (cohesion) արժեքի կիրառման դեպքում, բ. լանջի տեղաշարժման չափը առանց գրունտային ջրերի և կառուցվածքային տարրերի, ս. նույնը՝ գրունտային ջրերի առկայությամբ

Առաջին հայացքից կարող է տրամաբանական թվալ, որ գրունտային ջրերի առկայությունը պետք է ազդեր ապարների գեոտեխնիկական հատկությունների վրա՝ մեծացնելով բլոկի ծավալն ու թուլացնելով բլոկի հավասարակշռությունը և հանգեցնելով համեմատ ավելի մեծ տեղաշարժի, քան կիխեր դրանց բացակայության պարագայում: Սակայն պատկերը լրիվ այլ է, քանի որ գրունտային ջրերի առկայության պայմաններում տեղի է ունենում սեյսմիկ ալիքների մարում (նկ. 27c):

Այսպիսով, առաջին անգամ քննարկվել են Սևանա լճի ավագանի հյուսիսարևելյան հատվածի լանջային գործընթացների ստատիկ և դինամիկ մոդելավորման արդյունքները՝ հաշվի առնելով տեղանքի լեռնային ռելիեֆը, առկա երիտասարդ ակտիվ, սեյսմածին մեծ ներուժով խզվածքները:

Ստատիկ պայմաններում որոշվել է Արեգունու լեռների հարավային հատվածում մեր կողմից առանձնացված 3-րդ բլոկի լանջի կայունության գործակիցը՝ FoS=2.33, իսկ դինամիկ պայմաններում՝ 6.5 մագնիտուդ ուժգնությամբ երկրաշարժի ազդանշանի կիրառման դեպքում (1976թ. Ֆրիուի, Իտալիա Mw 6.5)՝ 0.6մ առավելագույն տեղաշարժն ու արագացման առավելագույն $\geq 0.8g$ արժեքը՝ լանջի ամենազարդար հատվածներից մեկում: Եվ, չնայած դեպի լիճ անկող անջատումների ավելի խիտ բաշխվածությանը (88° SW), առկա հակառակ ուղղությամբ (42° NE) անջատումները և ՓՍՍ խզվածքն իր սեզմենտներով (80° NE) կարծես հակակշոի դեր են կատարում ու հավասարակշռում ապարների զգալի տեղաշարժը դեպի լիճ:

ԳԼՈՒԽ 3. ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՀԱՐԱՎԱՐԵՎՄՑԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՏԵԿՏՈՆԱԿԱՆ ԱՌԱՋԱՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

3.1. Ներբլոկային ակտիվ կառույցներ

Սևանա լճի հարավարևմտյան հատվածը բնութագրվում է ներբլոկային ակտիվ կառույցներով, որոնց շարքում քննության արժանի են հատկապես Նորատուս-Քանագեղի և Գավառագետի ակտիվ խզվածքները։ Այս տարածքի գլխավոր առանձնահատկություններից է նեղեն-չորրորդական հրաբխականության և երիտասարդ խզվածքների առկայությունը (Պաֆֆենգոլց, 1948; Милановский, 1952, 1968; Габриелян, 1963; Karakhanian et al., 2001, 2016; Avagyan et al., 2001, 2010, 2020; Դյրբաշյան և դր., 2002; Կարախանյան և դր., 2004; Զրբաշյան, 2013), ինչով պայմանավորված է տարածքի երկրադինամիկ ակտիվությունը՝ արտահայտված նաև երկրաշարժերով։ Հայտնի են 1322թ. Mw 6.6 և 1992թ. Mw 5.4 գործիքային ժամանակահատվածի երկրաշարժերը (NorAtom, 2011; Karakhanyan et al., 2011):

Արևմուտքից՝ Գավառագետի վարնետքային բաղադրիչով և դեպի արևմուտք անկող խզվածքի հարթությամբ և արևելքից՝ Նորատուս-Քանագեղի վարնետքային և դեպի արևելք անկող խզվածքի հարթությամբ կառույցները սահմանափակում են մոտ 20-25կմ հյուսիս-հարավ ձգվածությամբ և 4-7կմ լայնությամբ Գավառի տեկտոնական հորսոտը (նկ. 28) (Милановский, 1968; Avagyan, 2001; Avagyan et al., 2020):

3.1.1. Նորատուս-Քանագեղ ակտիվ խզվածքի գոտի

Նորատուս-Քանագեղ ակտիվ խզվածքային գոտին գտնվում է Գեղամա լեռների կենտրոնական հատվածի արևելյան, մեղմաթեք $5-10^{\circ}$ լանջերին (Avagyan et al., 2020):


Խզվածքը հայտնի է Սարիկայա (Милановский, 1952, 1968) և Նորատուս (Avagyan et al., 2010; Karakhanyan et al., 2016) անուններով:

Գավառի հորստի կինեմատիկ առանձնահատկությունները ամբողջությամբ համահունչ են Գեղամա լեռների և Սևանա լճի ավազանի հարավի համար գնահատված մոտ $2.4+/-0.9 \text{մ.տ}^{-1}$ (առանցքի ազիմուտը $N 60^\circ$ է) ընդարձակմանը (Davtyan, 2007; Avagyan et al., 2020):

Նորատուս-Քանագեղ խզվածքի ակտիվությամբ է պայմանավորված մոտ 45մ հզորությամբ Նորատուսի (Սարիկայայի) հաստվածքի մերկացումը (նկ. 29): Այն հրաբխանստվածքային, նստվածքային, հրաբխային առաջացումների բարդ կոմպլեքս է, որի կուտակումը սկսվել է վերին միոցենից՝ հասնելով մինչև հոլոցեն (Милановский, 1953; Avagyan et al., 2020): Խզվածքի Նորատուսի սեզմենտի երկայնքով պահպանվել է մոտ 650մ երկարությամբ և 250մ լայնությամբ տեղաշարժված բլոկ, որը նորմալ խախտմամբ տեղաշարժված է մոտ 20մ ներքև (նկ. 29): Այդ տեղաշարժը երևում է կտրվածքի վերին մասում՝ զոյց սև խարամային շերտերի տեղաշարժմամբ (ցոյց է տրված սպիտակ և սև սլաքներով), ինչը նկատել է նաև Միլանովսկին (Милановский, 1960): Ըստ Ավագյան և ուր.-ի (Avagyan et al., 2020), իջած բլոկի շերտերի անկումները ակնհայտորեն ավելի մեծ են. ստորին բլոկում նրանք մոտ են հորիզոնականին, մինչդեռ վերին բլոկում դրանք կազմում են $11-18^\circ W$: Այս հանգամանքը ցոյց է տալիս, որ խզվածքն ունի լիստրիկ բնույթ (Ավագյան և ուր., 2017; Avagyan et al., 2020):

Նորատուս-Քանագեղի խզվածքի ուղղաձիգ բաղադրիչը գնահատվել է ըստ հորատանցքի տվյալների, հորատված սկարպից 500մ արևելք: 100մ տեղաշարժ արձանագրվել է ըստ միևնույն ֆորմացիայի տեղաշարժի (Милановский, 1952): Այս խզվածքը ակտիվ է եղել պեյստոցենի և, նոյնիսկ, հոլոցենի ժամանակ (Милановский, 1952):


Հայ-ուսական (Ռուսաստանի Գիտությունների Ակադեմիայի Երկրաբանական Գիտությունների հնատիտուտ) համատեղ աշխատանքների արդյունքում, հնամագնիսական հետազոտություններով Նորատուսի 80մ հզորությամբ մերկացման ստորին 42 մետրանոց հատվածի համար ստացվել է $3.1-2.3 \text{ Ma}$ հասակ:



Նկար 28. Եղիսաբեկ Ավագյան և Սևանա լճի հորիզոնականների քարտեզ (Ավագյան և ուր., 2017), Ընդունակ տիեզերական նկար, Ն.հ.-Նորատուս հրաբուխ, Կ.հ.-Կարապ հրաբուխ, Ալաքները ցույց են տալիս խզվածքների սկարպերը, 1. գագերի արտահոսման կետեր, 2. բնակավայրեր, 3. դիտակետեր

Այստեղ՝ չորրորդական լճային, այյուվյալ, լճագետային, հրաբխանստվածքային ապարներից զատ, մերկանում են նաև նեղեն-չորրորդական նստվածքներ և հրաբխային գոյացություններ (բազալտային անդեզիտներ, բազալտներ և նրանց պիրոկլաստիկ նյութը) (Խարազյան, 2005): Խզվածքի վերին, կամ հետգելասյան ակտիվությունն ապացուցվել է հաստվածքի երկու խարամային վերին շերտերի

իզոտոպային 2.30 ± 0.15 Ma K/Ar (կատարվել է Վ.Ա. Լեբեդյանի կողմից) հասակով (Avagyan et al., 2020):




Նկար 29. Նորատուս-Քանագեղ խզվածքի Նորատուսի սեզմենտի հատվածը (Avagyan et al., 2020):
1. վարնետքի ստորին բլոկը, 2. վարնետքի վերին բլոկը: Սլաքներով ցոյց են տրված տեղաշարժված խարամային զոյգ հորիզոնները (ևս սլաքներով ստորին բլոկի վրա): Օբյեկտի տեղադիրքը ցոյց է տրված նկար 28-ում

Հիմնվելով գոյություն ունեցող երկրաբանական և կառուցվածքային հրատարակված նյութերի (Милановский, 1952, 1968; Karakhanian et al., 2001, 2016; Avagyan et al., 2001, 2010; Каражанян и др., 2004 և այլն), հեռազննման (տարբեր տիեզերական և օդալուսանկարների վերլուծություն), տեղանքի եռաչափ մոդելների, տեղագրական քարտեզների, ինչպես նաև դաշտային ուսումնասիրությունների վրա ակնհայտ է, որ հյուսիս-հարավ տարածման 25 ± 3 կմ երկարությամբ Նորատուս-Քանագեղ խզվածքն ունի խիստ արտահայտված վարնետքային կինեմատիկա, սեզմենտավորված է առաջին կարգի 5-10 կմ երկարությամբ հատվածների (Ավագյան և ուր., 2017):


Նորատուս-Քանագեղ խզվածքի Նորատուսի սեզմենտի հատվածի շերտագրական ժամանակակից պատկերը ներկայացված է 30-րդ նկարում:

Միլանովսկին սակայն գտնում է, որ Սևանի ավազանի արևմտյան ափի լճային առաջացումների միասնական հաստվածք գոյություն չունի և որ այսպես կոչված Նորատուսի հաստվածքը բաժանվում է մի շարք ենթահաստվածքների՝ լճային, ալյուվիալ-պրոլիովիալ և հրաբխային (Милановский, 1952):




Նկար 30. Նորատուսի տարածքի շերտագրական սյունակ (Anagyan et al., 2020): 1. հողաշերտ ցեմենտով և խճաքարերով, 2. սև պեմզա, 3. ավագ՝ պեմզայի հատիկներով, 4. խոշոր կոնգլոմերատներ, 5. խառնուրդային իրաբիսային նյութ, ավազաքար, 6. մանրախիճ, 7. կավ, 8. ավազաքար, օօլիտներ, 9. դիատոմային կավ, 10. ավագ/ալկրիտ, 11. խճաքարային կոնգլոմերատներ, 12. սպիտակ պեմզա, 13. ոսպնյակներ, 14. սեյսմիտներ, 15. նորմալ մագնիսական բևեռականություն, 16. հակառակ մագնիսական բևեռականություն

Նորատուս-Քանագեղ խզվածքի հյուսիսային թևում՝ Սևանա լճի ժամանակակից նստվածքներում նկատվում է հոլոցենյան դեֆորմացիա (նկ. 31, տե՛ս նկ. 28. աստղանիշ 1):



Նկար 31. Սեյսմածին դեֆորմացիաները Սևանա լճի ժամանակակից նստվածքներում, աստղանիշ 1, տե՛ս նկ. 28-ում (Avagyan et al., 2020)




Նկար 32. A-Գրաբեն կառույցի տեղադիրքը արբանյակային պատկերի վրա Նորատուս գյուղից ~7կմ դեպի հարավ, հարավ-արևելք (տեղադիրքը տե՛ս նկ. 28-ում (Avagyan et al., 2020)), B-կառույցների սխեմատիկ պատկերումը, C-սեյսմածին դեֆորմացիաների ապացույցներ, որոնք պայմանավորված են պատվանդանների տարբեր թերություններով, D-նորմալ խզման հարթություններ՝ տեղաշարժված բլոկի հարավում, սլաքները ցույց են տալիս բլոկի շարժումը

Խզվածքի հարթությունը փակված է նստվածքային կուտակումներով (նկ. 31), որը, ամենայն հավանականությամբ, ձևավորվել է 1933թ.-ից ի վեր՝ լճի մակարդակի

արհեստական նվազման ժամանակ: Մերկացումը հստակ ցույց է տալիս, որ դիտարկված նորմալ խզվածքի ծագումը տեկտոնական չէ, այլ ունի սեյսմագրավիտացիոն ծագում (Avagyan et al., 2020):

Նորատուս գյուղից մոտ 7կմ դեպի հարավ-արևմուտք, պահպանվել է մեկ այլ տեղաշարժված բլոկ՝ 400մ երկարությամբ և 100մ լայնությամբ (նկ. 32A): Խզվածքի կինեմատիկան լավ դրսևորվում է տեղաշարժված բլոկի հարավային թևի խզման հարթության վրա (նկ. 32D): Կարապետյանի և այլոց երկրաբանական քարտեզների համաձայն (Կարապետյան, 2011), խզվածքը կտրում է վերին պլիոցենի լավայի հոսքը: Գրաբեն կառուցում (նկ. 32B) հնագույն բնակավայրի մնացորդները ցույց են տալիս սեյսմածին դեֆորմացիաներ: Դրանք հատկապես լավ երևում են պատվանդանների տարբեր թեքություններից (նկ. 32C):

Նորատուս-Քանագեղ խզվածքային գոտում առկա է մակերեսային խախտում, որի բնույթը հասկանալու համար անցակցվել է խզմանն ուղղաձիգ խրամուղի (նկ. 32B, 33): Խզման տարածումը խրամուղու արևմտյան մասում կազմել է հյուսիս 00° - 178° , գրեթե հյուսիս-հարավ: Խրամուղում երևացող խզման հարթության անկումը կազմում է 82° դեպի արևմուտք: Խրամուղում նկատվում է առնվազն 1.5մ տեղաշարժ:



Նկար 33. Պալեոսեյմաբանական խրամուղու պրոֆիլ կտրվածքը (տե՛ս նկ. 32B-ում), B-խրամուղու օդալուսանկարը (Avagyan et al., 2020)

Իրադարձությունը տեղի է ունեցել մ.թ.ա. 1951 ± 75 cal և 376 ± 53 cal AD (թվագրվել և չափորոշվել են Poznań Radiocarbon լաբորատորիայում): Իրականում խզվածքի գոտում ունենք իջած արևելյան բլոկ (Avagyan et al., 2020):


3.1.2. Հրաբխականություն

Նորատուս-Քանագեղ խզվածքի հյուսիսային վերջավորությունում, խզվածքի սկարպից $0.5\text{--}1.5$ կմ դեպի արևելք գտնվում են Նորատուս և Կարապ հրաբուխները (նկ. 28): Հաշվի առնելով խզվածքի վարնետքային կինեմատիկան, խզվածքի հարթության դեպի արևելք անկումը, սկարպի ռեգրեսիվ էրոզիան, ինչպես նաև սկարպի նշանակալից բարձրությունը, վստահաբար կարող ենք պնդել, որ երկու հրաբուխներն ել գտնվում են խզվածքի գոտում և գենետիկորեն կապակցված են վերջինիս հետ (Avagyan et al., 2020): Ըստ Ավագյանի (Avagyan et al., 2020), Գեղամա լեռների չորրորդական հրաբխականությունը վերահսկող կառուցների մի մասը ժառանգվել են պալեոգեն-նեոգեն ժամանակներից և այնուհետև ազդել հետագա լարվածային դաշտի և տարածքի երկրաբանական կառուցվածքի ծևավորման վրա: Այսինքն, Նորատուսի խզվածքն ավելի երիտասարդ կառուց է և համահունչ վերոհիշյալ ուշ չորրորդական (Կոչարյան, Շիրինյան, 1978) հասակի հրաբուխների հետ (Avagyan et al., 2020): Հրաբխականության և խզումնային ակտիվության տարածաժամանակային կապն ակնհայտ է: Ժամանակային կապի մասին է խոսում այն հանգամանքը, որ Գավառագետի խզվածքի հյուսիսում ծևավորված ժամանակավոր ամբարտակային, տեկտոնական ծագման լճային նստվածքներում առկա են հնարավոր երիտասարդ ժայթքման հրաբխալճային նստվածքներ՝ սինգենետիկ խզվածքահրաբխային ակտիվություն (Avagyan et al., 2010, 2020):

Ինչը վերաբերում է Նորատուս հրաբխի լանջերին և խառնարանային հատվածում հայտնաբերված $10\text{--}15$ սմ տրամագծով գլաքարերին, ապա վերջինս բավական գիտական վեճերի տեղիք է տվել: Անցյալի բազում կարծիքներ այն կապել են հրաբխագոյացման հետ (Պաֆֆենգոլց, 1946; Միլանովսկի, 1953), մինչդեռ Կարապետյանը (Կարապետյան, 1965) հերքելով նախորդներին ենթադրել է, որ երկու

հրաբուխներն էլ ձևավորվելուց հետո ծածկվել են Սևանա լճի ջրերով: Այս վարկածը պաշտպանվել է Քոչարյանի ու Շիրինյանի կողմից (Կոչարյան, Շիրինյան, 1978): Կարախանյանը գտնում էր, որ Սևանա լճում, հատկապես Մեծ Սևանում, հնարավոր են խզվածքային և սողանքային ակտիվությամբ պայմանավորված բարձր ալիքներ՝ սեյշեր (high seiche), որոնք ափամերձ գոտում կարող են կուտակել լճային նստվածքներ (Karakhanyan et al., 2016; Avagyan et al., 2020):


Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ գլաքարերը բացակայում են Կարապ հրաբխի բարձրադիր լավաների վրա, մինչդեռ այն գտնվում է Նորատուս խարամային կոնի և Սևանա լճի ափագծի միջև և ունի հիպոսմետրիկ՝ մոտ 30 մետրով ավելի ցածր դիրք: Խառնարանի լանջերի խարամային մերկացումներում որևէ գլաքար չի հայտնաբերվել, ինչի մասին վկայում է նաև Կարապետյանը (Կարապետյան, 1965): Նորատուսի խառնարանի ամբողջ տրամագծով կառուցված է պարիսպ, որի լայնությունը հասնում է 3 մետրի: Կարապետյանը գրում է խառնարանի լանջերին կառուցների մասին (Կարապետյան, 1965): Ակնհայտ է, որ խառնարանի հատակում գոյություն են ունեցել այլ կառուցներ (Avagyan et al., 2020):



Նկար 34. Նորատուս հրաբխի գագաթին հայտնաբերված պարիսպն ու գլաքարերը (Ավագյան և ուր., 2017)

Հետաքրքիր է, որ դեպի խառնարան տանող ճանապարհի երկայնքով նկատվում է գլաքարերի ավելի մեծ խտություն: Այս ամենից հետևում է, որ գլաքարերը հայտնվել են խառնարանում մարդու գործունեության արդյունքում (նկ. 34) (Ավագյան և ուր., 2017):

Հետաքրքիր շերտագրական իրավիճակ է դիտարկվել Բերդկունք գյուղից արևելք ընկած ափամերձ գոտում, որի վերին շերտերում լավային բլոկներ են՝ 0.5-0.8մ հզորությամբ, որոնց տակ տեղադրված են Սևանի լճային նստվածքները (0.8-1.0մ հզորությամբ, մանրահատիկ, վերևում մուգ մոխրագույնից մինչև սև, իսկ ներքևում՝ բաց մոխրագույն շերտավորված ավագ, որոնք ամբողջ հզորությամբ պարունակում են խխունջների մնացորդներ (Lymnaeidae, Planorbidae, Pisidiidae (Arutunova et al., 2011; Avagyan et al., 2020)) տարբեր խտությամբ: Շերտը վերին մասում պարունակում է կարբոնատային կեղև, իսկ հիմքում դարձյալ տեղ-տեղ մերկանում են լավային բլոկներ (նկ. 35) (Ավագյան և ուր., 2017):



Նկար 35. A-Բերդկունքի մերկացումը, ուր հայտնաբերվել է խոշոր եղջերավոր կաթնասունի ռսկորներն ու ամբողջական գանգը (B), նույն տեղում հայտնաբերվել է օբսիդիանից հատիչ (C), աստղանիշ 2, տե՛ս նկ. 28 (Avagyan et al., 2020)

Սևանի նստվածքների վերին սահմանից մոտ 10-15սմ ներքև հայտնաբերվել են խոշոր եղջերավոր կաթնասունի ռսկորներ, այդ թվում գանգն ամբողջությամբ (ըստ ԵԳԻ ավագ գիտաշխատող Հայկ Մելիք-Աղամյանի, գտնված Bos sp. տեսակի գանգը հավանաբար ընտանի կենդանու է պատկանում) (նկ. 35B): Ռսկորների հետ հայտնաբերվել է նաև օբսիդիանից հատիչ (նկ. 35C), որն ուսումնասիրվել է LA-ICP-MS մեթոդով (CNRS "IRAMAT" d'Orlean, France): Օբսիդիանը, մոտ 30կմ հեռավորության վրա գտնվող Գեղասար հրաբխի հետ է կապված: Ռսկորային նյութի ռադիոածխածնային C^{14} հասակագրման համաձայն (Laboratoire Beta Analytic

Radiocarbon Dating (Florida, USA)) ստացվել է 3460 ± 40 BP տարիք, որը չափորոշվել է 1890 և 1680 BC հասակային սահմաններում (2 sigma) (Ավագյան և ուր., 2017; Avagyan et al., 2020):

3.1.3. Սեյսմիտներ և հողերի ջրիկացում

Չնայած << տարածքում սեյսմիտների, այդ թվում հողերի ջրիկացման ուղղությամբ սակավաթիվ ուսումնասիրություններին, այնուամենայնիվ, դրանց առկայությունը հնարավոր է երիտասարդ ավազակավային ջրհագեցած նստվածքներում, ինչպես օրինակ՝ Արարատյան, Շիրակի, Սևանի ավազաններում և այլուր: Սևանի ավազանում (Փոքր Սևանի հյուսիսարևմտյան հատվածում) որոշ նախնական դիտարկումներ իրականացրել է Կորժենկովը (Կորժենկով և ուր., 2014):

Նորատուս-Քանագեղ խզվածքային գոտում նույնպես դիտարկվում են սեյսմիտներ, որոնց շերտագրական դիրքը թույլ է տալիս այն վերագրել ավելի վաղ ծագման, քան խզվածքի ակտիվացման սկիզբն է (նկ. 36) (Ավագյան և ուր., 2017): Նորատուս թերակղզուց հարավ՝ ճանապարհի հարևանությամբ, շատ հետաքրքիր դիտարկումներ է կատարել Միլանովսկին (նկ. 28, աստղանիշ 3): Նա նկարագրել է միկրոդիսլոկացիաներ, «դիապիրային» ծալքեր, որոնք ունեն մինչև 1-1.5մ երկարություն և զարգանում են կավավազային միջավայրում (Милановский, 1953; Avagyan et al., 2020): Միլանովսկին ենթադրել է, որ դրանք առաջացել են երիտասարդ նստվածքներում, երբ այն դանդաղ սահել է լճի հատակով: Մինչդեռ ըստ Ավագյան և ուր.-ի (Avagyan et al., 2020), միայն լճի հատակով դանդաղ հոսքով հնարավոր չէ բացատրել մերկացման ստորին մասի մինչև 6մ տեսանելի հզորությամբ ավազային շերտի՝ տարբեր հորիզոններում դիտարկվող դեֆորմացիաները (նկ. 36A): Նկարագրված ավազային շերտից ավելի վեր, առանձնանում են ևս երկու ավազային շերտեր: Ստորինը ավելի խոշորահատիկ է և ունի երկաթային հողմնահարման դեղնավուն գույն: Երկու շերտերում էլ նկատվում են ակնհայտ սեյսմիտներ՝ ավելի փոքր մասշտաբների, երբեմն հստակ սնկածն (նկ. 36B, C): Տեղանքի վերլուծությունը վկայում է երկու-երեք խոշոր Mw>5 մագնիտուդով սեյսմիկ իրադարձությունների

մասին, որոնցից առաջինը առավել հզոր, կամ շատ մոտ է պիկենտրոնին (Ավագյան և ուր., 2017):

3.1.4. Ստորջրյա հետազոտություններ


Հաշվի առնելով խզման հարթության դեպի լիճ անկումները և սկարպի ռեգրեսիվ հողմնահարումը, հասկանալի է դառնում, որ խզվածքի վերին և ստորին բլոկների վերին սահմանը տեղ-տեղ գտնվում է Սևանա լճի ափամերձ ջրածածկ մասում (նկ. 36D):

Դեռևս 2011 թվականին 2.3-2.6մ խորության վրա արձանագրվել էր ստորջրյա խոշոր երկու աղբյուր՝ $N40^{\circ} 15' 58.1''$, $E45^{\circ} 13' 19''$ կոորդինատներով:

Ըստ Բայյանի և Բոշնաղյանի (Բալյա, Բօշնագյան, 1964), Նորատուս գյուղի հատվածում փորված հորատանցքի 84մ-ում խճակոնգլումերատների հորիզոնը իր մեջ պարունակել է ջուր՝ լճի ջրին մոտ կազմությամբ: Խճակոնգլումերատների հորիզոնը վերևից և ներքևից սահմանափակվում է անջրաթափանց կավային, հրաբխանստվածքային հզոր շերտերով: Ըստ Ավագյան և ուր.-ի (Avagyan et al., 2020), Գավառի հորսոտի ստորգետնյա ջրերը հոսելով ջրամերժ շերտի վրայով, հասնում են Նորատուս-Քանագեղ խզվածքի հարթություն, որը հանդիսանում է մասնակի ամբարտակ դրանց շրջանառության համար և խզվածքով դուրս գալիս գետնի մակերես (Ավագյան և ուր., 2017; Avagyan et al., 2020): Վերջինս ապացուցված է ստորջրյա սուլացմաներով:

Բացահայտվել են երեք տասնյակից ավելի կետեր, որտեղից բխում են աղբյուրներ և գագեր (աղյ. 2)՝ ավելի քան 8կմ հյուսիս-հարավ գծային ծգվածությամբ (նշված են սպիտակ շրջանակներով, տե՛ս նկ. 28): Ընդ որում, յուրաքանչյուր ներկայացված կոորդինատում կարող են լինել աղբյուրների և գագերի տասնյակ արտահոսման կետեր (նկ. 37C, D), որոշ դեպքերում՝ 3.5×2 մ չափեր ունեցող մակերեսներից (նկ. 37D) այնպես, որ ջրագազային շիթի ուժգնության պատճառով հատակի ավագի մեջ գոյացել են խառնարաններ (նկ. 37B): Վերջիններիս չափերը կարող են հասնել $0.5-0.9$ մ: Այստեղ կարևոր է արձանագրել, որ եթե վերին և ստորին բլոկների սահմանից դուրս

Եկող աղբյուրի ջուրը կարող է նաև ուղղաձիգ դուրս չգալ լճային հատակի մակերես, ապա գագերի առկայությունն այստեղ որոշիչ դեր է խաղում դրանց ուղղաձիգ արտազատման համար (Ավագյան և ուր., 2017):




Նկար 36. A-նկար 28-ի, աստղանիշ 3-ի մերկացման լիթոլոգիական սյունյակը (Ավագյան և ուր., 2017): B, C-սեյսմիտներ, D-Քանագեղի հատվածի աղբյուրների և գագերի արտահոսքի սխեմատիկ կտրվածք, 1. կոյուղի, 2. ավագներ: 1. տրախիանդեղիտներ, 2. խոշորահատիկ ավագ, 3. միջահատիկ ավագ, 4. մանրահատիկ ավագ (a), կավ (b), 5. թեք շերտայնություն, 6. Mn-ային շերտ, 7. գլաքարներ, 8. սեյսմիտներ

Ստորջրյա հետազոտություններն իրականացվել են «Ստորջրյա սուզումների և հետազոտությունների հայկական կենտրոն»-ի (ՍՍՀՀԿ) հետ համատեղ:

Հետաքրքիր տվյալներ կան Գավառագետի ստորին ավազանում, ուր ներկայիս գետաբերանը չի գտնվում ջրի տակ դիտարկվող էրոզիոն հովտի շարունակության վրա (ցույց են տրված սլաքներով, տե՛ս նկ. 28): Այժմյան գետաբերանի ցամաքային հատվածը հանդիսանում է կուտակումային ափամերձ գոտի, ուր արտահայտված չէ էրոզիոն ձորակ: Սուզումները հաստատեցին ձորակի գոյությունը:

Աղյուսակ 2. Աղբյուրների և գագերի արտահոսման կետեր (Ավագյան և ուր., 2017)

N	N	E
1	40°17'2,1"0	45°13'10,3"
2	40°16'59,7"	45°13'9,9"
3	40°16'59,9"	45°13'9,3"
4	40°17'2,2"	45°13'9,9"
5	40°17'2,2"	45°13'9,8"
6	40°16'59,9"	45°13'9,8"
7	40°17'0"	45°13'10,2"
8	40°17'0,3"	45°13'10"
9	40°17'0,5"	45°13'9,8"
10	40°17'0,8"	45°13'10,3"
11	40°17'1,2"	45°13'10,1"
12	40°17'1,6"	45°13'10,2"
13	40°17'1,6"	45°13'10,4"
14	40°17'1,7"	45°13'10,2"
15	40°17'1,9"	45°13'10,1"
16	40°17'1,9"	45°13'10,1"
17	40°17'2,1"	45°13'10,3"
18	40°19'17"	45°13'8,9"
19	40°16'18,3"	45°13'24,4"
20	40°15'20,5"	45°13'24,6"
21	40°16'21,2"	45°13'24,8"
22	40°16'21,7"	45°13'25,1"
23	40°16'25,7"	45°13'25,5"
24	40°16'30,7"	45°13'26,5"
25	40°15'0,3"	45°13'18,9"
26	40°15'57,9"	45°44'58,9"
27	40°17'50,7"	45°13'13,9"
28	40°17'57,9"	45°13'17,4"
29	40°17'41,8"	45°13'8,2"
30	40°15'58,1"	45°13'19"
31	40°15'58,1"	45°13'19,3"



Նկար 37. Ստորջրյա լուսանկարներ (Avagyan et al., 2020): A-սուզորդ-երկրաբանը հատուկ տեսրում արձանագրում է դիտարկումը, B, C, D-տարբեր ծավալների գագերի արտազատումը

Այն շարունակվում է մինչև առնվազն 35մ խորությունները: Կարող ենք ենթադրել, որ Սևանա լճի մակարդակը էրոզիայի ակտիվության ընթացքում եղել է մոտ 35մ ավելի ներքև և, հավանաբար, հրաբխային ակտիվությամբ պայմանավորված Հրազդան գետի հովտի ամբարտակմամբ տեղի է ունեցել ջոհ մակարդակի արագ բարձրացում: Այսինքն, էրոզիայի ակտիվության ժամանակ Մեծ Սևանը գոյություն չի ունեցել և ներկայիս տեսքով Սևանա լիճը ձևավորվել է չորրորդականի, առավելագույնը՝ վերին նեղան-չորրորդականի ընթացքում:


3.1.5. Լճի հատակից արտանետվող գագերի գեոքիմիական հետազոտություններ

Լճի հատակից արտանետվող գագերի հետազոտումը կարևոր է, քանի որ թույլ է տալիս պատկերացում կազմել ընդերքի երկրաքիմիական կառուցվածքի, ինչպես նաև լրում ընթացող էկոլոգիական փոխազդեցությունների մասին:

Այսպես, գագերի նմուշառումը իրականացվել է հետևյալ պարզ ու արդյունավետ եղանակով (նկ. 38): Այս եղանակը հնարավորություն է տալիս հեշտությամբ բացառել մթնոլորտի ազդեցությունը արդյունքների վրա: Գազը հավաքվել է պոլիմերային 22ի

մեջ, այնուհետև ջրի տակ հերմետիկ փակվել է խցանով: Նմուշը պահվել է բերանով ներքև այնպես, որ գազի նմուշը մեկուսացված լինի արտաքին միջավայրից, բացի խցանից նաև ջրային շերտով:

Գազի արտանետումը տեղայնացվել է Humminbird 898c SI Combo SONAR-ով, որը հագեցած է GPS-ով (Global Positioning System):



Նկար 38. Գազերի նմուշառման սխեման (Ավագյան և ուր., 2017)

Գազի նմուշների նախնական սահմանաչափումները կատարվել են Biogas 5000 գազային անալիզատորով (Geo-technical Instruments (UK) Limited), որը հնարավորություն է տալիս ուղղակիորեն չափել մեթանի, թթվածնի, ածխաթթու գազի, և անուղղակիորեն՝ ազոտի պարունակությունը գազի խառնուրդում (Avagyan et al., 2020): Գազերի քիմիական բաղադրությունը որոշվել է Ռուսաստանի Գիտությունների Ակադեմիայի Երկրաբանական Գիտությունների Ինստիտուտում՝ օգտագործելով Crystal 5000 գազային քրոմատոգրաֆը՝ բացարձակ չափորոշման/կալիբրացիայի միջոցով: Ածխածնի իզոտոպային կազմը (CO_2 և CH_4) որոշելու համար օգտագործվել է Thermoelectron Corporation-ի գործիքակազմ, ներառյալ մասս-սպեկտրոմետր Delta V Advantage և GC գազաքրոմատոգրաֆ: Նմուշները և ստանդարտները քայլայվել են 100% ֆուֆորական թթվով, 50°C ջերմաստիճանում՝ հելիումային միջավայրում: Ածխածնի իզոտոպային ուսումնասիրություններն իրականացվել են Ռուսաստանի Գիտությունների Ակադեմիայի Երկրաբանական Գիտությունների Ինստիտուտում:

Արդյունքները ցուց են տվել, որ վերցված նմուշում 99%-ը ածխաթթու գազ է: Մնացած 1% կարելի է վերագրել չափման և/կամ նմուշառման հետևանքով առաջացած

սխալին: Նմուշն իրենից ներկայացրել է անհոտ և անգույն գազի խառնուրդ (Avagyan et al., 2020):

Քրոմատագրաֆային ավելի նուրբ վերլուծությունը հետազոտված նմուշում չհայտնաբերեց մեթանի կամ այլ գազի պարունակություն: Ազդտի բացակայությունը նմուշում ցույց է տալիս, որ արտազատվող գազը իրենից օդ չի ներկայացնում: Այստեղ քննարկման առարկա կարող է լինել այն հանգամանքը, որ գազն արտազատվում է ստորգետնյա ջրերի հետ: *In situ* ջերմաստիճանի, էլեկտրահաղորդականության և pH (միջավայրի ջրածնային ցուցիչ) հետագծումը նմուշառման կետում և նրա շրջակայքում նկատելի անոմալիա չի բացահայտել: Զերմաստիճանը տատանվել է 13.6°C -ի, էլեկտրահաղորդականությունը՝ 480 մկՍիմենս/սմ-ի, իսկ pH-ը՝ 8.6-ի սահմաններում: Շեղումը չի գերազանցել 0.1%-ը: Սա նշանակում է, որ գազի հետ միասին լին արտազատվող ջուրը զգալիորեն չի տարբերվում լճի ջրից (Ավագյան և ուր., 2017):


3.2. Գավառագետի խզվածքային գոտի

Գավառի հորստային բլոկի վրա տեղադրված են մի քանի լքված հովիտներ: Այս երևույթը բացատրվում է Գավառագետի խզվածքի՝ ուղղաձիգ բարձրությամբ մինչև 250մ հասնող սկարպի ծևավորմամբ: Գավառագետի խզվածքի սկարպը ամբարտակել է և շեղել Գեղամա լեռների արևելյան լանջերից իջնող ջրային հոսքերը: Սկզբնական շրջանում Գավառ քաղաքի և հարակից տարածքում ժամանակավորապես ծևավորվել է տեկտոնական ծագման լճակ: Գավառ քաղաքին մոտ, դեպի հյուսիս, Գավառագետի խզվածքը կտրուկ փոխում է իր ուղղությունը հյուսիս-հարավից՝ N 110° և կինեմատիկան դառնում է հիմնականում աջակողմյան կողաշարժ (Avagyan, 2001; Karakhanyan et al., 2016; Ավագյան և ուր., 2017; Avagyan et al., 2020):

Գավառի հորստի հովիտներից մեկի երկայնքով, Երանոս գյուղից 3.5 կմ հյուսիս և խրամուղուց ~ 8 կմ հարավ-արևմուտք, գտնվում է հնագիտական համալիր (նկ. 39, աստղանիշ 4, տե՛ս նկ. 28-ում): Համալիրը ներկայացված է հսկայաբեկոր պատերով, առանձին կառուցներով և ամենահետաքրքիրը՝ արհեստական ամբարտակով:

Յած ընկած բլոկների ստորին նստվածքներից վերցված նմուշների ռադիոածխածնային տվյալների համաձայն (նկ. 39C), ստացվել են 166 ± 80 cal AD հասակային տվյալներ: Վերջինս համահունչ է խրամուղում բացահայտված սեյսմիկ իրադարձության ժամանակի հետ:

Ուստի, ենթադրելով, որ քննարկվող բլոկը ընկել է երկրաշարժի հետևանքով, կարող ենք համարել, որ խրամուղում նկատված խզվածքն ունի տեկտոնական ծագում:



Նկար 39. A-Լքված տեկտոնական հովտի օդալուսանկար (դրոն), աստղանիշ 4, տե՛ս նկ. 28 (Avagyan et al., 2020); B-անթրոպոգեն կառույց, C, D-ընկած բլոկների ստորին նստվածքների ռադիոածխածնային հասակագրման տվյալներ

3.2.1. Սեյսմատեկտոնական ազդեցությունը Երանոս գյուղի սողանքային գործընթացների վրա: Տարածքի համառոտ ինժեներակրաբանական բնութագիր

Երանոս գյուղը գտնվում է Գեղարքունիքի լեռնաշղթայի հարավարևելյան ստորոտին, մարզկենտրոն Գավառից 25կմ հարավ-արևելք: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 2050մ բարձրության վրա («ՀԱՅՆԱԽԱԳԻԾ» ԲԲԸ հաշվետվություն, 2020): Գեոմորֆոլոգիական տեսակետից տարածքը գտնվում է հրաբխային սարավանդի սահմանների հյուսիսարևելյան եզրամասում, Սևանա լճի պալեոհունից Գեղամա լեռնաշղթայի արևելյան էրոզիոն-հողմնահարման լանջերի


անցման գոտում: Ոելիեֆն անհարթ է, կտրտված գետակային ցանցով, մակերևոսի ընդհանուր թեքությամբ հարավարևմուտքից՝ հյուսիսարևելք: Երանոս գյուղի տարածքում գրունտային ջրերը տեղադրված են 2մ-ից խորը, սակայն սողանքային մարմնի վրա տեղ-տեղ դուրս են գալիս աղբյուրների ելքեր (նկ. 40) («ՀԱՅՆԱԽԱԳԻԾ» ԲԲԸ հաշվետվություն, 2020):



Նկար 40. Երանոս գյուղի սողանքային մարմնի սխեմատիկ քարտեզ, տեղադիրքը տե՛ս նկ. 43-ում

Տարածքի երկրաբանական կառուցվածքը ներկայացված է նեղենի հասակի բազալտային անդեգիտներով, օլիվինային բազալտներով և ռիոլիտային դացիտներով, որոնք ծածկված են ժամանակակից էյուվիալ, դեյուվիալ, ալուվիալ-պրոլուվիալ խճային, կոպճային, ճալաքարակոպճային, ավազակավային և կավավազային գոյացումներով (ՀԱՅՆԱԽԱԳԻԾ ԲԲԸ հաշվետվություն, 2020): Ենելով Երանոս գյուղի գերեզմանատան հատվածի շերտագրական սյունյակից (նկ. 41), ER-11 և ER-12a շերտերի միջև հստակ առնձնանում է կոպտաբեկոր ապարագանգված՝ կոյուվի, որի

գոյացումը հնարավոր է կապված է սողանքային ակտիվացմամբ հարուցված երկրաշարժով: Ցավոք, նախաձեռնված OSL հասակագրումները արդյունք չտվեցին՝ պարզելու գոյացման տարիքը:



Նկար 41. Երանոս գյուղի նոր գերեզմանատան հատվածի 1-ին մերկացման շերտագրական այունյակը, տեղադիրքը տե՛ս նկ. 40-ում

ՀՀՇՆ II-6.02-2006-ի համաձայն, Երանոս գյուղը գտնվում է 2-րդ սեյսմիկ գոտում ($a=0.3\text{g}$) («ՀԱՅՆԱԽԱԳԻԾ» ԲԲԸ հաշվետվություն, 2020): Իսկ ըստ Բրյունի (Brune, 1996) ոչ բավարար հավասարակշռված բլոկներում 0.2-0.3g-ն բավարար է սողանք առաջացնելու համար: Այստեղ տեղին է նշել նաև 2024թ.-ի օգոստոսի 12-ի Մարտունի քաղաքից 9կմ հյուսիս-արևմուտք, օջախի 10կմ խորությամբ և Mw 4.2 երկրաշարժը, որի հետևանքով վնասվել է շուրջ 82 շենք-շինություն (ըստ՝ «Ներքին գործերի նախարարության մամլո հաղորդագրության):

Սա ևս մեկ ապացույցն է այն բանի, որ հարակից խախտումների ակտիվացումն ազդել է սողանքի ակտիվության վրա:

Վտանգավոր ֆիզիկաերկրաբանական պրոցեսներն ու երևոյթները Երանոս գյուղի տարածքում ներկայացված են.

- քարաթափումներով, որոնց գոտին ձգվում է բնակելի տարածքի արևմտյան սահմանի եզրային մասով,
- սողանքային երևոյթներով, որոնք ռիտվում են գյուղի բնակելի տարածքում, իին և նոր գերեզմանատների հատվածում՝ սողանքի հարավային սահմանի հարակից գոտում:

Վնասված են, մասնավորապես, 2-րդ փողոցի 24-րդ, 29-րդ տները: 24-րդ տան արևելյան մասը նաստած է, որի հետևանքով տան կենտրոնական հատվածով գոյացել է խոշոր ճեղք (նկ. 42a): Ներքեւում պատի ճաքը նեղ է՝ վերևում լայնանում է՝ մոտ 5սմ: Տան դիմացի ջրատարի պատը ճաքճքվել է, անկումը՝ հյուսիս 75° N: Ավտոտնակի դռները դեֆորմացված են (նկ. 42b): Ընդհանուր շենքն իջած է լանջնիվար, նստած է նաև շենքի արևմտյան ծայրամասը: 2-րդ հարկի պատուհանի մոտ նույնպես առկա են ճաքեր: Փողոցով դեպի վեր, տների պատերը ճաքճքվել են 2013թ.-ին, այժմ վերանորոգված են:

2-րդ փողոցի 29-րդ տունը, թերևս, ավելի վնասված է: Մենյակներից մեկի՝ NE սենյակի արևելյան պատը և՛ իջել է, և՛ տեխափոխվել դեպի հարավ, մոտ 11սմ (նկ. 42c): Այդ պատի հակառակ կողմում հատակը բացվել է մոտ 10սմ (նկ. 42d) և այդ նույն եռանկյուն հատվածով տեղաշարժվել հարավ-արևելք և իջել: Պատուհանները դժվար են բացվում-փակվում՝ ամբողջությամբ դեֆորմացվել են: Տան արևելյան պատի ներքևի մասը տեղաշարժվել է (նկ. 42e): 29-րդ տնից ներքև սկսվում է իին գերեզմանատունը: Փողոցի արգելապատը ձգվում է արևմուտք-արևելք, որը մոտ 10-15մ-ի վրա ընդարձակվել է գրեթե 15սմ-ով: Թեպետ 2018թ.-ին իրականացվել են վերականգնման աշխատանքներ՝ քանդել ու բետոնապատել են, սակայն այժմ կրկին դեֆորմացվել է և սկսել ճաքճքվել: Հին գերեզմանատան արգելապատն ու աստիճանները նույնպես ճաքճքված են (նկ. 42f): Մերկացումից 30մ արևելք անցել է ջրագիծ՝ 1984թ. և 2004թ.-ին: Սողանքը 2013թ.-ին ակտիվացել ու կտրել է պողպատյա ջրագիծը, որի պատճառը,

ըստ տեղի բնակիչներից ստացված տվյալների, 2013թ.-ի հորդառատ տեղումներն էին, ուստի այս դեպքում սողանքի հիդրոմետերիոլգիական հրահրման վարկածն այստեղ ևս մեծ դեր է ունեցել:



Նկար 42. Սողանքի ակտիվության ազդեցությունը Երանոս գյուղի տարածքում

3.2.2. Սողանքի ծագումնաբանությունը

Քանի որ սեյսմիկ իրադարձությունների ժամանակ էներգիայի հանկարծակի լիցքաթափումը կարող է առաջացնել ինտենսիվ ցնցումներ և լարվածային փոփոխություններ ընդերքում, ապա ցնցումները կարող են ապակայունացնել լանջերը և սողանքների առաջացման պատճառ դառնալ: Բացի այդ, տուժած տարածքի երկրաբանական և գեոտեխնիկական բնութագրերը, ներառյալ առկա ապարների և


հողերի տեսակները, կարող են ազդել այդ սողանքների հավանականության և վարքի դրսնորման վրա:

- Ըստ Քրոզերի (Crozier, 1992), սեյսմածին սողանքների որոշման ցուցիչներից են՝
- տարածքում սեյսմիկ ակտիվության առկայությունը,
 - տարածական համընկնումը ակտիվ խզվածքի կամ սեյսմիկ ակտիվության գոտուն, ինչն այս դեպքում ակնհայտ է՝ պայմանավորված, մասնավորապես, Գավառագետի խզվածքի հարևանությամբ, որը գտնվում է սողանքի հիմնական սկարպից մոտ 0.5կմ հեռավորության վրա: Բացի այդ, սողանքի գլխամասային հատվածում դիտարկվում են ընդգծված սկարպերով առանձնացած խոշոր բլոկային կառուցներ (նկ. 40),
 - սողանքի հարաբերական մեծ չափերը,
 - սողանքի սահքի մակերեսի փոքր անկյունը,
 - սողանքի տեղադիրքը, որը հնարավոր չէ բացատրել միայն երկրաբանական կամ գեոմորֆոլոգիական հատկանիշներով:

Սոլոնենկո (Solonenko, 1977) իրավացիորեն գտնում է, որ կարելի է խոսել սողանքի սեյսմածին լինելու մասին, եթե նրա առաջացման տարիքը համընկնում է ոչ հեռու մակերեսային խախտման տարիքի հետ և նրա սողանքային տիպը համընկնում է երկրաշարժով հարուցված այլ սողանքի հետ: Բնականաբար, նրանց առաջացման ժամանակների որոշման համար անհրաժեշտ են լրացնիչ աշխատանքներ և հասակագրումներ, սակայն այս համագումարում կարևոր է ցույց տալ երիտասարդ մակերեսային խախտումների գոյությունը, այսինքն՝ սողանքի հարևանությամբ միջին կամ ուժեղ երկրաշարժի կամ երկրաշարժերի էպիկենտրոնների հարևանությունը, ինչն էլ մեր դեպքում հստակ գուգահեռվում է 1322թ. (Mw 6.6), 1992թ. (Mw 5.4) և 2024թ. (Mw 4.2) սեյսմիկ իրադարձությունների հետ (նկ. 43) (Ավագյան և ուր., 2022):

Այսպիսով, ելնելով վերը նշված սեյսմիկ իրադարձությունների տվյալներից, կարող ենք եզրահանգել, որ Երանոսի սողանքի սեյսմածին ծագումնաբանությունն ամենայն հավանականությամբ կապված է հարակից ակտիվ խզվածքների ակտիվության հետ և պնդել, որ Երանոսի սողանքը կրել է սեյսմիկ ազդեցություն: Դա ապացուցում են նաև սողանքի հյուսիսային թևում բացահայտված վարնետքային կինեմատիկայով

խախտումները (նկ. 44, տեղադիրքը տե՛ս նկ. 40-ում, մերկացում 2), ինչպես նաև 2024թ. երկրաշարժից արձանագրված տեղային ակտիվացումները:



Նկար 43. Սևանի ավազանի արևմտյան հատվածի սեյսմիկությունը 1962-2021թթ.-ի համար (ՀՀ ԳԱԱ ԵԳԻ, Գեոարխեոլոգիայի և գեոմոնիթորինգի լաբորատորիա, 2021)



Նկար 44. Երանոս գյուղի նոր գերեզմանատան հարակից հատվածի 2-րդ մերկացումը՝ վարնետքներով, տեղադիրքը տե՛ս նկ. 40-ում

ԳԼՈՒԽ 4. ՍԵՅՍՄԱՏԵԿՏՈՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԶՐԱՅԻՆ ԱՎԱՐԱՆՈՒՄ: ԹՎԱՅԻՆ ՄՈԴԵԼԱՎՈՐՈՒՄ

4.1. Տեղանքի համառոտ բնութագիրը

Ուսումնասիրության տարածքը գտնվում է բարդ երկրադինամիկ հանգույցում, որտեղ առկա են տարբեր ակտիվ տեկտոնական, հրաբխային, գրավիտացիոն ազդեցություններ և այլ ծագման երկրաբանական գործընթացներ:

Շուրջ 300.000 բնակչություն ունեցող Սևանա լճի ավազանը Եվրասիայի ամենամեծ բարձրադիր (ալպյան) քաղցրահամ լճերից է և գտնվում է ծովի մակարդակից 1900մ բարձրության վրա: Լճի ջրային մակերեսը 1241կմ² է (Karakhanyan et al., 2016), որը կազմում է << ամբողջ տարածքի 4.2%-ը: Նեղեն-չորրորդական հասակ և տեկտոնահրաբխային ծագում ունեցող Սևանա լիճը (Karakhanyan et al., 2016; Avagyan et al., 2020) բաղկացած է երկու մասից՝ հյուսիսային Փոքր Սևանից (ավելի խորը) և հարավային Մեծ Սևանից: Ընդ որում, հարավային Մեծ Սևանը երկու անգամ մեծ է Փոքր Սևանից (Karakhanyan et al., 2016): Ամբողջ լճի երկարությունը գրեթե 75կմ է, առավելագույն խորությունը՝ ≈80մ:

Ուժեղ երկրաշարժերը խոշոր փլուզումների և նույնիսկ լճային ցունամիների ամենակարևոր պատճառներից են (Ichinose and Anderson, 2000): Թեև Սևանա լճում պալեոցունամիի որևէ ապացուցված դեպք հայտնի չէ, այնուամենայնիվ, ենթադրվել են երկրաշարժից առաջացած սեյշ-ալիքներ (Karakhanyan et al., 2016) և լճային ցունամի (Avagyan, 2019; Avagyan et al., 2020, Avagyan et al., 2024):

Կարևոր է հաշվի առնել այն հանգամանքը, որ միայն սեյսմատեկտոնական ակտիվությունը չի կարող լինել լճային ցունամիի առաջացման միակ նախապայման: Այլ գործոններ, ինչպիսիք են երկրաշարժի ուժգնությունը և գտնվելու վայրը, մակերեսային խզումն և կինեմատիկան, ինչպես նաև լճի ավազանի երկրաշափությունն և հիդրոդինամիկ բնութագրերը, նույնպես կարող են ազդել ցունամիի ալիքների առաջացման և տարածման վրա (Ioualalen et al., 2017; Colon et al., 2023):

4.2. Լճային ցունամիների համառոտ նկարագիրը

Լճերում ցունամիները կարող են առաջանալ լճային համակարգերի մեջ կամ շուրջ՝ նաև խզվածքի ակտիվության արդյունքում (Ichinose and Anderson, 2000): Խզվածքը ուղղահայաց շարժումով տեղաշարժում է երկրակեղևը վերնետքային, վարնետքային կամ կողաշարժային խզումներով՝ տեղաշարժելով ջրային ավազանը և առաջացնելով ցունամի: Փակ ավազանում, ինչպիսին լիճն է, ցունամիներն իրենցից ներկայացնում են որպես երկրաշարժից կո-սեյսմիկ տեղաշարժի արդյունքում առաջացած սկզբնական ալիք, իսկ սեյշը՝ որպես ներդաշնակ ռեզոնանս լիի ներսում (Ichinose and Anderson, 2000):

Թեև լճային ցունամիների մեծ մասն առաջանում է սողանքների հետևանքով, կարևոր է նաև հաշվի առնել սեյսմիկ ազդեցությունների և հարակից մակերևութային խզումների դերը ցունամիի առաջացման մեջ: Համաձայն «Հնդկական ցունամիի վաղ նախազգուշացման կենտրոնի» (ITEWC-"Indian Tsunami Early Warning Centre", 2024), ցանկացած երկրաշարժի ժամանակ իրական ժամանակում հասանելի են միայն հիպոկենտրոնային պարամետրերն և ուժգնությունը: Քանի որ խզվածքի երկրաշափության մասին տեղեկատվությունը հասանելի է դառնում շատ ավելի ուշ, ապա ցունամիի մոդելավորումը, հատկապես ափամերձ հեղեղման կանխատեսումը, չի կարող իրականացվել իրական ժամանակում գործառնական ցունամիի մասին ծանուցումներ ստեղծելու համար, քանի որ մոդելային գործարկումը զգալի հաշվարկային ժամանակ է պահանջում՝ համաձայն ITEWC-ի (2024):

Գործառնական ցունամիի քանակական կանխատեսման համար պետք է լինի մեթոդ՝ արագորեն գնահատելու տարածման ժամանակը և հեղեղման առավելագույն բարձրությունը (run-up)՝ հիմնված երկրաշարժի արագ հասանելի պարամետրերի վրա (երկրաշարժի ուժգնություն և հիպոկենտրոնի խորություն):

Վերոնշյալ պատճառներով ցունամիի հնարավոր վտանգի ըմբռնման և գնահատման լավագույն միջոցը երկրաշարժերի նախնական կամ հիպոթետիկ սցենարների ստեղծումն է, ինչպես օրինակ՝ ITEWC-ը (2024):

Միջեռնային թահո լճի համար երկրաշարժի մի քանի հիպոթետիկ սցենարներ նույնպես քննարկվել և հաշվարկվել են (Ichinose and Anderson, 2000)' ափամերձ ալիքների բարձրությունների բաշխումը ավելի մանրամասն գնահատելու համար, չնայած Դյուի և Դիզեի նախորդ ուսումնասիրություններին (Dewey and Dise, 1987):

Նույն մոտեցումը կիրառվել է 1707թ.-ի Հոեի երկրաշարժի ցունամիի աղբյուրի վերանայված մոդելի և Ճապոնիայի Կյուսյու քաղաքում գտնվող Ռյուցին լճի ցունամիի ջրհեղեղի մոդելավորման համար (Furumura et al., 2011):


Այսպիսով, լճային ցունամիի ցանկացած համապարփակ գնահատում պահանջում է նորարարական մոտեցումների կիրառում՝ տարբեր երկրաբանական վտանգների և ռիսկերի փոխազդեցությունները բացահայտելու համար, հատկապես բնակեցված տարածքների, երկաթուղիների և ազգային նշանակության ճանապարհների առկայության պարագայում:

4.3. Տարածքի կառուցվածքային պատկերը

4.3.1. Վանաձոր-Արտանիշ սեզմենտ

Վանաձոր-Արտանիշ սեզմենտը, որն ունի մոտ 120° N և 89° անկման անկյուն, բնութագրվում է 82կմ երկարությամբ և 39կմ լայնությամբ խզվածքի հարթությամբ: Այս ուսումնասիրության համար հաջորդիվ ներկայացվող ցունամիի մոդելավորման նպատակով մենք ընտրել ենք սեզմենտի հարավային հատվածը, որն ունի մոտ 35կմ երկարություն և 22կմ լայնություն (աղյ. 3)' ըստ 2մ ուղղահայաց տեղաշարժի (հայտնաբերված պալեոսեյսմաբանական ուսումնասիրություններով՝ Ծովագյուղ գյուղի մոտ (Avagyan A. et al., in print): Սեզմենտի այս հատվածն ամբողջությամբ գտնվում է Սևանա լճի ավագանում՝ սահմանակից լինելով լճի ամենախոր հյուսիսարևելյան հատվածին՝ ≈ 80 մ առավելագույն խորությամբ: ՓՍՍ խզվածքի Վանաձոր-Արտանիշ սեզմենտի վերնետքային բաղադրիչը լավ արտահայտված է ռելիեֆում (նկ. 45, 46a, c) և ներկայացված է ճնշման կատարներով (pressure ridge), ինչպես նկատվում է Ֆիոլետովո և Սեմյոնովկա տեղամասերում (Philip et al., 2001; Avagyan, 2001, 2019):


Մոտավորապես Ֆիոլետովոյի հատվածում, ՓՍՍ խզվածքը բաժանվում է երկու ճյուղերի (նկ. 45), որոնք սահմանակից են Ձկնագետի հջվածքին:



Նկար 45. Սևանա լճի ավագանի ակտիվ խզվածքներն (Ավագյան, 2019) ու սեյսմիկությունը 1962-2021թթ.-ի համար (Հայկական սեյսմիկ կատալոգ, 2023) (Avagyan et al., 2024)

Ֆիոլետովոյի և Սեմյոնովկայի տարածքներում անցկացված ավելի վաղ պալեոսեյսմաբանական ուսումնասիրությունները՝ ըստ C^{14} հասակային տվյալների, հայտնաբերել են երեք սեյսմիկ իրադարձություն (նկ. 45), ներառյալ մեկ սեյսմիկ իրադարձություն՝ մ.թ.ա. 7539-563թթ.-ին, որին հաջորդել են մ.թ.ա. 3078-200թթ.-ի և մ.թ.ա. 2333-403թթ.-ի սեյսմիկ իրադարձությունները (Philip et al., 2001; Ավագյան, 2019): Վերջին երկու սեյսմիկ իրադարձությունների մագնիտուդները հաշվարկվել են ավելի վաղ՝ ըստ Wells and Coppersmith-ի (1994թ.)՝ մոտ Mw 7.3 և Mw 7.2 (Philip et al., 2001; Avagyan 2001; Մկրտչյան, 2014): 995թ.-ին (Mw 6.2), 1187թ.-ին (Mw 6.2) և 1853թ.-ին (Mw 6.0) տեղի ունեցած երեք պատմական իրադարձությունների էպիկենտրոնները գտնվել են նաև Փոքր Սևանի հյուսիսարևելյան ափին՝ Վանաձոր-Արտավազ և Ձկնագետ-Խոնարհասար սեզմենտների հարակից հատվածում (Karakhanyan et al., 2016): Ինչպես նախորդիկ նշվեց, Ծովագյուղ գերեզմանատան տարածքում

հայտնաբերվել է մակերևութային վերնետք խախտում՝ կողաշարժային բաղադրիչով (նկ. 45), որը հուշում է $M \sim 7.0$ պալեոերկրաշարժի մասին (Avagyan A. et al., in print):



Նկար 46. Սևանա լճի բաթիմետրիկ քարտեզներ՝ վերադրված ավազանի բարձրության թվային մոդելի (DEM) վրա, որոնց վերլուծությունը ցույց է տալիս լճի հատակով անցնող խզվածքի հատվածները (Avagyan et al., 2024): а. Սլաքները ցույց են տալիս Վանաձոր-Արտանիշ հատվածը, որտեղ գերակշռող վերնետքային բաղադրիչը դրսնորվում է ափամերձ հատվածում (а, с): б.Նոյնը՝ Ձկնագետ-Խոնարհասար կողաշարժի դեպքում

Լճի հյուսափառելյան ափամերձ հատվածում դիտվում է վերնետքային խախտման կինեմատիկա՝ կողաշարժի բաղադրիչով (նկ. 46с): Այս դիտարկումները թույլ են տալիս մոդելավորել Վանաձոր-Արտանիշ սեզմենտի հարավային հատվածը հիմնականում որպես վերնետքային խզվածք:

4.3.2. Ձկնագետ-Խոնարհասար սեզմենտ

Ինչը վերաբերում է Ձկնագետ-Խոնարհասար սեզմենտին (Ավագյան, 2019), ապա այն ունի հիմնականում աջակողմյան կողաշարժային կինեմատիկա՝ փոփոխական

ուղղահայաց բաղադրիչով, որը կտրում է լճի ամբողջ կենտրոնական մասը (նկ. 45, 46b) (Trifonov et al., 1994; Philip et al., 2001; Avagyan, 2001; Davtyan, 2007; Karakhanyan et al., 2016): 130° N տարածմամբ, ~ 146 կմ երկարությամբ և ~ 26 կմ լայնությամբ (խզվածքի հարթությունում) Ձկնագետ-Խոնարհասար սեզմենտը ընդհանուր առմամբ ուղղագիծ է, ինչը ենթադրում է խզվածքի գրեթե ուղղահայաց հարթություն, որն անկում է 88° N (նկ. 45): Համաձայն լայնածավալ պալեոսեյսմաբանական ուսումնասիրությունների (Philip et al., 2001; Avagyan, 2001, 2019; Davtyan, 2007; Karakhanyan et al., 2016; Ավագյան, 2019), Մեծ Սևանա լճի հարավարևելյան ափագծից 10-12կմ հեռավորության վրա, ըստ C^{14} հասակային տվյալների, բացահայտվել են հետևյալ սեյսմիկ իրադարձությունները՝ մ.թ.ա. 5655-4992թթ., մ.թ.ա. 3498-1262թթ. և մ.թ.ա. 12-9-րդ դդ. (նկ. 45): Այդ երեք ուժեղ երկրաշարժերն ունեն Mw 7.0-7.5' ըստ Wells and Coppersmith-ի (1994) և ուղեկցվել են մակերեսային խախտումով (Philip et al., 2001; Davtyan, 2007; Karakhanyan et al., 2016; Ավագյան, 2019): Տարածքում սեյսմիկ կայանների տեղադրումից հետո լճի հատակում բազմաթիվ աննշան սեյսմիկ իրադարձություններ են գրանցվել, որոնք սերտորեն կապված են Ձկնագետ-Խոնարհասար սեզմենտի հետ (նկ. 45) (Karakhanyan et al., 2016): Վերոնշյալ տվյալները վկայում են, որ Սևանա լճի հատակի խզվածքները ակտիվ են և ունակ են առաջանել ուժեղ երկրաշարժեր: Ուստի, ցանկացած սեյսմատեկտոնական մոդելի և սեյսմիկ վտանգի գնահատականներում, թե՛ Փոքր Սևանում, և թե՛ Մեծ Սևանում, պետք է հաշվի առնել երկար և մակերեսային դրսևորման ունակ (քափար) խզվածքների առկայությունը (Karakhanyan et al., 2016): Հաշվի առնելով և կարևորելով նախորդիվ կատարված բոլոր ուսումնասիրությունները, այս ուսումնասիրության համար մենք կիրառել ենք երկրաշարժերի աղբյուրների մասշտաբավորման առաջադեմ էմպիրիկ օրենքները (Aki, 1966; Tingbaijam et al., 2017)' Վանաձոր-Արտանիշ սեզմենտի հարավային ստորջրյա հատվածի և Ձկնագետ-Խոնարհասար սեզմենտի սեյսմիկ սցենարների թարմացված $Mw_{(max)}$ արժեքների ստացման և լճային ցունամիի մոդելավորումն իրականացնելու համար:

4.4. Մեթոդի նկարագիրը

Ելնելով պնդումից, որ փակ ավազանում ցունամիները կոչվում են երկրաշարժի կո-սեյսմիկ տեղաշարժի արդյունքում առաջացած սկզբնական ալիք (Ichinose and Anderson, 2000), մենք դիտարկել ենք երկրաշարժի երկու հիպոթետիկ սցենար՝ լճային ցունամիի մոդելավորման համար՝ համաձայն Օկադայի մոդելի (Okada, 1985): Այս մոդելն օգտագործվում է ամբողջ աշխարհում՝ ջրային ավազանի հատակի դեֆորմացիան որոշելով՝ ցունամիի տարածման համար անհրաժեշտ նախնական պայմանները հաշվարկելու համար: Այս մոդելների համար պահանջվող հիմնական պարամետրերը ներառում են խզվածքի հարթություններ (երկարություն և լայնություն), տարածման, անկման, սահքի անկյուններ, երկրաշարժի խորություն ու մագնիտուդ: Ստեղծված սեյսմիկ ալիքը տատանվում է տվյալ աղբյուրի պարամետրերով. հետևաբար, վերը նշված պարամետրերի վերաբերյալ տեղեկատվությունը կարևոր է:

Ըստ Օկադայի (Okada, 1985), փակ վերլուծական արտահայտությունների ամբողջական փաթեթը ներկայացված է մակերևույթի տեղաշարժերի, լարումների և թեքությունների համար, ինչպես կետային, այնպես էլ վերջավոր ուղղանկյուն աղբյուրների դեպքում: Ստացված արտահայտությունները հզոր գործիք են ոչ միայն երկրաշարժերի առաջացման հետ կապված ստատիկ դաշտի փոփոխությունների վերլուծության, այլ նաև հեղուկի դեֆորմացիայի մոդելավորման համար (Okada, 1985): Այս մոդելում, չնայած տեսական դաշտերի հաշվարկման նման առաջընթացին, փաստացի դիտարկումների վերլուծությունները հիմնականում հիմնված են իզոտրոպ միատարր կիսատարածության ամենապարզ ենթադրության և աղբյուրի ամենապարզ կառուցվածքի վրա, հիմնականում այն պատճառով, որ այն առավել հարմար և օգտակար է որպես առաջին մոտավոր մոդել (Okada, 1985):

Սեյսմիկ աղբյուրների բազմազանությունը անպայմանորեն տալիս է ցունամիի տարածման տարբեր ժամանակներ, ալիքների ուղղորդումներ և կողմնորոշումներ, վերահսկելով ուժեղացնող (կենտրոնացում, ռեզոնանսներ) կամ թուլացնող գործոնները (դիֆրակցիա, ապակենտրոնացում):

Բնակչության և կառուցների համար ցունամիի վտանգի պատրաստվածության ծախսերը նվազագույնի հասցնելու համար օգտակար է մշակել ցունամիի ճշգրիտ և համապարփակ քարտեզագրում՝ հիմնված սպասվող ալիքի առավելագույն բարձրությունների վրա (Colon et al., 2023):

Այս ուսումնասիրության մեջ մենք քարտեզագրել ենք մեկ բաղադրիչ՝ ալիքի առավելագույն բարձրություն (Zmax): Ընդհանուր և ճշգրիտ քարտեզագրումը, առհասարակ, թույլ է տալիս բացահայտել պոտենցիալ վտանգված տարածքները, որպեսզի նվազագույնի հասցվեն ցունամիի պատրաստվածության ծախսերը, ինչը, ի վերջո, լրացնից կարևոր տեղեկատվություն է խոցելի համայնքների համար:

Հաշվի առնելով տեղական սեյսմիկության, մորֆոտեկտոնիկայի և մասշտաբային վերջին օրենքների առանձնահատկությունները (Aki, 1966; Tingbaijam et al., 2017), մենք նախ առաջարկել ենք Mw 6.9 սեյսմիկ սցենար ՓՍՍԽ Վանաձոր-Արտանիշ սեզմենտի հարավային հատվածի համար՝ որպես վերնետք խզվածք: Սա Հայաստանի համար ամենահավանական սցենարն է՝ ըստ Հայաստանի Երկրաշարժերի կատալոգի (2023): Հաջորդիվ, Ձկնագետ-Խոնարհասար կողաշարժի համար դիտարկել ենք Mw 7.5 սեյսմիկ սցենար (մանրամասները տե՛ս ստորև):

Այնուամենայնիվ, կո-սեյսմիկ ցունամիի վտանգի քարտեզագրումը նախ պահանջում է ցունամիգեն Երկրաշարժերի ներկայացուցչական սցենարների և, հնարավոր է, ծայրահեղ սցենարների նույնականացում (Colon et al., 2023): Այսպիսով, անհրաժեշտ է որոշակի աստիճանի իմացություն՝ ենթադրյալ սեյսմիկ տարածքների մորֆոտեկտոնիկայի վերաբերյալ: Ծայրահեղ սցենարը՝ ցունամիի ամենաբարձր սկզբնական ալիքի բարձրությամբ և հոսանքով, պարտադիր չէ, որ առաջացնի ցունամիի ամենաբարձր ափամերձ ազդեցություն (Colon et al., 2023): Ընդհանրապես, ալիքի ուղղորդվածությունը՝ ալիքի ուժեղացման կարևորագույն գործոնը, հաճախ (ոչ միշտ) նույնական է աղբյուրների տարբեր սցենարների համար, քանի որ դրանք նախատեսված են դիտարկվող տարածքի նույն մորֆոտեկտոնիկայի և սեյսմիկության համար: Այնուամենայնիվ, հնարավոր է, որ Երկրաշարժի ցածր մագնիտուդով ցունամիի ալիքի հաճախականության կոնտենտը «պայթուցիկ» ռեզոնանս առաջացնի: Օրինակ, ըստ Իուուալալեն և ուր.-ի (Ioualalen et al., 2017), ռեզոնանսները (բաց ծովում)

կարող են հայտնվել երկրաշարժերի մագնիտուդների շատ հազվադեպ պատուհանների համար, որոնք ներկայացնում են ցունամիների ուժեղացման հիմնական գործընթացները (Colon et al., 2023):

Պետք է հաշվի առնել, որ այս ուսումնասիրության մեջ դիտարկվող օբյեկտը սահմանափակ տիրուպթով և շատ ավելի փոքր խորություն ունեցող լիճ է:

Այսպիսով, քանի որ բնական ռիսկի վերլուծությունը ինքնին բաղկացած է վտանգի և բնակչության ու ենթակառուցվածքների խոցելիության բացահայտումից, Սևանա լճի ցունամիի քարտեզագրումը նպատակ ունի բացահայտել վտանգի ազդեցության տակ գտնվող տարածքները՝ համաձայն հեղեղման ռիսկի, որը կարող է առաջանալ:

Վերջապես, Սևանա լճում ցունամիի վտանգի հասկացությանը մոտենալու համար մենք իրականացրել ենք ցունամիի ամբողջական քարտեզագրում հիպոթետիկ երկու սեյսմիկ սցենարների համար՝ հաշվարկելով այլքի առավելագույն բարձրությունը (Z_{\max}) Սևանա լճի ողջ ափագծի երկայնքով՝ 77մ, 25մ և 5.14մ ճգրտության լուծափերով (Avagyan et al., 2024):

4.4.1. Սեյսմիկ սցենարներ

Ցունամիի առաջացման սկզբնական փուլի մոդելավորումը սերտորեն կապված է երկրաշարժի մեխանիզմների ուսումնասիրությունների հետ: Հետևաբար, Սևանա լճի ավազանում գրանցված բարձր մագնիտուդով հայտնի երկրաշարժերի բացակայության պատճառով, դիտարկել ենք վերը նշված երկու հիպոթետիկ երկրաշարժերի սցենարները ՓՍՍԽ-ի երկու ստորջրյա հատվածների ակտիվացման դեպքում:

Այսպիսով, առավելագույն երկրաշարժերի գնահատում իրականացնելու համար մենք մշակել ենք սեյսմիկ սցենարներ՝ հիմնվելով տեղական սեյսմիկության, մորֆոտեկտոնիկայի և մասշտաբային վերջին օրենքների վրա՝ օգտագործելով հետևյալ մոտեցումները.

1. Վանաձոր-Արտանիշ սեզմենտի հարավային հարվածի համար կիրառվող մոդեցում՝

- հատկապես կարևոր է ընդգծել, որ նկատի ունենալով ~2մ ուղղահայաց տեղաշարժը (հայտնաբերված պալեոսեյսմաքանական ուսումնասիրություններով՝ Ծովագյուղ գյուղի մոտ (Avagyan A. et al., in print)) և ածանցված պարամետրերը, առաջին հերթին կատարվել է հետադարձ վերլուծություն. իրականացվել է հիպոթետիկ երկրաշարժի ճշգրիտ ուժգնության որոշում՝ օգտագործելով Էմպիրիկ մասշտաբային օրենքները (Aki, 1966; Tingbaijam et al., 2017): Վանաձոր-Արտանիշ սեզմենտի հարավային ստորջրյա հատվածի համար մենք ստացել ենք Mw 6.9՝ որպես վերնետք խզվածք, ինչն էլ Հայաստանի երկրաշարժերի կատալոգի (2023) համաձայն, համահունչ է << տարածքում գրանցված ամենամեծ՝ 1988թ.-ի Սպիտակի Mw 6.9 ուժգնությամբ երկրաշարժին (Avagyan et al., 2024):

- Ավելի մեծ ուժգնությամբ պալեոերկրաշարժեր նախորդիվ գնահատվել են (Philip et al., 2001) Վանաձոր-Արտանիշ սեզմենտի ողջ երկարության համար՝ $Mw>7$, ըստ Wells and Coppersmith-ի (1994), սակայն լճային ցունամիի մոդելավորման համար հիմք է ընդունվել Mw 6.9 հաշվարկված արժեքը, առավել ևս, որ այն ունի ավելի բարձր հավանականություն:

Դիտարկումների հիման վրա Վանաձոր-Արտանիշ սեզմենտի այս հատվածի կինեմատիկան հիմնականում ներառում է վերնետքային խզվածքային կարևոր բաղադրիչ:

2. Ձկնագեղ-Խոնարհասար սեզմենտի համար կիրառվող մոդելում

- Նույն ածանցման սկզբունքները (Aki, 1966; Tingbaijam et al., 2017) կիրառվել են Ձկնագետ-Խոնարհասար սեզմենտի դեպքում՝ որպես կողաշարժ խզվածք: Մենք ստացել ենք Mw 7.5, որը լիովին համահունչ է ավելի վաղ Ֆիլիպ և ուր.-ի (Philip et al., 2001) և Կարախանյան և ուր.-ի (Karakhanyan et al., 2016) կողմից ստացված արդյունքներին: Սեյսմիկ սցենարների համաձայն լավագույն համապատասխան լուծումները տրամաչափել են որպես խզվածքից բխող պարամետրեր՝ ներկայացված Աղյուսակ 3-ում:

(1) Սցենար 1-ի համար ~2մ ուղղահայաց տեղաշարժը որպես վերնետք խզվածք (հայտնաբերված պալեոսեյսմաքանական ուսումնասիրություններով՝ Ծովագյուղ գյուղի մոտ (Avagyan A. et al., in print)), կիրառվել է Վանաձոր-Արտանիշ սեզմենտի

հարավային հատվածի համար՝ 300° N տարածմամբ, 80° սահքի և 89° N անկման անկյուններով, ~35կմ երկարությամբ և ~22կմ լայնությամբ (խզման հարթությունում): Սա համապատասխանում է Mw 6.9 մագնիտուդի արժեքին՝ համաձայն երկրաշարժերի էմպիրիկ վերջին օրենքների (Tingbaijam et al., 2017), խզվածքի գոտում սեյսմիկ իրադարձության կենտրոնի համապատասխան տեղադիրքով: Վերջապես, ստացված առավելագույն սահքի արժեքը՝ 1.1մ, համապատասխանում է ~Mw 6.9 արժեքին (Aki, 1966): Այսպիսով, քանի որ խզվածքի երկարությունն և լայնությունը պետք է հնարավորինս տրամաչափվեն մասշտաբային օրենքներով, համեմատած սահքի արժեքի հետ, որն ունի անորոշության ավելի մեծ պատուհան (Colon et al., 2023), ապա հաշվի առնելով խզվածքի 22կմ լայնությունն ու 89° N անկումը (գրեթե ուղղաձիգ), երկրաշարժի կենտրոնի խորության համար որոշվել է 10կմ-ը (աղյ. 3):

Աղյուսակ 3. Ցունամիկ սեյսմիկ սցենարներ (Avagyan et al., 2024)

Mw 6.9 և Mw 7.5 մագնիտուդների հիպոթետիկ սեյսմիկ սցենարներ՝ ցունամիկ մոդելների գործարկման համար օգտագործված խզվածքի պարամետրերով: (x_o, y_o) երկրաշարժի կենտրոնի տեղադիրքը, d-ն երկրաշարժի խորությունը, L-ը և W-ն խզվածքի երկարությունն ու լայնությունը, Δ-ն առավելագույն սահքի չափը (կենտրոնում), Mw-ն ածանցված մագնիտուդը, δ-ն խզման անկման անկյունը, φ-ն խզվածքի տարածման անկյունը, ηρը հաշվում է ժամանակի ուղղությամբ, λ-ն խզման անկյունը, ηρը հաշվում է խզման տարածման անկյունից՝ ժամանակի ուղղությամբ, τ_{in}-ը և τ_{ax}-ը տարածքի առավելագույն իջեցում և բարձրացումն են, որոնք ստացվել են Օկադայի մոդելին համապատասխան (Okada, 1985):

PPSF segments	Mecha- nism	d (km)	L (km)	W (km)	Δ (m)	Mw	δ (°)	φ (°)	λ (°)	x _o , y _o	min, max (m)
Scenario 1											
Vanadzor- Artanishsector	Reverse	10	35	22	1.1	6.9	N 89	N 300	80	40.568 45.128	-1.09, 1.11
Scenario 2											
Dzknaget- Khonarhasar	strike- slip	15	146	26	1.7	7.5	N 88	N 130	135	40.369 45.359	-0.46, 0.49

(2) Համապատասխանաբար, ածանցման նույն սկզբունքները (Tingbaijam et al., 2017) կիրառվել են Զկնագետ-Խոնարհասար սեզմենտի համար, որպես կողաշարժ, խզվածքի համապատասխան 130° N տարածման, 135° սահքի և 88° N անկման անկյուններով, ~146կմ երկարությամբ, ~26կմ լայնությամբ և 15կմ երկրաշարժի կենտրոնի խորությամբ և դրանց համապատասխան ~1.7մ առավելագույն սահքով, որն էլ իր հերթին համապատասխանում է Mw 7.5 արժեքին (Aki, 1966) (աղյ. 3) (Avagyan et al., 2024):

4.5. Ցունամիի թվային մոդելավորում


4.5.1. Հաշվարկման գործընթացը

(աշխատանքի սույն հատվածի թվային մոդելավորումներն իրականացվել են Ֆրանսիայի «Գեոազուր» լաբորատորիայի դոկտոր Մանսուր Իռուալալենի և Սիրել Կոլոնի համարեկավարությամբ)

Ցունամիի ածանցված սցենարները մոդելավորվել են COMCOT մոդելի միջոցով (Cornell multi-grid; Liu et al., 1995; Wang and Power, 2011): Ցունամիի մոդելավորման այս փաթեթը մշակվել է՝ ուսումնասիրելու ցունամիի ողջ «կյանքի» տևողությունը՝ ներառյալ առաջացումը, տարածումը, վազքը և հեղեղումը (Հավելված 4-ում ներկայացված է վերոնշյալ սցենարների մոդելավորման ողջ ծրագրային կոդը): Ներդրված մայր-դուստր ցանցերը կառուցվել են 5-ի և 3-ի հարաբերակցությամբ՝ երեք հաջորդական ցանցի լուծումների միջև: Ավելի կոպիտ մայր ցանցը՝ G_1-ը, ունի 77մ լուծելիություն, դուստր G_2A և G_2B ցանցերը՝ 25մ, իսկ G_2A ցանցն ինքնին ծառայում է որպես մայր ցանց՝ 5.14մ լուծաչափով՝ 8 ենթացանցի համար (G_3A-G_3H), նկարագրելով ամբողջ Փոքր Սևանը (նկ. 47) (Avagyan et al., 2024):

Քանի որ ենթակառուցվածքները հիմնականում բաշխված են Փոքր Սևանի ափին, այսինքն՝ G_2A ցանցում, հետևաբար G_2B ցանցը չի նկարագրում ավելի փոքր ենթացանցերով: COMCOT-ն աշխատում է գծային օրինաչափությամբ ավելի կոպիտ G_1 ցանցում, մինչդեռ ոչ գծային կոնվեկտիվ պայմանները մշակվում են ամենուր՝ հաշվի առնելով հոսանքների ոչ գծային վերաբաշխումը և այդպիսով նվազագույնի


հասցնելով սխալները: Շիման ցրումը պարամետրացված է 0.025 ՄԵՆԻՆԳԻ ընդհանուր գործակցով (Colon et al., 2023): Ներդրված ցանցերը կառուցվել են բաթիմետրիկ և տեղագրական տվյալների միջոցով: Բաթիմետրիկ քարտեզը կազմվել է Սևանա լճի 1մ-անոց բաթիմետրիկ քարտեզի հիման վրա՝ կազմված 1980-ականների վերջին, Լենինգրադի քարտեզագրության ինստիտուտի կողմից: Քարտեզը թվայնացվել է՝ ձեռք բերելու բարձրությունների թվային մոդելը (DEM), որը հնարավորություն է տալիս բացահայտելու լճի հատակին ՓՍՍԽ-ի երկրաչափության շատ մանրամասներ: Ավամերձ հատվածի տեղագրությունը կազմվել է 1:10.000 մասշտաբի թվայնացված քարտեզով (ԵԳԻ քարտեզագրական ֆոնդ), լճի ափագիծը գծվել է Google Earth արբանյակային նկարին համապատասխան՝ ընդամենը մի քանի մետրի ճշտությամբ, իսկ հիմնական տիրույթի սահմանը կազմվել է 90մ լուծաչափի SRTM (Shuttle Radar Topography Mission) տվյալների միջոցով (Avagyan et al., 2024):



Նկար 47. Հաշվարկային ներդրված տիրույթներ (առ. 4) (Avagyan et al., 2024): Ափագիծը գծված է սպիտակ գույնով, բաթիմետրիան և տեղագրությունը տե՛ս հետին պլանում

4.5.2. Երկրակեղևի դեֆորմացիա և սկզբնական մակերեսային ալիքներ

Մա 6.9 երկրաշարժի սցենարի համաձայն (1), սկզբնական ալիքներն ուղղված են դեպի Սևանա լճի հյուսիսային և հարավային մասերը միաժամանակ (նկ. 48a):



Նկար 48. а. Դեֆորմացիայի հաշվարկային ներդիր տիրույթ (աղյ. 4)` Mw 6.9 երկրաշարժի սցենար 1-ի համար (աղյ. 3) (Avagyan et al., 2024): Ալիքների գագաթները (կո-սեյսմիկ վերելք) ներկայացված են կարմիր գծերով, իսկ ալիքների հիմքերը (իջեցում՝ կապույտով (0.1մ իզոուրվագիծ): Բաթիմետրիան և տեղագրությունը տե՛ս հետին պլանում: Երկրաշարժի կենտրոնները նշված են սպիտակ աստղանիշով: **բ.** նույնը՝ Mw 7.5-ով 2-րդ սցենարի համար

Ակնկալվում է, որ հյուսիսային մասը (Փոքր Սևան) պետք է ենթարկվի ավելի մեծ ազդեցության, քան հարավայինը (Մեծ Սևան), քանի որ վերջինս գտնվում է դեֆորմացիայի գոտուց դուրս, իսկ լճի հարավային մասի առավելագույն խորությունը մոտ 30մ է (Avagyan et al., 2024):

Լճի հյուսիսարևելյան և հյուսիսարևմտյան ափերը ստանում են ալիքներ, որոնք գալիս են ավելի թույլ սկզբնական առավելագույն ամպլիտուդներով տարածքից և հասնում են իրենց վերջնական առավելագույնին: Լիճը հյուսիսային մասում շատ ավելի խորն է՝ առավելագույնը ~80մ:


Աղյուսակ 4. Ներդրված հաշվարկային ցանցերի մանրամասները (նկ. 47) (Avagyan et al., 2024)
 (X_{min}, Y_{min}) և (X_{max}, Y_{max}) յուրաքանչյուր ցանցի SO և NE անկյունների դիրքերն են. dx -ը և dy -ը ցանցի երկայնական և լայնական լուծումներն են. Nx -ը և Ny -ը երկու հորիզոնական ուղղություններով հանգույցների քանակն է: Z_{max} -ը սիմուլացված ցունամիի առավելագույն բարձրությունն է 5.14մ-ցանցում՝ Mw 6.9 սցենարի համար (1) և 25 մ-ցանցում՝ Mw 7.5 սցենարի համար (2):

Grids	X_{min} (°W)	X_{max} (°W)	Y_{min} (°N)	Y_{max} (°N)	$dx = dy$	Nx	Ny	Zmax (in m)	
								Mw 6.9 scenario 1	Mw 7.5 scenario 2
G_1	44.9109	45.7587	40.1103	40.6485	0.0009	943	599	2.56	2.42
G_2A	44.925	45.4884	40.398	40.6392	0.0003	1879	805	3.26	2.45
G_2B	45.1032	45.7413	40.1289	40.4106	0.0003	2128.00	940.00	0.55	2.35
G_3A	45.09774	45.22644	40.40124	40.46814	0.00006	2146.00	1116.00	4.07	-
G_3B	45.01704	45.11304	40.45614	40.52334	0.00006	1601.00	1121.00	3.87	-
G_3C	44.93364	45.02784	44.93364	40.56894	0.00006	1571.00	1056.00	3.05	-
G_3D	44.95884	45.04884	40.56024	40.63284	0.00006	1501.00	1211.00	3.28	-
G_3E	45.03864	45.15744	40.55874	40.61484	0.00006	1981.00	936.00	1.82	-
G_3F	45.14064	45.25044	40.50144	40.57224	0.00006	1831.00	1181.00	1.86	-
G_3G	45.23994	45.33984	40.43394	40.50714	0.00006	1666.00	1221.00	0.83	-
G_3H	45.32214	45.44214	40.43064	40.49994	0.00006	2001.00	1156.00	0.11	-

Սցենար 2-ի դեպքում (Mw 7.5) սկզբնական ալիքները տարածվում են թե՛ Փոքր Սևանում, և թե՛ Մեծ Սևանում, քանի որ խզվածքն անցնում է Սևանա լճի գրեթե կենտրոնական մասով և, համապատասխանաբար, ավելի թույլ սկզբնական առավելագույն ամպլիտուդներով տարածքից եկող ալիքները լճի հյուսիսարևմտյան ափերին հասնում են իրենց առավելագույնին (նկ. 48b): Երկու սցենարների համար Z_{max} արժեքները ցուցադրվում են Աղյուսակ 4-ում և ներկայացվում են ստորև:

Սցենար 1.

Համաձայն 1-ին սցենարի՝ լճի հյուսիսարևելյան հատվածը ենթարկվում է տեկտոնական վերելքի: Արդյունքում 1մ բարձրությամբ ալիքները տարածվում են նախ Փոքր Սևանի հյուսիսային ափով: Քանի որ դեֆորմացիան զարգանում է ափին շատ մոտ, այստեղ ալիքների ուժեղացում տեղի չի ունենում՝ սահմանափակ տիրույթի պատճառով: Սակայն Փոքր Սևանի հարավային հատվածում իրավիճակն այլ է:




Նկար 49. Ցույնամիտի առավելագույն բարձրությունները (Z_{\max} , մ-ով)՝ մոդելավորված M_w 6.9-ով 1-ին սցենարի համար (աղյ. 3), որը ներկայացված է G_{2A} և G_{2B} մայր ցանցերով (աղյ. 4) (Avagyan et al., 2024): Տեղագրությունը պատկերված է հետին պլանում: Բարժիմետրիան նշված է սպիտակ գույնով: Ընտրվել է 0-2մ միջակայքի գունային սանդղակ՝ ընդգծելու այն հատվածները, որտեղ ալիքը հասել է 2մ և ավելի բարձրության

Լճի հյուսիսային մասի վերելքի պատճառով ալիքներն ամբողջությամբ ուղղվում են դեպի հարավային հատված (G_{3A} , G_{3B} , G_{3C} ենթացանցեր՝ G_{2A} ցանցում) և հասնում են առավելագույն 4.07մ բարձրության՝ G_{3A} ենթացանցում: Սա հստակ պատկերված է նկ. 49 և նկ. 50a-ում (աղյ. 4), որտեղ քարտեզի գունային սանդղակն ընտրվել է 0-2մ միջակայքում՝ ընդգծելու այն տարածքները, որտեղ ալիքը հասել է 2մ և ավելի բարձրության (Avagyan et al., 2024):

G_{3D} ենթացանցի արևմտյան մասում դիտվել է 3.28մ բարձրությամբ ալիք, որի ազդեցությունը վերագրվում է լճի խորության և ծանծաղ ափի հարաբերակցությանը:


G_{3D} ենթացանցի հարավային և G_{3C} ենթացանցի հյուսիսային մասում դիտվում է ալիքների կենտրոնացում (*focusing*)՝ ստորջրյա տեղագրական առանձնահատկությունների և ափի մորֆոլոգիայի պատճառով (նկ. 50b, տե՛ս «F»):



Նկար 50. а. Ցունամիի առավելագույն բարձրությունների (Zmax, մ-ով) ընդլայնական պատկեր (Avagyan et al., 2024) G_2A մայր ցանցի G_3A-G_3H ենթացանցերում (աղյ. 4)⁴ ըստ նկ. 47-ի: Երկրաշարժի դեֆորմացիայից հետո ափագիծը գծված է կապույտ գույնով: б. Ալիքների կենտրոնացման տարածքը ցույց է տրված (F)-ով, ապակենտրոնացման տարածքը՝ (D)-ով: Ընտրվել է 0-2մ միջակայքի գունային սանդղակ՝ ընդգծելու այն տարածքները, որտեղ ալիքը հասել է 2մ և ավելի բարձրության (ալիքի առավելագույն բարձրությունը 4.07մ է G_3A ենթացանցում, աղյ. 4)

Ստորջրյա տեղագրական առանձնահատկությունները, ինչպիսիք են կտրուկ փոփոխությունները, հանգեցնում են ցունամիի ալիքների կենտրոնացմանը և ալիքի բարձրության մեծացմանը, ափին մոտենալու պահին: Սա ալիքների կենտրոնացման տարածքն է, որը ցույց է տրված նկ. 50b-ում «F»-ով: Այս երևույթը, ընդհանուր առմամբ, կարող է հանգեցնել տեղայնացված տարածքների, որոնք զգալու են ավելի բարձր ալիքների ամպիտուլներ և կրելու ավելի մեծ վնաս՝ համեմատած հարակից տարածքների հետ: Եվ հակառակը, G_3C ենթացանցերի արևմտյան մասում նկատվում է ալիքի ապակենտրոնացում (defocusing) (նկ. 50b, տե՛ս «D») (Avagyan et al., 2024):

Լճային ցունամիի մոդելավորման համար ընտրվել է 5 ժամ տևողություն: Նկար 51-ը ցույց է տալիս Սցենար 1-ի մոդելավորման ընդհանուր պատկերը, համապատասխանաբար, 0 րոպե, 7 րոպե, 15 րոպե և 34 րոպե հետո:




Նկար 51. Ցունամիի ալիքների ընդհանուր վարքագծի ժամանակային կախումը Mw 6.9-ով 1-ին սեյսմիկ սցենարի դեպքում՝ (աղյ. 3) (Avagyan et al., 2024)

Սցենար 1-ի (Mw 6.9) մոդելի համաձայն երկրաշարժի դեֆորմացիան հստակ արտահայտվում է Սևանա լճի հյուսիսարևելյան մասի վերելքով (նկ. 51): Դեֆորմացիայից 1 րոպե անց ալիքը հասնում է Փոքր Սևանի հյուսիսարևելյան ափերին: 7-րդ րոպեին ալիքի գագաթը հասնում է Փոքր Սևանի արևմտյան ափերին՝ անցնելով ~10կմ և 15-րդ րոպեին հեղեղում ամբողջ ափը: Այնուհետև ալիքները սկսում

Են տարածվել Մեծ Սևանում, որտեղ աստիճանաբար նվազում են այնպես, որ գրեթե 1.5-2 ժամ հետո լճում ալիքների տարածումը մոտենում է կայունացման (Avagyan et al., 2024):

Սցենար 2.

Սցենար 2-ում, նույնիսկ 7.5 մագնիտուդի դեպքում, չկան բարձր ալիքներ, որը սովորաբար բնորոշ է կողաշարժային դեֆորմացիաներին: Այս սցենարում նույնպես, ալիքի 2.45մ առավելագույն բարձրությունը գրանցվել է G_2A մայր ցանցի G_3A ենթացանցում, ինչպես Mw 6.9-ով 1-ին սցենարում (նկ. 52, աղյ. 3): Կողաշարժային կինեմատիկա ունեցող խզվածքները ցունամի չեն առաջացնում այն պարզ պատճառով, որ, ընդհանուր առմամբ, խզվածքի շարժման ներսում ուղղահայաց տեղաշարժ չի դիտվում, և միայն կողային շարժումը չի հանգեցնում ջրի անմիջական ուղղաձիգ տեղաշարժի (Avagyan et al., 2024):



Նկար 52. Ցունամի առավելագույն բարձրությունները (Zmax, մ-ով)` մոռելավորված Mw 7.5-ով 2-րդ սցենարի համար (աղյ. 3) (Avagyan et al., 2024), որը ներկայացված է G_2A և G_2B մայր ցանցերով (աղյ. 4): Տեղագրությունը պատկերված է հետին պլանում: Բաթիմետրիան նշված է սպիտակ գույնով

Այսպիսով, Օկադայի մեթոդի կիրառմամբ (Okada, 1985), Սևանա լճում երկրաշարժերով հարուցված լճային ցունամիների ուսումնասիրությունն առաջին փորձն է՝ պայմանավորված ՓՍՍԽ-ի ստորգրյա սեզմենտների ակտիվացմամբ:

Գտնվելով Արաբա-Եվրասիական մայրցամաքային բախման գոտում՝ Կովկասի տարածաշրջանի ամենամեծ քաղցրահամ Սևանա լճի ավազանը բնութագրվում է մի շարք երկրաբանական վտանգներով, որոնք կարող են առաջացնել փոխկապակցված հրահրման իրադարձություններ: Ի թիվս այլ վտանգների, լճային ցունամիի վտանգը մնացել էր դեռ չուսումնասիրված:

Այսպիսով, ՓՍՍԽ սեզմենտների համար հաշվարկվել է երկրաշարժի երկու հիպոթետիկ սցենար՝ Վանաձոր-Արտանիշ սեզմենտի հարավային հատվածի համար՝ Mw 6.9, որպես վերնետքային խզվածք և Mw 7.5՝ Ձկնագետ-Խոնարհասարի համար՝ որպես կողաշարժ: Այս առաջարկվող սեյսմիկ սցենարներում տրամաչափվել են լավագույն լուծումները, որպես խզվածքներից ածանցված պարամետրեր: Տարածքում գրանցված խոշոր երկրաշարժերի բացակայության պատճառով, ենելով խզվածքի պարամետրերից, առաջին հերթին կատարվել է հետադարձ վերլուծություն՝ որոշելու երկրաշարժերի ուժգնությունը և ապա նոր միայն մշակվել են համապատասխան սցենարներ՝ հետագա լճային ցունամիների մոդելավորման համար:

Ի վերջո, Սևանա լճում ցունամիի վտանգի համար ստեղծվել են ցունամիի ալիքների առավելագույն բարձրությունների քարտեզներ: Փոքր Սևանը՝ ըստ Վանաձոր-Արտանիշ սեզմենտի հարավային հատվածի Mw 6.9 սեյսմիկ սցենարի, ճանաչվել է որպես ամենախոցելի գոտի՝ գնահատված 4.07մ ալիքի առավելագույն բարձրությամբ (Zmax):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, սույն աշխատանքն իրենից ներկայացնում է Սևանա լճի ավազանում երկրաբանական վտանգների ուսումնասիրմանն ու դրանց հնարավոր փոխազդեցության բացահայտմանն ուղղված հետազոտություն, որը հատկապես ընդգծում է տարածքի երիտասարդ ակտիվ խզվածքների վտանգառաջացման ներուժը՝ այն ներկայացնելով արդի գիտատեխնիկական առաջընթացին համապատասխան պատճառահետևանքային հավանական մոդելներով:

Շրջակա միջավայրի վրա ակտիվ խզվածքների ազդեցությունների և դրանց մերձմակերևութային դրսնորումների ուսումնասիրումը կարևոր և արդի երկրաբանական խնդիր ու նպատակ է: Երկրաշարժամետ գոտիներում մակերևութային խախտումները տեղանքի երկրաբանական անցյալի գործընթացների կինեմատիկայի և դինամիկայի մասին վկայող տեղեկատվության կրիչներ են, որոնց վերլուծությունը ցույց է տալիս առավել բարձր բնական գումարային վտանգի մակարդակ, քան մեկ առանձին երկրաբանական վտանգի դիտարկման դեպքում:

